Upsalaeg. Ut. u. Pfingst.

ԳԵՂԱՍ ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼԵՍ

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ ԴՈՒՐԵԱՆ

491.99.02
Դ

ԸՆԹԱՑՔ
Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

A 13838

Դ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ۲ رجب ۳۱۱ و ۲۸ كانون اول ۳۰۹
تاریخلی و ۷۳۱ نومرولی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

ՀԱՅՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ
Զագուանգիլար., Թիւ 20.

1894

Սանդրամ Սարգսյան
Բոսֆոր Մեր Սիրելիներդ
1907 Դեկտ.

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինճանքլար Եօղուսու, Ամերիգան խան, Թիւ 27

ԱԶԴ

Շնորհակալութեամբ կը յայտարարեմք թէ՝ Գեր. Տ. Եղիշէ Ծ. Վ. Դուրեան իւր հեղինակած սոյն ԸՆԹԱՑՔ Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ անուն դասագրքի Դ. տպագրութեան իրաւունքը մեզ յանձնած լինելով, մենք եւս փութացինք 'ի հրապարակ հանել զայն՝ խնամով եւ մաքուր տպագրութեամբ։

Աւելորդ է ասել գնահատութիւն մի ընել սոյն դասագրքի օգտակարութեան ասիենանին վերայ, ըստ որում սուղ ժամանակի մէջ սորա հազարաւոր օրինակաց սպառումէն եւ գործոյն կրկին տպագրութեանց արժանանալէն դիւրին է հետեւցնել թէ այժմէն ապահովեալ է սորա ընդունելութիւնն եւս յԱզգ. վարժարանս՝ իբրեւ գրաբար լեզուի առաջին դասագիրք։

Գ. Գ.

Արշակայ Մեծ Արքայի

ԸՆԹԱՑՔ

Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ

I

ԹՂԵՆԻՆ ԱՆՊՏՈՒՂ

Խնդրել, ինդրել
Հատանել, կտրել
Ամ, տարի
Յորմէհետէ, որչափ 'է վեր
Ցամէ եւս, տարիէ մը
Խափանել, արգիլել
Բրել, հորել
Արկանել աղբ, աղբ նետել

Թղենի մի էր ուրումն տնկեալ (տնկած էր մէկը) յայգւոյ իւրում, և եկն խնդրել պտուղ 'ի նմանէ և ոչ եգիտ։ Ասէ ցայգեգործն. Ահա երեւ տարի են՝ (¹) յորմէ հետէ գամ խնդրել պտուղ 'ի թղենւոյդ՝ և ոչ գտանեմ. արդ կտրեա զա, ընդէ՞ր և զերկիր խոչնէ (²)։ Նա պատասխանի ետ և ասէ. Տէր, թող

(¹) Տէր բայիւ՝ որ բային գործողութեան տէրն է՝ ուղղական հոլով կը դրուի երբ բայը դիմաւոր ըլլայ։ Օր. Ահա երեւ տարի են խօսքին մէջ տէր բային է տարի բառը։ Պէտք է որ տէր բային թուով ու դէմքով համաձայն ըլլայ իւր բային հետ եթէ պարզ է՝ այսինքն՝ մէկ միայն։

(²) Այն բառերը որ խօսքի մը ամբողջութեանը կը ծառայեն ինդիր կ'ըսուին, եւ երկու տեսակի կը բաժնուին անուն և բառ-բեռն ինդիր։

Սեռի խնդիր կ'ըսուի այն հայցական հոլովը՝ որ թէ՛ որոշեալ ըլլայ եւ թէ անորոշ՝ այսինքն թէ՛ հով եւ թէ առանց հի՝ ներգործական բային տէր բայիին բրածը կը ցուցնէ։ Օր. Արդ կտրեա զա, ընդէ՞ր և զերկիր խոչնէ. հոս սեռի խնդիր են զա եւ զերկիր բառերը, վասն զի այգեգործին կտրելիքը, եւ ծառոյն խափանածը գործողութեան առարկայ եղած են։ Իսկ բառ-բեռն ինդիր ուղղականէն զատ ամէն հոլովով կ'ըլլայ, որոնք գործողութեան մը պարագայներն կը ցուցնեն։

զդա այս ամ ևս, մինչև չուրջ զդովաւ բրեցից և արկից աղբ, թերեւս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ ևս հատցես զդա։ Ղ.-Ի. ԺԳ. 6—10

2

ՆԱԽԱՆՁ ՏԱՆ ՏԵԱՌՆ

Վաճառել, Ծախել
Արջառ, Եզն ու կով
Լումայափոխ, Ոսկի փոխող
Հատավաճառ, Լումայափոխ
Վաճառ, Ապրանք
Տուն վաճառի, Շինոյ

Եւ եթէ Թէոնս (1) 'ի տաճարին զի վաճառէին զարջառս և զոչխարս և զաղաւնիս. և զլումայափոխսն՝ որ նստէին։ Եւ արար խարազան չուանեայ, և եհան զամենեսին 'ի տաճարէն, զոչխարսն և զարջառս. և զդրամս հատաւաճառացն ցրուեաց (3) և ըզսեղանսն կործանեաց. եւ որ (անոնք որ) զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ ասդ (4), և մի՛ առնէք զտուն Հօր իմոյ տուն վաճառի։ Ապա յիշեցին աշակերտքն նորա՝ թէ գրեալ է. Նախանձ տան քո կերիցէ զիս։

Յովհ. Բ. 14—18

(1) Տես 5 էջ 1 կանոն։ (2) Տես 5 էջ 2 կանոն։

(3) Ցրուեցուցէալ կ'ըսուի այն սեռական հոլովը՝ որ գոյականի մը որո՛ւն ըլլալը կը ցուցնէ, եւ ընդհանրապէս անկէ եսեւ կը դրուի։ Օր. Զդրամս հատաւաճառացն ցրուեաց։ Որոնց պդինձները ցրուեց — հատավաճառներուն. ուստի հատաւաճառացն յատկացուցիչ է, վասն զի պդինձներուն որո՛ւն ըլլալը ցուցուց։ Ցատկացուցչին վերաբերող բառը յատկացեալ կը կոչուի, ուրեմն վերի խօսքին մէջ յատկացեալն է զդրամս։

(4) Առէք, այդ, ասդ բառերը երբոր բայի կը վերաբերին մակբայ կ'ըլլան եւ կը նշանակեն առէք, այդ, ասդ։ Իսկ ածական են երբ եզակի կամ յոգնակի բացառական հոլովի մը հետ գործածուին՝ իբրեւ

Ցայսմանէ կամ յայսցանէ (ասդի)
Ցայդմանէ կամ յայդցանէ (այդի)
Ցայնմանէ կամ յայնցանէ (անդի)

3

ԱՌԱՋԻՆՆ Ի ՊԱՏՈՒԻՐԱՆՍ

Մատչիլ (մատուցեալ), մօտենալ	Լսել, մտիկ ընել
Դպիր, կրօնաւոր	Բարւոք, աղէկ
Գոլ, ըլլալ	Ոչ գոյ, չկայ

Մատուցեալ մի ոմն 'ի դպրացն՝(1) *ասէր Սաղուկեցւոց մինչ վիճէին. երբև եսես թէ բարւոք ետ նոցա Յիսուս զպատասխանին, եհարց ցնա և ասէ. Ո՞ր պատուիրան*(2) *է առաջին։ Եւ Յիսուս ասէ ցնա. Առաջին քան զամենայն (ամենէն առաջինը), լուր Իսրայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր մի է. և սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց, և յամենայն զօրութենէ քումմէ. այս է առաջին պատուիրան։ Եւ երկրորդն նման ոմն*(3)*. Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատուիրան*(4) *ոչ գոյ։*

Մարկ. ԺԲ. 28—32

---

(1) Թէ՛ որոշեալ բուական ածականմ եւ թէ՛ անորոշ ածականներն եսեւնուն բացառական հոլով բնութեան խնդիր կ'առնուն։

(2) Որ բառը երբ Տանկերէն (հարց) կը նշանակէ՝ անորոշ ածական մ'է, եւ պէտք չէ աշակերտը շփոթէ զայն որ յարաբերական դերանուան հետ։

(3) Խնդիր ունող կամ խնդրաւոր բառերն են 1. Բայերը՝ որ ամէն հոլովով խնդիր կրնան առնուլ. 2. Նախադրութիւնները՝ որ իրենց յատուկ եղած հոլովով խնդիր կ'առնուն. 3. Գոյականները՝ որոց առած սեռական խնդրոյն յատկացուցիչ կ'բսեմք. 4. Ածականները՝ որք իրենց նշանակութեան համեմատ խնդիր կը պահանջեն։ Օր. Նման ոմն. հոս նման ածականը տրական հոլովով առած է իւր խնդիրն. վասն զի եթէ հարցնեմ — որու նման. կը պատասխանեմ. ասոր նման (նման սմին), եւ միշտ որ՞ (+էդ՞) հարցման պատասխանող հոլովն վերջանոլով տրական է։

(4) Այլ բառը եթէ բայց նշանակէ՝ շաղկապ է. իսկ եթէ ուրիշ նշանակէ՝ ածական է։

4

ԱՌ ՏԻՍ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Տի, հասակ
Հանգոյն, նման
Առոյգ, կայտառ, կոբէ՞
Գարնային, գարուն
Վերակենցաղ, նորէն կեանք առնող
Ամի ամի, տարուէ տարէ
Զքնաղ, գեղեցիկ
Փախստեայ, գաղտնի, շտապ անցնող
Ոչ եւս դառնայ, ա՛լ չդառնար

+ Այո՛ հանգոյն
Առոյգդ հասակ
Է գարնայնոյն
Ո՛վ պատանեակ(¹) +
Այլ նա ծնանի
Վերակենցաղ
Ամի ամի
Նոր եւ զքնաղ.
Իսկ փախստեայ
Քոյդ մանկութիւն
Ոչ եւս դառնայ
Ի դէս 'է նոյն (²)։

(¹) Կարդա՛ այսպէս. Այո՛ ո՛վ պատանեակ, առոյգ հասակ քո հանգոյն է գարնայնոյ։ Վերի խօսքին մէջ հանգոյն ածականին գարնայնոյն վերջաւորով տրական խնդիրը հեռու դրուած է։

(²) Ածականը երբեմն գոյականին նախդիրը իւր վրայ կ'առնու թէ՛ յետադաս եւ թէ՛ նախադաս ըլլայ գոյականէն։ — Աւելորդ է դիտել տալ թէ այս խօսքին մէջ նախդիրն կրկնուած է թէ՛ գոյականին եւ թէ՛ ածականին վրայ։

5

ՊԱՏԱՆԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՊԱՀ

Ցաւիտենական, յաւէրժան պեռողջ
Ի մանկութենէ իմմէ, պղայ հաւ-
Զի՞, էնը՞ [ակէս

Ի՞նչ իւիք, էնչ բանով
Ինչք, ընչից, ստացուածք
Զկնի իմ, էմ եպէսէս

Եւ ահա մատուցեալ ոմն առ Յիսուս (1) ասէ. Վարդապետ բարի, զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանսն յաւիտենականս։ Եւ նա ասէ ցնա. զի՞ հարցանես զիս զբարւոյ (2), զի է բարի (3). եթէ կամիս 'ի կեանսն յաւիտենականս մտանել, պահեա զպատուիրանսն։ Ասէ ցնա. Զո՞րս (ո՞ր պատուիրանները)։ Ասէ ցնա Յիսուս. Զմի սպանանիցես՝ և մի շնար, և մի գողանար, և մի սուտ վկայեր, պատուեա զհայր քո և զմայր, և սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո։ Ասէ ցնա պատանին. Զայդ ամենայն պահեցի 'ի մանկութենէ իմմէ, արդ է՞ էր+ պակաս (4) իցեմ։ Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիս կատարեալ լինել, երթ վաճառեա զինչս քո և տուր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ։ Իբրեւ լուաւ պատանին զբանն, գնաց տրտմեալ, զի ունէր ստացուածս բազումս։

Մատթ. ԺԹ. 16—23

---

(1) Նախդրիւ տրականի կամ է ով անորոշ հայցականի համար է նախդրին տեղ — նախդիրը կը դրուի ընդհանրապէս երբ բառը ենչաւոր ըլլայ, ուստի չրսուիր հատուցեալ ոմն 'է Յիսուս. այլ միայն կրնանք ըսել, հատուցեալ ոմն է գեղէն յոյն 'է +ալ+ ոնդր, եւայլն. վասն զի գեղէ եւ +ալ+ բառերն ենչաւոր չեն։

(2) Առանց է ի բացառականի վրայ դրուած ը նախդիրն կը նեռանակէ հարց, վրայ եւայլն։

(3) Անաւասիկ նախադասութիւն մը՝ որ կը կազմուի էական բայէ մը՝ տէր բայիէ մը եւ տէր բայիին ինչ կամ ո՛վ ըլլալը ցուցնող ուղղական հոլով բառէ մը՝ որ սպրդեցեալ կ'ըսուի։ Մէ է բարի խօսքին մէջ ստորոգելին է՝ որ բարի տէրբայիին բանի ըլլալը կը ցուցնէ։ Եւ եթէ ըսեմ Դեռ է Աստուած, ստորոգելին է Դեռ որ Աստուած տէրբայիին ինչ ըլլալը կը ցուցնէ։

(4) Պակաս ածականը իւր խնդիրն զործական հոլով առնելով՝ էր՞ բային լրելեայն խնացուող է՝ տէրբայիին ստորոգելին եղած է։

6

ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱՒՈՐ

Ելանել (նխդ. տրկ. ով), երթալ
Յաղօթս կալ, աղօթք ընել
Մեկուսի, ոչ կողմ
Երկիցս, երկու անգամ

Տասանորդ, (ծնողաբար)
Ամբառնալ, վերցնել
Կոծել զկուրծս, կուրծքը ծեծել
Քաւել, սրբել (գողը)

Այր երկու ելին 'ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի և մին մաքսաւոր (1). *Փարիսեցին կայր մեկուսի, և զայս առանձինն աղօթս մատուցանէր. Աստուած իմ, գոհանամ ըստ* (2), *զի ոչ եմ ելբեր զայլս է հրդեհանք* (3), *զյափշտակողս և զանիրաւս և զշունս, կամ իբրեւ զայս մաքսաւոր. այլ պահեմ երկիցս 'ի շաբաթու, և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց։ Եւ մաքսաւորն կայր մեկուսի, և ոչ կամէր և ոչ զաչսն ընդ երկինս* (4) *ամբառնալ, այլ կոծէր զկուրծս իւր, և ասէր. Աստուած իմ, քաւեա զիս զմեղաւորս։ Ասեմ ձեզ, էջ սա արդարացեալ 'ի տուն իւր քան զնա* (5)։)

Ղուկաս. ԺԸ. 9—14

---

(1) Այս երկու նախադասութեանց մէջ էր բայր լռելեայն կ'իմացուի։

(2) Գոհանամ ըստ (շնորհակալ եմ քեզ)։ Գոհանամ բայը իւր խնդիրը ըստ առանց է ի բացառական կը պահանջէ։

(3) Ելբեր՝ նախադրութիւն է երբ հայցական խնդիր առնու եւ նշանակէ պես. ելբեր զայլս (ուրիշներու պէս). իսկ շաղկապ կամ մակբայ է երբոր նշանակած աստեն, եւ բայի հետ կը դրուի։ Ի հրդեհանք ի խնդրոյն համար կարդա (7 էջ 1 կանոն)։

(4) Ընդ նախադրութիւնը անորոշ հայցական խնդրով դրոշմուն կը նշանակէ. Ընդ երկինս ամբառնալ (դէպ յերկինս բարձրացնել)։

(5) Քան նախադրութիւնը ընդհանրապէս հայցական հոլով խնդիր կ'առնու եւ իրմէ առաջ կամ ետքը դրուած ածական բառի մը կը վերաբերի։ Օր. Էջ սա արդարացեալ 'ի տուն իւր քան զնա, խօսքին մէջ, քան զնա խնդիր է արդարացեալին (անկէ աւելի արդարացած)։

7

ԵՐԿՈՒ ԼՈՒՄԱՅԻ ԿՆՈՋՆ ԱՅՐՈՒՈՅ

Զիա՛րդ, ի՞նչպէս
Արկանել պղինձ, սպակ յիբէլ
Մեծատուն, հարուստ
Բազում ինչ, շատ բան
Լումայ, (սիկլ)

Նաքարակիա, երկու լումայ արժողը սպակ
Ամէն ասեմ, ճշմարիտ կ'ըսեմ
Դոյիւ չափ, ունեցածը ունեցածը
Կեանք, ինչ, սպասաւորութիւն

/ Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին (1), տեսանէր զիա՛րդ ժողովուրդն արկանէր պղինձ (2) 'ի գանձանակն. և բազում մեծատունք արկին բազում ինչ։/ Եկն այրի մի և արկ երկուս լումայս, որ է նաքարակիա մի։ Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտան իւր, ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ զի այրին այն տառապեալ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին 'ի գանձանակն (3)։ Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին, այլ նա 'ի չքաւորութենէ իւրմէ զամենայն ինչ՝ զոր ունէր, արկ գոյութիւն (4) զկեանս իւր։

Մարկ. ԺԲ. 41—44

---

(1) Ընդդէմ նախադրութիւնն սեռական հոլովով կը պահանջէ իւր խնդիրը։

(2) Անորոշ հայցականն՝ եզակիի մէջ մանաւանդ՝ ուղղականի յար եւ նման ըլլալով, պէտք չէ իրարու հետ շփոթել զանոնք, ուշ դնելով իւրաքանչիւրին վարած պաշտօնին. (Տես 5 էջ 2 կանոն)։

(3) Շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին 'ի գանձանակն։ Որ յարաբերական դերանունը հոս իրմէ յառաջ եկող զամենեսեանը կը յարաբերէ, եւ իւր այն յարաբերած բառը յարաբերեալ կը կոչուի։ Յարաբերեալը եթէ յոգնակի ըլլայ՝ յարաբերական դերանունն ալ յոգնակի կը դրուի։ Պէտք է գիտնալ նաեւ թէ՝ յարաբերական դերանուան եզակի ուղղականն ու հայցականը՝ իւր յոգնակի ուղղականին եւ հայցականին տեղ կրնայ գործածուիլ։

(4) Գոյութիւնն գործական հոլով խնդիր կը պահանջէ եւ միշտ իւր խնդրէն վերջը կը դրուի։ Օր. Մահու զոյութիւն (մեռնելու չափ կուուեցանք)։

8

ԳՈՀՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐՋ ՏԱՐԻՈՅ

Լրումն, լմնալը, վերջանալը
Է, էք, էից, աբաբած
Պասկ, ըրջան, (դարձոյ)

Տրիտուր, քոխարէն դրուած բան
Վսեմ, բարձր, շէն
Մինչ 'ի սպառ, մինչեւ վերջը

Դու, Տէ՛ր, դու ղայս ամ (1)
Ի լրումն հասուցեր,
Ըզքէն գոհանամ
Աստուած իմ եւ Տէր։
Քեզ էէց համայն
Պահպանին պէսակէ (2)
Տարոյ փաղցրանքեան (3)
Քեզ օրհնի պըսակ։
Այլ նոցէն (4) չետուր
Ճանաչել ըզքեզ,
Իսկ յինէն տրիտուր
Միայն սէր խընդրես։
Զըքնա՛ղ եւ վսեմ
Եւ ձրի տուրեւառ,
Ըզքեզ Տէր օրհնեմ
Այժմ եւ մինչ 'ի սպառ։

---

(1) Տես 8 էջ 2 կանոն։

(2) Տեսակէ էից (արարածոց տեսակներն) Տես 6 էջ 3 կանոն։

(3) Երբեմն ածականը յատկացուցչի ձեւով՝ այսինքն սեռական հոլովով կը դրուի իւր գոյականին հոլ. այդ ձեւով ածականի պաշտօն վարող բառերն ընդհանրապէս --քէն վերջաւորող գոյականներն են. այսպէս Տարոյ փաղցրանքէն կը թարգմանուի (քաղցր տարւոյ)։

(4) Հոս նոցէն դերանունը էէց բառին տեղ դրուած է՝ զայն նորէն չկրկնելու համար. վասն զի դերանուան պաշտօնն է ուրիշ բառի մը տեղ դրուիլ՝ զայն չը կրկնելու համար։

9

ԲԺՇԿԵԼ Ի ՇԱԲԱԹՈՒ

Անկեալ դնիլ, ընկոծ՝ հե՛ռանդ
Ողջ լինել, առողջանալ [պառկիլ
Ոչ զոք ունիմ, թէկը ղանիմ
Ցուզիլ, փակն ու վրայ ելլալ
Դանդաղիլ, կամաց շարժիլ

Մահիճք, ճաց, անկողին
Ցարեաւ (յառնել), ոտ ելնել
Շրջիլ, պտըտիլ
Խոյս տալ, փախչիլ
Ամբոխ, բազմութիւն

Եւ էր անդ այր մի՝ որոյ երեսուն և ութ ամ էր 'ի հիւանդութեան իւրում (որ երեսուն և ութ տարիէ հիւանդ էր). զնա իբրեւ տեսեալ Յիսուս՝ զի անկեալ դնէր, և գիտաց թէ բազում ժամանակք են այնուհետեւ, ասէ ցնա (1). Կամի՞ս ողջ լինել։ Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. և մինչ ես գանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ։ Ասէ ցնա Յիսուս. առ զմահիճս քո և գնա։ Եւ ողջացաւ այրն. և յարեաւ, առ զմահիճս իւր և շրջէր. և էր շաբաթ յաւուրն յայնմիկ։ Ասեն Հրեայքն ցբժշկեալն. Շաբաթ է, և ՚չ արժան էր առնուլ զմահիճս քո (2)։ Պատասխանի ետ նոցա և ասէ. Որ (3) բժշկեացն զիս, նա ասաց ցիս՝ ա՛ռ զմահիճս քո

---

(1) Ասէ՛, տա՛, հարցանէ՛ բայերն ըստ անգամ ց նախդրով անորոշ հայցական հոլով, եւ երբեմն վերջանոլով տրական բանարեն խնդիր կանունն։

(2) Երբ երկու նախադասութիւն զի կամ թէ շաղկապով կապուած ըլլան, կրնան այն շաղկապներն զանց առնուիլ. եւ երկրորդ նախադասութեան բայը անբերեալ փոխուելով, գերբայն տրական կը դրուի։ Օր. Ոչ էր արժան առնուլ զմահիճս քո. փոխանակ ըսելու՝ Ոչ էր արժան զի առնէր դու զմահիճս քո։

(3) Երբ որ յարաբերական դերանունը խօսքի մը սկիզբը դրուի՝ լռելեայն իր առջեւէն կ'ունենայ իւր յարաբերեալը, այսինքն այն՝ նա, կամ այնոքեան՝ նոքա։ Այսպէս եզակիի մէջ ով՝ որ, այն՝ որ, եւ յոգնակիի մէջ անոք՝ որ կը թարգմանուի. Օր. Որ սիրէ զխրատ, ըսել է (այն որ խրատը կը սիրէ). Որ գործեն զանօրէնութիւն (անոնք՝ որ անօրէնութիւն կը գործեն)։ Կրնանք այս պարագային մէջ երբ յայտնի դէմք չունի որ՝ իբրեւ միջակ անուն ճանչել զայն։

և գնա։ Հարցին գնա և ասեն. Ո՞վ է այրն՝ որ ասացն ցքեզ՝ ա՛ռ զմահիճս քո և շրջեաց։ Եւ բժշկեանն ոչ գիտէր թէ ո՞վ իցէ, քանզի Յիսուս խոյս եւ վասն ամբոխին 'ի տեղւոջէ անտի։ Յովհ. Ե. 5—14

10

ԿՈՒՍԱՆԵՔՆ ԻՄԱՍՏՈՒՆՔ ԵՒ ՅԻՄԱՐՔ

Կուսան, կոյս (աղջիկ)
Բառնալ, առնել (հեռը)
Յամել, ուշանալ
Նիրհել, մրափել
Ի քուն մտանել, քնանալ

Եղեւ բարբառ, ձայն լուաւեալ
Կազմել, պատրաստել
Շիջանիլ, մարել
Փակիլ, փակուիլ
Գիտել, ճանաչել

Նմանեցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին (¹) ընդ առաջ փեսային և հարսին։ Հինգն է նոցանէ յիմարք էին (²), եւ հինգն՝ իմաստունք։ Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս (³) ոչ բարձին. իսկ իմաստունքն առին և ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց։ Եւ 'ի յապել փեսային (⁴) նիրհեցին ամենեքեան և 'ի քուն մտին։ Եւ 'ի մէջ գիշերի եղեւ բարբառ. Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա։ Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և կազ-

(¹) Երբ Ա շաղկապով կապուած երկու բայ մի եւ նոյն տէրբային ունենան, կրնայ Ա շաղկապը զանց առնուիլ, եւ առաջին բայը անցեալ դերբայի փոխուիլ. այն ատեն տէրբային ութ-ով կը դրուի։ Օր. Որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսային եւ հարսին. փոխանակ ասելու, Որ առին զլապտերս իւրեանց Ա ելին ընդ առաջ փեսային եւ հարսին։

(²) Կարդա թէ՝ (7 էջ 1 կանոն) եւ թէ՝ (9 էջ 3 կանոն)։

(³) Ընդ նախդիրը յոգնակիի մէջ անորոշ հայցականով հետ կը նշանակէ։

(⁴) Ի յապել փեսայն (փեսին ուշանալու ատենը)։ Փեսայն բառը թէ՝ իբրեւ յատկացուցիչ եւ թէ՝ տէրբայի կրնայ ըլլալ 'ի յապել անեռեւոյթին։ — Այս պատճառով կը նանչցուին այն սեռականներն՝ որ կը զտնուին է նախդիրու անորոշ դերբայներու հետ։

մեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն. Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա չիջանին լապտերքս մեր։ Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն. Գո՛ցէ ո՞ւ էցէ մեզ՝ յեղ բ՚ա՛ւական(5) այլ երթայք 'ի վաճառականս(6), և գնեսջիք ձեզ։ Իբրեւ նոքա գնացին գնել, եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա(7) 'ի հարսանիսն, և փակեցաւ դուռնն։ Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն. Տէ՛ր Տէ՛ր, բաց մեզ։ Նա պատասխանի ետ և ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ։

Մ՚ա՛ր. Իե. 1—13

II

ՄԻ ԲԱՐՁԸՆՏԻՐ ԼԻՆԵԼ Ի ԿՈՉՈՒՆՍ

Բարձընտիր լինել, ա՛ա՛ջին պեղբ [բ՚ա՛նել
Կոչնական, կոչա՛ն-է հրա՛էբեա՛լ
Հայիլ, նայել
Բազմիլ, նստել (սեղանի վրայ)

Գուցէ, ընդունայ ոչ
Ունել, բ՚ա՛նել
Ի վերս մատիս, վերս հրամանի՛
Բարձակից, ընկերք սեղան նստող
Բարձ, նստարան

Ասայ Յիսուս և առ կոչնականսն առակ մի, հայեցեալ եթէ զիա՛րդ բ՚ա՛ր-ձընտիր լինէին(1). Ասէ ցնոսա, Յորժամ կոչիցէ ո՞ (2) զքեզ 'ի հարսանիս կամ 'ի կոչունս, մի՛ բազմիցիս յառաջին

(5) Այս խօսքին մէջ լռելեան կիմացուի ա՛յդ դերանունը՝ է՛ր բառին տեղ։ — Բ՚ա՛ւական ածականը իւր խնդիրներն վերջանոլով տրական առած է, եւ ինքն ստորոգելի է ա՛յդ լռելեայն իմացուող դերանուն տէրբայիին։

(6) Հոս զարտուղութիւն մը կայ ընդհանուր կանոնէն (բաղդաստ՝ 9 էջ 1 կանոն)։

(7) Ընդ նախադրութիւնը եզակիի մէջ վերջանոլով տրականով հետ կը նշանակէ։

(1) Բ՚ա՛ր-ձընտիր բառն հոս ստորոգելի կամ ուղղական խնդիր մ՚է վասն զի լռելեայն իմացուող ի՛ն-ի՛ն-ոյ տէրբայիին ինչ ըլլալը կը ցուցնէ։ (Տես 9 էջ 3 կանոն)։

(2) Ո՞՝ որ անորոշ կամ միջակ ածական մ՚է, իբրեւ զոյական գործածուած ըլլալով՝ է տէր է՛ն-էջ բային։ Պէտք է գիտնալ որ ածական բառ մը առանձին գործածուած ատեն զոյականի զօրութիւն ունի, վասն զի իւր մէջ լռելեայն կը պահէ իրեն վերաբերեալ զոյականն։

բարձին. Գ-ոյ (³) պատուականագոյն եւս քան զքեզ ելցէ կոչեցեալ 'ի նմանէ. և եկեալ՝ որ զքեզն և զնա կոչեաց, ասիցէ ցքեզ՝ տուր սմա տեղի, և ապա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ունել։ Այլ յորժամ կոչիցիս, երթիջիր բաղմիջիր 'ի յետին տեղւոջ. զի յորժամ գայցէ որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ. բարեկամ 'ի վեր մատիր, յայնժամ եղիցին քեզ փառք (պիտի փառաւորուիս) առաջի բարձակցացն քոց։ Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։

Ղ-ա. ԺԴ. 7—11

12

ՎԱՍՆ ԸՆՏՐԵԼՈՑ ԶՊԱՏՄԱՆ ԿԵՆԱՑ

Ռահ, ճամբայ
Ածել, դանել
Պայման, վէճակ

Լցցին (լնուլ, կը.), կատարուիլ
Ցաւեա, դիշեր
Փրկաւէտ, էրկոր

Փրկիչ իմ Յիսուս,
Զէմատուրեան քո
Ծոցեա՛ յիս ընկոյս (¹)։
Ընդրել ինչ ընտրեա (²)
Որ ուղիղ 'է կեանս։

(³) Գ-ոյ մակբայ է երբ ուրոյ ՝ն նշանակէ, իսկ երբ նշանակէ ի-ոյ, ուրոյ, գ-ոյ էական բային սեռադասական եզակի Գ. դէմքն է. Օր. Ոչ գիտէր թէ գ-ոյ ոք վրէժխնդիր յերկինս (չէր գիտեր թէ երկնից մէջ վրէժխնդիր մէկը կայ՝ կամ ըլլայ)։

(¹) Այսպէս կարդա. Ծ-ոցեա՝ յիս ընկոյս էմ-ատուրեան քո։ Իմ-ատուրեան յանկացուցիչը իւր ընկոյս յանկացեալին առաջ դրուած ըլլալով՝ անոր ը նախդիրը ինքն ալ առած է. վասն զի մեռականական կանոնով՝ յանկացուցիչը յանկացեալին առաջ դրուած ատեն՝ յանկացեալին նախդիրը ինքն ալ կ'առնու։

(²) Փոխանակ ըսելու՝ Զէ ընդրեցէք ի ընտրեալ եւ այլն. (Տես. 13 էջ 2 կանոն)։

Ածէ զիս յանմահ (3)։
Եւ պոռ 'ի կոչման
Ցոր ձիրքն կոչեա.
Կալ ինչ անսասան (4)։
Զի լցցին յաւէտ
Ցիս յամենայնի
Կամք քո փրրկաւէտ։

13

ՏԱԼ ՁԿԱՅՍԵՐ՝ ԿԱՅՍԵՐ

Առաքել, ղբկեալ
Որսալ բանիւ, խօսելով դէմացինը
Ո՞յր է, որոն է [քարոզել
Նենգութիւն, խաբէութիւն

Ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ,
[ինչու մը հոգար հոգիդ չէ
Դահեկան, (ղրուշ)։ փոխարէն
[ինչի մը արժէն ուներ

Եւ առաքեն առ Ցիսուս ղմանս 'ի փարիսեցւոց անդր և 'ի Հերոդէանոցս (1), զի զնա որսասցեն բանիւ։ Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նենգութեամբ և ասէին. Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ զի ոչ հայիս յերեսս մարդկան (2), այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես։ (3) Արդ ասա՛ մեզ, արժա՞ն է հարկ տալ կայսեր՝ թէ ոչ։ տացո՞ւք թէ ոչ տացուք։ Եւ Ցիսուս գի-

(3) Անմահ ածականն իւր է էնոն զոյականէն հեռանալով՝ անոր նախդիրն ինքն ալ առած է։

(4) Այսպէս կարդա՛. Եւ պոռ ինչ լալ անսասան 'ի կոչման՝ յոր կոչեա զիս։ — Տա՛ բայը երբեմն անհրաւորի ձով դրուելով բաղալ նշանակութիւնը կուտայ, ուստի այսպէս կը թարգմանուի վերոյգրեալ խօսքը. (Թո՛ղ որ անխախտ կենամ ես այն կոչմանս մէջ՝ որում կը կանչես զիս)։

(1) Տես 7 էջ 1 կանոն։ Կարդա նաեւ անդր բառին վրայ (6 էջ 4 կանոն)։

(2) Հայիլ բայը նախդրիւ տրական կամ է ով անորոշ հայցական ոգով բնութեան խնդիր կ'առնու։

(3) Տես 6 էջ 3 կանոն։

(4) Հոս զեղջում կայ. պէտք է իմանալ՝ թէ ոչ է արժան հարկ տալ եւայլն։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2
A 13838

տաց զկեղծաւորութիւն նոցա, ասէ ցնոսա. Զի՞(5) փորձէք զիս, կեղծաւորք, բերէք ինձ դահեկան մի զի տեսից։ Եւ նոքա բերին. և ասէ ցնոսա. Ո՞յր է պատկերս այս կամ գիր։ Եւ նոքա ասեն ցնա. Կայսերէ(6)։ Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնոսա. Երիթայք տուք զկայսերն՝ կայսերս, և զԱստուծոյ՝ Աստուծոյ։ Մարկ. ԺԲ. 13—17

14

ՋՈՒՐՆ ԿԵՆԴԱՆԻ

Վաստակեալ, յոգնած
Հանել ջուր. ջուր առնել, քաղել
Գնել, ծախու առնել
Խառնակիլ, խառնուիլ

Արդեօք, երբեցնէ
Դոյլ, (գօվ)
Խաչն, ինք, ուղիղ և այժ
Միւսանգամ, երկրորդ անգամ

Գայ Յիսուս 'ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար, մերձ 'ի գեօղն զոր ետ Յակոբ որդւոյ իւրում Յովսեփայ, և անդ էր աղբիւր մի Յակոբայ։ Եւ Յիսուս վաստակեալ 'ի ճանապարհէն՝ նստէր 'ի վերայ աղբերն, և էր ժամ իբրեւ վեցերորդ։ Գայ կին մի 'ի Սամարեայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. Տուր ինձ ըմպել (Ջուր տո՛ւր ինձ)։ Զի աշակերտքն նորա երթեալ էին ի քաղաք անդր(1) զի կերակուրս

(5) Զի բառը երբ ի՞նչ կը նշանակէ՝ որ ատեն պէտք է որ իր վրայ պարոյկ (՞) նշանն ունենայ՝ մակբայ է. Եթէ նշանակէ 'վասն զի կամ թէ՝ շաղկապ է. իսկ եթէ նշանակէ ի՞նչ բան, ինչ՞ որ անորոշ ածական է։

(6) Պէտք է յաւելուլ՝ կայսերէ է պատկերս այս կամ գիր։ Այս տեսակ խօսից ձեւը վերջի՞ն կ'ըսուի երբ մէկ կամ աւելի բառեր զեղչեալ ըլլան, այսինքն՝ եթէ լրեցեալն խմացուին։

(1) Ինչպէս անդր, այդր, անդի բառերը բացառականի հոլ՝ նոյնպէս եւ այր, այդր, անդր ածական են նախդրիւ տրական բառի մը հոլ, այս, այդ, այն ցուցական նախդրիւ տրականին տեղ գործածուելով։

գնեսցեն։ Ասէ ցնա կինն Սամարացի. Դու որ հրեայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես 'ի կնոջէ Սամարացւոյ։ Զի ոչ երբէք խառնակին հրեայք ընդ սամարացիս։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Եթէ գիտէիր դու զպարգևսն Աստուծոյ, և ո՞վ է որ ասէդ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր 'ի նմանէ, և տայր քեզ ջուր կենդանի։ Ասէ ցնա կինն. Տէր, դու քանզի և դոյլ ես ոչ ունիս (²), և ջրհորս խոր է, իսկ արդ ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի։ Մի թէ դու մե՞ծ ինչ ոք լցես քան զհայրն մեր Յակովբ՝ որ զայս ջրհոր ետ մեզ, և ինքն ասոյ սրբ՝ և որդիք նորա և խաշինք նորա (³)։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Ամենայն որ ըմպէ 'ի ջրոյ յայդմանէ, միւսանգամ ծարաւէ, բայց որ ըմպէ 'ի ջրոյն զոր ես տայ նմա, մի ծարաւեսցէ յաւիտեան։

Յովհ. Դ. 5—14

Or. 'է տալոյ անդր կ'ըսեն փոխանակ ըսելու 'է տալոյն յայն
'է դալոյ այր » » » 'է դալոյս յայս
'է դան այդր » » » 'է դանդ յայդ

Իսկ առանձինն՝ մակբայ են շարժում ցուցնող բայերու fով դրուելով, եւ կը նշանակեն հա, հոդ, հան։

(²) Իսկ բառը շաղկապ է երբ բայց նշանակէ, մակբայ է երբ անքա՛ նշանակէ։ Or. Դոյլ է՝ ոչ ունիս, կը թարգմանուի, Դոյլ անքա՛ չունիս։

(³) Երբ խօսքի մը մէջ տէրբային բաղադրեալ ըլլայ այսինքն մէկէն աւելի՝ այն ատեն բայը յոգնակի կը դրուի, բայց երբոր բաղադրեալ տէրբայիներէն առաջինն եզակի ըլլայ՝ բայը եզակի կը դրուի, միւս տէրբայիներուն առջեւ բայը չկրկնուիր այլ պահանջուած ժամանակովն ու թուովն լրելեայն կ'իմացուի, ուստի այս խօսքին մէջ ինքն ասոյ սրբ՝ և որդիք նորա և խաշինք նորա, վերջի երկու տէրբայիները լրելեայն կը պահանջեն համաձայնութեան օրինօք իրենց բայը որ է սրբին։

15

ՀԱՆԴԵՐՁ ՀԱՐՍԱՆԵԱՅ

Զուարակք, Եղեբ
Պարարակ, Քէբուկ
Զենուլ, Տրմեալ
Ցուլանալ, Ծուլանալ
Ագարակ, Արտ, (Լեռնմալ)

Թշնամանել, Նախատել
Անցք, Անցնելու տեղ, Ճամբայ
Բաղմական, Դոպող, Հրաւիրեալ
Ատամն, Մեն, Ակռայ
Կոչեցեալ, Հրաւիրեալ

(Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի որ արար հարսանիս որդւոյ իւրում։) Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն 'ի հարսանիս (1), և ոչ կամեցան գալ։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ. Ասացէք հրաւիրելոցն, ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ և պարարակք զենեալ են, և ամենայն ինչ պատրաստ է (2). Երկայք 'ի հարսանիս։ Եւ նոքա յուշացեալ գնացին՝ ոմն յագրարակ իւր և ոմն 'ի վաճառ իւր (3), և այլք կալան զծառայս նորա՝ թշնամանեցին և սպանին։ Իսկ թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ, և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանողսն զայնոսիկ, և զքաղաքն նոցա այրեաց։ (Ցայնժամ ասէ ցծառայս իւր. Հարսանիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի։) Արդ երթայք յանցս ճանապարհաց, և զորս միանգամ գտանիցէք կոչեցէք 'ի հարսանիս։ Եւ երեալ ծառայքն 'ի ճանապարհս ժողովեցին զամենեսեան զոր և գտին՝ զչարս և զբարիս, և լցան հարսանիքն բաղմականօք։ Եւ մտեալ թագաւորն հայել զբաղմականօքն՝ եռեսս այր մի՝ որոյ ոչ էր զգեցեալ (որ չէր հագած) հանդերձ հարսանեաց, և ասէ ցնա.

---

(1) Անցեալ դերբայներն երբեմն իբրեւ ածական գործածուելով՝ իրենց բային պահանջած հոլովովը խնդիր կ'առնուն։

(2) Տես 9 էջ 3 կանոն։

(3) Հոս երկու տէրբայիներուն առջեւ բայը որ է գնաց՝ զեղչեալ է. Օր. Ոմն գնաց յագուրակ իւր եւ ոմն գնաց 'ի վաճառ իւր։

Ընկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց. և նա պապանձեցաւ։ (Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորսն. Կապեցէք զոտս և զձեռս (⁴). և հանէք 'ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճել ատամանց։) Զի բազումք են կոչեցեալք՝ և սակաւք՝ ընտրեալք։

Մատթ. ԻԲ. 2—14

16

ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Կայք, կայարան, բնակարան	Նոյն, (մկ.) նոյնպէս
Եթեր, երկինք	Ի բաց կացուցանել, հեռացնել
Երանաւետել, երջանիկ ընել	Ամէն, (մկ.) նոյնպէս ըլլայ
Համայն, բոլոր	Ստորինք, բնակիչք երկրի

Ո՛ Հայր մեր գլխաւոր,
Որ զկայս եթերաց
Երանաւետես
Փառաց տոց 'ի դէս (¹)
Անուն քո լիցի
Սուրբ և պաշտելի,
Եւ ծանիցեն զայն
Տիեզերք համայն։
Զարքայութիւն քո
Մեզ երևեցո՛.
Եւ աստուածային
Կամք քո եղիցին՝
Որպէս 'ի յերկինս
Նոյն և 'ի ստորինս։

Զհաց մեր առօրեայ
Եւ այսօր շնորհեա.
Թո՛ղ զպարտիս մեր,
Որպէս և մեք, Տէր,
Տամք ամենեցուն
Պարտեաց թողութիւն։
Մի՛ ղեկուցանիր մեզ
Ի փորձութիւն (²).
Այլ կացո՛ 'ի բաց
Յամենայն չարեաց.
Զի արքայութիւն
Քո միշտ է մնայուն.
Քեզ փառք վայելեն
Յաւիտեանս ամէն։

(⁴) Տես 16 էջ 1 կանոն։

(¹) Ի դէս տոց տոց (քու փառիդ տեսքովը)։

(²) Մի՛ ծիր 'ի փորձութիւն զկուրութիւն մեր (Մեր տկարութիւնը փորձանքի մի տանիր)։

17

ՄԵԾԱՏՈՒՆՆ ՅՈՒՍԱՑԵԱԼ ՅԻՆՉՍ ԻԻՐ

Անդ (յգ.) անդաստան, (Ամբլ)
Տոհմականք, ազգէնք, ցեղեան
Շտեմարան, (ամպար)
Համբարել, դէղէլ

Բարութիւնք, ինչք, սպասաւորք
Ո՞ւմ լինիցի, որ՞ պէտք ըլլայ
Գանձել անձին, իրեն համար ժողովել
Մեծանալ, հարստանալ

Եւ ասաց առ աւրուն ճեշմարտեան եղուն անդր տոհմականս (1), և խորհէր 'ի միտս իւր և ասէր։ Զի՞ գործեցից՝ զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ։ Եւ ասէ. գիտեմ զի՛նչ արարիցս, քակեցից զշտեմարանս իմ՝ և եւս ճեշմարտեանս շինեցից (2) և անդր ժողովեցից զցորեան և զամենայն բարութիւնս համբարեալ ամաց բազմաց. հանգիր, կեր, արբ և ուրախ լեր։ Ասէ ցնա Աստուած. Անմիտ, յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն. իսկ զոր պատրաստեցերն ո՞ւմ լինիցի։ Նոյնպէս և որ գանձէ անձին, և ոչ յԱստուած մեծանայցէ։

Ղուկ. ԺԲ. 16—21

---

(1) Շատ բառերու սեռականն ու տրականը միեւնոյն ձեւով ըլլալով՝ պէտք չէ շփոթել զանոնք։ Տրականը միշտ աւրոյ (+էդ) հարցման կը պատասխանէ եւ բայի կը վերաբերի, իսկ սեռականը աւրէն (+էդն) հարցման կը պատասխանէ եւ գոյական բառի կը վերաբերի։ Արդ, այս խօսքին մէջ կը հարցնեմք. Որին անդաստանները տոհմական տուին, Առ աւրուն ճեշմարտեան (հարուստ մարդու մը). ուրեմն հոս Առ բառն սեռական ըլլալով՝ յատկացուցչի պաշտօն կը վարէ, ինչպէս սեռական են նաեւ իւր հետ հոլովուած աւրուն եւ ճեշմարտեան ածականները։

Նոյն այս խօսքը Ներսէս Շնորհալի ոտանաւորով շարադրած է այսպէս.

«Ըստ մեծատանրն յիմարին.
աւրոյ եղուն անդր տոհմային։»

Հոս առ բառին տեղ դրուած աւրոյ դերանունն տրական գործածուած է. այսպէս մեր հարցման ձեւն փոխելով կրնայինք առ բառն տրական իմանալ, եթէ իւր հով գտնուած աւրուն ածականն իւր գոյականին սեռական ըլլալուն ստոյգ նշան մը չլինէր։

(2) Հոս ճեշմարտեան բառը գոյականաբար գործածուած ածական մ'է. (Տես 15 էջ 2 կանոն)։ Եւ իւր մէջ լռելեայն կը պահէ շրջաբերեան բառը, փոխանակ ըսելու, Եւ եւս մեծամեծ շտեմարանս շինեցից։ (Ա՛լ աւելի մեծ շտեմարաններ պիտի շինեմ)։

18

ՏՐՏՈՒՆՋԻ ՄՇԱԿԱՅՆ

Ընդ առաւօտս, ասպասան դէմ
Ի վարձու ունել, վարձով բառնել
Արկանել վարձս, վարձ կոչել
Աւուրն դահեկան, օրուան համար
Դատարկ, պարապ [ոչ ղարուշ
Հրապարակ, (հրապարակ տեղ)
Գաւառապետ, (վերակացու)

Ցեռինք, եղբայրներն
Մէն մի դահեկան, հոյակ ղարուշ
Համարել, կարծել
Հասարակորդ առնել, հաւասար
Տօթ, պատուիրան [բաժին հանել
Զրկել, երանութիւնը յափշտակել
Սակ արկանել, (բաղարեալ ընել)

Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն՝ որ ել ընդ առաւօտս[1] 'ի վարձու ունել մշակս յայգի իւր. և արկ վարձս մշակացն աւուր դահեկան, և առաքեաց զնոսա յայգի իւր։ Եւ ելեալ զերրորդ ժամուն՝[2] եառեալ այլս զի կային դատարկք 'ի հրապարակս, ասէ և ցնոսա. Երթայք և դուք յայգի իմ, և որ ինչ արժան իցէ տայց ձեզ. գնացին և նոքա։ Եւ դարձեալ ելեալ զվեց ժամուն, և զինն ժամուն՝ արար նոյնպէս։ Եւ զմեռասաներորդ ժամուն ելեալ, եգիտ այլս՝ զի կային դատարկք, ասէ ցնոսա. Ընդէ՞ր կայք ասա զօր ոչ դէպ[3] դատարկք։ Ասեն ցնա. Զի ոչ ոք կալաւ զմեզ 'ի վարձու. ասէ ցնոսա. Երթայք և դուք յայգին, և որ ինչ արժան

---

(1) Ընդ նախադրութիւնը անորոշ հայցականով ասպասանով կը ցուցնէ. Օր. Ընդ առաւօտս (առտուան դէմ) ընդ սանդուխս ընդ ոտքերէ (այն օրերուն)։

(2) Զ նախդիրը գործիական հոլովով երբեմն անորոշ ժամանակ կը ցուցնէ. Օր. Զերրորդ ժամուն, զվեց ժամուն, զինն ժամուն, զեռասաներորդ ժամուն եւայլն (ժամն երեքին, վեցին, իննին, տասն եւ մէկին) եւայլն։

(3) Հայցական հոլովներ կան՝ որ չորս պարագայի մէջ բնութիւն խնդիր կը լալ. Անոնք են, 1. ժամանակի դերանուններ. 2. ճամբայ. 3. Զափ. 4. Զի՞ կամ օրինակ ցուցնող հայցականներն։ Օր. Ընդե՞ր կայք զօր դատարկ. հոս կայք բայը չէզոք թլլալով՝ արդէն հայցական խնդիր չառնուր, վասն զի չէզոք բային տէրբային ընելիք առարկայ մը չունենար. Ուստի զի՞ հայցական հոլով բնութեան խնդիր մ'է ժամանակի դերանուն ցուցնող։

ժան է՝ առնուցուք։ Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր. Կոչեա զվճարկան՝ և տուր նոցա վարձս, սկսեալ 'ի յետնոցն մինչև ցառաջինսն։ Իբրեւ եկին որք զմեհասանեերորդ ժամուն, առին մէն մի դահեկան. Եւ կեալ և առաջինքն՝ համարէին թէ աւելի առնուցուն. և առին մէն մի դահեկան և նոքա։ Իբրեւ առին՝ դրդնջէին ղտանդեռանէն(4) և ասէին. թէ դոքա յետինքդ մի ժամ(5) գործեցին և հասարակորդս մեզ արարեր զդոսա որ զծանրութիւն աւուրն բարձաք և զտօթ։ Նա պատասխանի ետ միոմ 'ի նոցանէ և ասէ. Ընկեր, չզրկեմ զքեզ. ո՞չ դահեկան մի՞ սակ արկեր ընդ իս. ա՞ռ զքոյդ և երթ։ Մատթ. Ի. 1—14

19

ՍԵՐՄԱՆԱՅԱՆՆ

Սերմանացան, սերմ ցանող	Լսել, հասկնալ
Խոնիլ, բաղմութեամբ ժողովուիլ	Հիւթ, նիւթ (եօղ)
Ունել զցամաք, եղերք բռնել	Ջեռնուլ, տաքնալ
Վարդապետութիւն, տարող	Հեղձուցանել, խեղդել

Դարձեալ սկսաւ Յիսուս ուսուցանել առ ծովեզերքն(1). և խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչեւ 'ի նաւ մտանել նմա և նստել(2) 'ի ծովուն և ամենայն ժողովուրդն զծովեզերքն՝ ցցամաքն ունէին. և ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ։ Եւ ասէր նոցա 'ի վարդապետութեան իւրում։

(4) Տրտնջել բայն ընդ առանց է ի բացառական բնութեան խնդիր կ'առնու։

(5) Տես 3 կանոն սոյն դասին մէջ։

(6) Գնելու, առնելու, վճառելու եւ այլն բայերը սեռական հոլով բնութեան խնդիր կ'առնուն։ Հոս դահեկան սեռական հոլով բնութեան խնդիր է սակայն բային։

(1) Ա- նախադրութիւնը գործիական խնդրով կը նշանակէ տակը, տակն 'է վերայ, վրայ։

(2) Ընդառ դերբայներու տիրային սովորաբար տրական կը դրուի. (բաղդատէ 13 էջ 2 կանոն)։

Լսէ՛ք, ահաւասիկ ել սերմանող սերմանել։ և եղեւ 'ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն և եկեր զնա։ Եւ այլն անկաւ յապառաժի՝ ուր ոչ դոյր հող բազում, և վաղվաղակի բուսաւ՝ քանզի ոչ էր հի-ն երկրին (3), և յորժամ ծագեաց արեւ՝ ջեռաւ, և զի ոչ դոյին արմատք՝ ցամաքեցաւ։ Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց, եկին փուշքն և հեղձուցին զնա, և պտուղ ոչ եառ։ Եւ այլն անկաւ յերկիր բարւոք, և ելեալ աճեցեալ տայր պտուղ, և բերեր ընդ դոյ երեսուն, և ընդ դոյ վեցեսուն, և ընդ դոյ հարիւր (4)։ Եւ ասէր. Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Մատթ. Դ. 1—6

20

ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԻՆ

Օրըստօրէ, (ած.) ամենօրեայ	Ցանկ, դեղ
Սպասնորհ, ապերախտ	Զարթնուլ՝, արթննալ
Զուարթուն, արթուն	Յայգուն, առաւօտուն

Երկրրպագեմ քեզ և օրհնեմ զքեզ Տէր,
Որ զիս 'ի ժամ երեկոյիս հասուցեր,
Տալով այսօր զօրըստօրէն ինձ ընդոյ (1)
Եւ փրկելով զիս յամենայն փորձանաց.
Որ և զՀոգեւոր պարգեւեցեր ինձ զընորհ (2)

(3) Էական բայր սեռական հոլով բնութեան խնդիր առնլով՝ առնալ կր նրշանակէ։ Ուստի Ուէր հի-ն երկրին կր թարգմանուի, երկրը հի-ն ը-ն։

(4) Ընդ նախադրութիւնը սեռական խնդրով էն-ն-ով, տեղ կր նշանակէ. Օր. Եւ բերեր ընդ դոյ երեսուն, եւ այլն. (մեկին տեղ երեսուն հաս կուտար, եւ այլն)։

(1) Տես 8 էջ 2 կանոն։

(2) Փոխանակ ըսելու. զընորհ Հոգեւոր։ (Տես 16 էջ 1 կանոն)։

Առ էբէոՒՒՒն հոգւոյ իմոյ կոչեաւ(3)
Քո է պարգեւ եթէ այսօր ինչ բարի
Գործով՝ բանիւ կամ խորհրդով արարի.
Իսկ եթէ չար, յինէն է այն, թո՛ղ ինձ Տէր,
Ոչ ապաշնորհ դեղք աւ Քոյդ գտայ սէր(4)։
Քեզ ըղմարմինս իմ յանձն առնեմ և զհոգիս,
Պահել ամբողջ յառաջիկայ դիշերիս։
Եւ դու զուարթուն հոգիդ որ կաս ցանկ առ իս,
Լեր պահապան ինձ 'ի հանգիստ դիշերիս.
Խաղաղութեամբ նընջել ինձ յայսմ և 'ի սոյն,
Եւ զարթուցեալ օրհնել ըղՏէր 'ի յայդուն։

21

ՄՇԱԿԲ ԱՅԳԻՈՑՆ

Էր, կոչ
Տար, հեռաւ

Ասել ընդ միտս, ինքնէրեն ըսել
Ժառանգութիւն, ժառանգք ինկածք

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի, և ետ զնա ցմշակս. և գնաց 'ի տար աշխարհ։ Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա։ Եւ կալեալ մշակքն(1) զծառայս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազմս քան զառաջինսն(2), և արարին նոցա նոյնպէս։ Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ. թերեւս ամաչեսցեն յորդւոյ սատի իմմէ։ Իսկ մշակք

(3) Կոչեաւ ածականն իւր էբէոՒՒՒն գոյականէն հեռի դրուած է։
(4) Կարդա այսպէս. Եթէ դեղք ապաշնորհ գտայ սէր քան (ես որ իմ մեղքերովս հռ սիրոյդ դէմ ապերախտ գտնուեցայ)։
(1) Տես 14 էջ 1 կանոն։ (2) Տես 10 էջ 5 կանոն։

իբրեւ տեսին զորդին. ասեն ընդ միտս. Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, զի մեր լինիցի ժառանգութիւնն։ Եւ հանին զնա արտաքոյ քան զայգին և սպանին։ Արդ զի՞նչ ա-բասցէ ընդ նոսա (3) (անոնց ի՞նչ ընէ) տէր այգւոյն, ո՞չ ապաքէն գայցէ և կորուսանիցէ զչարն զայնոսիկ, և տայցէ զայլ-ս՝ զնակաց (4), որք տայցեն նմա զպտուղս 'ի ժամու իւրեանց։

Մատթ. ԻԱ. 33—41

22

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

Կրտսեր, փոքր
Կեալ, կենաւ անցուանել, ապրիլ
Անառակութեամբ, գէշ ընթացուով
Վատնել, հատցընել, ցրուել
Ցարիլ, դառնալ, բարեկամ ըլլալ
Գալ 'ի միտս, խելքը գլուխը գալ
Վարձկան, վարձուով բանուած մարդ
Սովամահ կորնչիլ, անօթութենէ
Եղջիւր, (եղէջ պզտնուղէն) [մեռնիլ
Անկանել զպարանոցաւ, ճիպոտ
Ոչ բազում, քիչ [պլլուիլ
Ագուցանել, հագցնել

Առն դոջ էին երկու որդիք (1)։ Ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայրն. Հա՛յր տուր ինձ բաժին՝ որ անկանի յընչից դ. և նա բաժանեաց նոցա զկեանսն։ Յետ ոչ բազում ամուրց (2) ժողովեալ զամենայն կրտսերոյն. գնաց յաշխարհ հեռի, և անդ վատնեաց զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին յայնմիկ և սկսաւ ինքն չքաւորել։ Գնացեալ յարեցաւ (*) 'ի մի ոմն քաղաքացւոյ (3) աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագարակ իւր՝ արածել խոզս։ Եւ ցանկայր ընուլ զորովայն իւր յեղջերէն՝ զոր խոզքն

(3) Առնել բայը ընդ նախադրով հայցական խնդիր առնլով՝ ինչպէս կը տեսնուի այս օրինակէն՝ իբր վրէժ առնել, գոհ մը բան մը ընել, կը նշանակէ։

(4) Բաղդատէ 22 էջ 1 կանոն)։ (1) (Տես 25 էջ 3 կանոն։

(2) Յետ (եսէր) նախադրութիւնն սեռական հոլով խնդիր կ'առնու։

(*) Յարեցաւ բայն հոս ծառայութիւն դնել կը թարգմանեն ոմանք։

(3) Թուական ածականք իրենց եսեւէն առած բացառական խնդրոյն տեղ երբեմն սեռական ալ կ'առնուն։ Օր. Մէ ոմն 'ի քաղաքացւոյ՝ ըսելու տեղ կրնանք ըսել Մէ ոմն քաղաքացւոյ. ի գոմոյ ամուրց ըսելու տեղ՝ կրնանք ըսել ի գոմ ամուրց։

ուտէին, և ոչ ոք տայր նմա։ Եւ եկեալ 'ի միտս իւր՝ ասէ. Քանի՛ վարձկանք իցեն 'ի տան հօր իմոյ հացուկոտ (4), և ես սատ սովամահ կորնչիմ։ Յարուցեալ գնացից (5) առ հայր իմ։ Եւ ասացից ցնա, Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, և ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո, արա զիս իբրեւ զմի 'ի վարձկանաց քոց։ Եւ յարուցեալ եկն առ հայր իւր։ Եւ մինչդեռ հեռագոյն էր, եսես զնա հայրն և գթացաւ, յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցսն նորա և համբուրեաց զնա։ Ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, ոչ եւս եմ արժանի կոչել որդի (6) քո։ Ասէ հայրն ցծառայսն իւր, վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին և ագուցէք նմա, և տուք զմատանին 'ի ձեռն նորա և կոշիկս յոտս նորա. և ածէք զլեղն պարարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք՝ զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ։ Ղուկ. ԺԵ. 11—24

23

ԴԱՐՁ ԱՆԱՌԱԿԻՆ

Զիր, պարքե-	Գգուանք, փայփայել, շոյել
Հեռեւիլ, երթալ	Գանակոծ առնել, ծեծել
Ուղի, ճանբայ	Շատ է, բաւական է
Տարագիր, հեռու ճանապարհ (ոչ-բնէն)	Մերժել յերեսաց, երես չտալ

(4) Հացուկոտ բառն թէ՛ եբրեւ ածական եւ թէ՛ իբրեւ usորոգելի հեռացած է իրեն վերաբերող վարձկան գոյականէն։

(5) Անցեալ դերբայներն ընդհանրապէս կը կապուին իրենցմէ վերջը եկող դիմաւոր բային հետ։

(6) Անուանէմ, խօսիմ, ասեմ, գտնեմ, խրթեմ, հաստատեմ եւ ուրիշ ներգործական բայերու սեռի խնդիրներն իրենց usորոգելին անորոշ հայցական հոլովով կ'առնուն, թուով իրարու համաձայնելով։ Իսկ այդ բայերն երբ կրաւորական (կամ կրաւորակերպ չէզոք) գործածուին. այն usորոգելին որ ներգործականին սեռի խնդրոյն կը վերաբերէր կրաւորականին տէրբայինն կը վերաբերի. ուստի այս խօսքին մէջ խօսել (կոչուիլ) կրաւորական բային եթէ ըլլալու դերանուն տէրբայի մը տակ, անոր իբրեւ usորոգելի կը տրուի որդի բառն, իբր թէ գրուած լինէր. Զեմ արժանի զի խօսեցայց (ես) որդի։ Կրնանք նաեւ որդի բառն իբրեւ սաղմոսն ինքէր տալ խօսել բային։

Հա՛յր, ես որդի քոյին եմ այն,
Որ ընչաւորոց քոց վատնեալ չէր (¹)
Եւ ընդ ո՞ւղին հետեւեալ լոյն (²),
Կեցի 'ի քէն ցարդ տարագիր։
Այլ զդաստացեալ արդ վերըստին,
Դառնամ առ քեզ հայրըդ գըթած,
Ընկալ զիս մի ընդ որդիս քոյին,
Այլ լերբ ըզմի 'ի վարձկանաց։
Զեմ արժանի քոց գըգոնանաց.
Հա՛ր զիս, արա զիս գանակոծ,
Շատ է զի մի՛ 'ի սպառ 'ի բաց
Զիս մերժեսցես յերեսաց քոց։

ՍԱՄԱՐԱՑԻՆ

Վէրս 'ի վերայ դնել, վէրաւորել
Կիսամահ, կեռ մը ձեռաց
Դէպ լինել, պարարհել
Զանց առնել, բառնի տեղ ընդնել
Արկանել, ընդնել

Գրասա, բեռ կրող անասուն
Պանդոկի, (խան)
Դարմանել, խնամք տանել
Ծախել, ծախք ընել
Հատուցանել, վճարել, տեղը դալ

Այր մի ի՝ Յերուսաղեմէ յԵրիքով, և անկաւ 'ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա, և վէրս 'ի վէրս (¹) եդին, թողին կիսամահ եւ գնացին։ Դէպ եղեւ քահանայի մի՝ զ

(¹) Այսպէս կարդա՛. Որ վատնէ՝ չէր ընչոց։ (Տես. 16 էջ 1 կանոն։

(²) Ընդ նախադրութիւնը երբեմն անորոշ հայցականով բառի մը դէմն անցնել կը նշանակէ, եւ աշխարհաբարի մէջ բացառականով կը թարգմանուի. Որ. Հետեւիլ ընդ ուղին լայն (լայն ճամբէն երթալ)։

(¹) Նախադրութիւններէն ոմանք երբէ խնդիր չունենան՝ մենաւոր են։

էջանէլ(²) ընդ նոյն ճանապարհ. և տեսեալ զնա զանց արար։ Նոյնպէս և Ղեւտացի մի եկեալ ընդ նոյն տեղի(³), եւ զանց արար։ Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ նովաւ, և տեսեալ զնա՝ գթացաւ, և մատուցեալ պատեաց զվէրս նորա՝ արկեալ 'ի վերայ ձէթ և գինի, և եդեալ 'ի վերայ դրաստու իւրոյ՝ «ած զնա 'ի պանդոկն գ(⁴), և դարմանեաց զնա։ Եւ 'ի վաղիւ անդր իբրեւ ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս և ասէ. Դարմանտար դմա, և զոր ինչ ծախեսցես 'ի դա՝ 'ի միւսանգամ դարձեալ ետուցից քեզ։ Ղ-կ. ժ. 30—36

25

ՅԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ

Յայլակերպ լինել, կերպարանք [փոխել	Զարհուրիլ, սարսիլ վախենալ
Զորձ, լոլ	Հովանի, շուք
Թափիչ, լոլ լուացող	Այսր անդր, ասդին անդին
Ռաբբի, վարդապետ	Առնել, շինել

Եւ յետ վեց աւուր առնու ընդ Յիսուս զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր առանձինն. և յայլակերպս եղեւ առաջի նոցա. և ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ

(²) Փոխանակ ասելու՝ Դէպ եղեւ ղէ բահանայ մի Էլ եւայլն։ (Տես 12 էջ 2 կանոն)։

(³) Տես 29 էջ 2 կանոն։

(⁴) Բառեր կան որոց ուղղականն թէ է ով եւ թէ առանց է ի կը գրուի. Օր. պանդոկ կամ պանդոկի, տամալ կամ տամալի (տանիմ), ձօն կամ ձօնի (նուէր), լորամարգ կամ լորամարգի (պրլտրենն) եւ այլն. Ուստի պէտք չէ ափոթել նոս շարժում ցուցնող բայի հով է ով վերջանոլով տրական տեսնել կարծելով։

(¹) 15 էջ 7 կանոն։

կարեն «ԱՅՊԷ»(2) սպիտակացուցանել։ Եւ երեւեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, և խօսէին ընդ Յիսուսի, պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅիսուս. Ռաբբի, բարւոք է մեզ սատ լինել, և «Արասցո՛ երիս տաղաւարս՝ դ մեզ, և դ Մովսէսի, և դ Եղիայի(3)։ Քանզի ոչ գիտէր զի՞նչ խօսէր, զի զարհուրեալ էին։ Եւ եղեւ ամպ մի հովանի 'ի վերայ նոցա, ձայն եղեւ յամպոյ անտի՝ և ասէ. Դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք. Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր, ոչ եւս զոք ուրեք տեսին քայց դայն Յիսուս(4) ընդ իւրեանս։

Մարկ. Թ. 1—7

26

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԻՆՍ ԸՆԴ ԴԱՐՁ ՄԻՈՅ ՄԵՂԱՒՈՐԻ

Խնդալ, «արախառնալ	Ածել աւել, «ալել
Ապաշխարել, վերքը լալ, ղղալ	Տաղաւար, խրճիթ, վրան
Պիտոյ է, պէտք է	Լուացանել ճրագ, մոմ վառել

Ով որ լցէ 'ի ձէնջ մարդ՝ «ոյ էջէ հարիւր «ոչխար(1), և կորուսանիցէ զմի 'ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսուն և զիննն

---

(2) Ա՛ՅՊԷ բառը «ԷԼՊԷՐԷՌ մը կրնայ համարուիլ, այսինքն զարդու կամ զօրութեան համար դրուած, վասն զի «ոյ»ը բաւական է խօսքին իմաստը տալու. Բայց երբ Ս. Գրոց ուրիշ օրինակաց թարգմանութեան նայելով «ոյ»ը թարգմանենք «ՆՈՅ», այն ատեն «ՅՊԷ»ի պէտքն զգալի կ'ըլլայ շարադրութեան մէջ, եւ խօսքն ամբողջ կը թարգմանուի այսպէս. իւր լաթերն խիստ փայլուն կերպով ներմկցան, «ՆՈՅ» երկրի թափիչներն չեն կրնար «ՅՊԷ» ներմկցնել։

(3) Արասցո՛ երիս տաղաւարս (երեք բնակարան շինենք), դ մեզ, դ Մովսէսի եւ այլն՝ (մէկ հատ մը քեզի, մէկ հատ մը Մովսիսին եւ այլն), Այս խօսքին մէջ զեղչում մը կայ. փոխանակ ըսելու Մի՛ մեզ արասցո՛, դ Մովսէսի արասցո՛, եւ այլն։ Մի՛ ածականը լռելեայն իմացուող տաղաւարս գոյականին տեղ դրուած ըլլալով «ՔՈՒ ԻՆՔԸ է։

(4) Քայց դայն Յիսուս խօսքին մէջ լռելեայն իմացուող բայն է դէպքն։

(1) Տես 25 էջ 3 կանոն։

յանապատի, և երթիցէ զնոա կորուսեալն՝ (2) մինչեւ գտանիցէ զնա։ Եւ իբրեւ գտանէ՝ դնէ զնա 'ի վերայ ուսոց իւրոց խնդալով, և երթայ 'ի տուն, կոչէ զբարեկամս և զդրացիս և ասէ ցնոսա. Ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ (3) կորուսեալ։ Ասեմ ձեզ, զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ, քան վասն չնչոցն և չեն արդարոց՝ (4) որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն։ Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք տասն, և եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ լուցանիցէ ճրագ, և ածիցէ աւել 'ի տան, և խնդրիցէ ստէպ՝ մինչեւ գտանիցէ, և իբրեւ գտանէ, կոչէ զբարեկամս և զդրացիս, և ասէ. Ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի։ Այսպէս, ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ 'ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ։

Ղ-ԿԵ. ԺԵ. 4—10

27

ՎԱԽՃԱՆ ԱՄՊԱՐՇՏԱՑ

Ժանտ, գեղ, ընտանեաց	Խոխոջ, ջրի յոյն
Հաճ եւ գոհ, սիրելի ու գոհ	Մշտասալարթ, դիշեր զենքեր ու-
Ի բուն (մկ.), ամբողջ	Պճնիլ, զարդարուել [նեցող
Անդուլ, անդադար	Հողմավար, հովին հարուած
Նորաբողբոջ, նոր ծլած	Հասիլ, հասնել, հասնել
Աւուր, վաղուց ջուր	Ցար, դիշեր

---

(2) Զհետ նախադրութիւնն սեռական խնդիր կ'առնու։ Որ. զհետ յորոնելոյն (կորսուածին հետեւեն)։

(3) Զոչխարս բառին - գիրը յոգնակիի նշան չէ. վասն զի երբեմն՝ ինչպէս աշխարհաբարի անանկ ալ գրաբարի մէջ - գիրը էմի տեղ կրնայ գործածուիլ։ Հոս - գիրը երբեւ -ս- ցուցական ածականին տեղ ալ կրնայ առնուիլ։

(4) Եբէ-, եբէ+, ոբ- էն վեր բոլոր թուական որոշեալ ածականներու հետ գործածուած գոյականներն թէ՛ եզակի եւ թէ յոգնակի կրնան դրուիլ։

Երանելոյ (1) որ ոչ գնաց
Ի ճանապարհս ամբարշտաց.
Զեղեւ ըստ նա «Ամէն» (2),
Եւ ոչ յաթոռս նստաւ ժանտից։
Այլ 'ի հրամանս աստուածատուր
Հաճ են և գոհ միտք և կամք իւր.
Եւ ընթերցեր Ա ըստ (3) 'ի բուն
Խորհի անդուլ յօրէնս 'ի նոյն։
Զի «Ուղղ» ձա (4) նորաբողբոջ
Տընկեալ զառուիւ ջուրցն 'ի խոխոջ,
Տացէ ըստ իւր 'ի ժամու
Մրգատաստարաթ պճնեալ զարդու.
Եւ զամենայն գործս նորա
Յաջողեսցեն երկինք նըմա։
Ոչ այսպէս ո՛չ է ամբարիշտ,
Այլ երերեալ 'ի յերկրի միշտ,
Որպէս փոշի զի հողմավար
Այսր անդր հոսեալ հալածի յար։
Զի Տէր ծանեաւ զարդարոյն ռահ,
Զարացն ուղիք ածցեն 'ի մահ։

---

(1) Ե բայը զեղչեալ է։

(2) Տես 7էջ 3 կանոն. Ամէն բառից մէջ ածականը։ Օր. Ամէն ըստ, նոս ըստ խնդիր է Ամէն ածականին։

(3) Տես 23 էջ 3 կանոն։ Ժամանակ գրելու ցուցնող հայցական։

(4) Ուղղ նախադրութիւնն հայցական հոլով խնդիր կ'առնու։

28

ՄԵԾԱՏՈՒՆՆ ԱՆՈՂՈՐՄ

Բեհեզ, բարակ ազնիւ կտաւ
Ծիրանի, ծանր գունաւորեալ ներկեալ (ներկեցեալ կարմիր գեղջնով խառն)
Ցանկալ, փափուկ
Լիզուլ, ընտիր
Ի հեռաստանէ (մկ.), հեռուէն
Դոդ, ծոց, գիրկ
Թանալ, ընջել
Ծագ մատին, տապի ծայր
Պապակիլ, երդում ծարուիլ
Տապ, տուփ-ընդեղ (հերբերեր)
Անդէն, հոն տեղ

Այր ոմն էր մեծատուն, և ագանէր բեհեզս և ծիրանիս, և ուրախ լինէր հանապազ առատապէս։ Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս (Ղազարոս անուամբ աղքատ մը) անկեալ դնէր առ դրան(¹) նորա վիրաւորեալ, և ցանկայր ընուլ ղորովեսն իւր 'ի փշրանացն՝ որ անկանէին 'ի սեղանոյ մեծատան, այլ և շունք եւս գային և լիզուին զվէրս նորա։ Եղեւ մեռանել ազքատին, և տարան զնա հրեշտակքն(²) զնա 'ի գոգն Աբրահամու, մեռաւ և մեծատունն և թաղեցաւ, և 'ի դժոխսն՝ ամբարձ զաչս իւր մինչ 'ի տանջանսն էր, ետես զԱբրահամ 'ի հեռաստանէ, և զՂազարոս 'ի գոգ նորա հանգուցեալ։ Եւ նա աղաղակեաց և ասէ. Հայր Աբրահամ, ողորմեայ ինձ, և առաքեա զՂազարոս զի թացցէ զծագ մատին իւրոյ 'ի ջուր. և զովացուսցէ զլեզու իմ, զի պապակիմ 'ի տապոյ սոսկի։ Եւ ասէ ցնա Աբրահամ. Որդեա՛կ, յիշեա զի ընկալար անդէն զբարիս քո 'ի կեանսն քում, և Ղազարոս նոյնպէս չարչարանս(³), արդ սա սատ մխիթարի, և դու այդր պապակիս։

Ղուկաս. ԺԶ. 19—25

(¹) Ա՝ նախադրութիւնը վերջանոլով տրականով ՝ի՝ կը նշանակէ. Or. — դրան (դրանը քով). — նմ՝ (անոր քով) իբր՝ (տուն)։

(²) Տես 13 էջ 2 կանոն։

(³) Չեղչում մը կայ բայի՝ որ է ընդունեց։

29

ԸՆԹՐԻՒ ԲԱՂՏԱՍԱՐԱՑ

Ընթրիս առնել, երեկոյեան ճաշդալ	Ցօդ, անդամ
Մեծամեծք, էշխան, նախարար	Լուծանել, փակել
Ընդ գինիս մատանել, գինոնել	Բաբախել, ջրդել (սիրտը երայն)
Սպաս, կահ, գործիք	Մեկնել, բացարձել
Բռնալ, ձեռնուտ	Բարձրանալ, հպարտանալ
Որմ, պատ	Վախճանել, վերջացնել

Բաղատասար արքայ արար ընթրիս մեծամեծաց իւրոց հաղար ոն(1)։ Եւ իբրեւ ընդ գինիս եմուտ, հրամայեաց բերել զսպասս արծաթոյ և զոսկւոյ, զոր եհան Նաբուգոդոնոսոր հայր նորա(2) 'ի տաճարէն՝ որ յԵրուսաղէմ։ Բերէին, և ըմպէին նաքաք թագաւորն և մեծամեծք իւր. ըմպէին գինի և օրհնէին զաստուածս ոսկեղէնս և ղարծրեղէն և ղերկաթէն(3), և զԱստուածն յաւիտենից ոչ օրհնեցին։ Ի նմին ժամու ելին մատունք ձեռին մարդոյ, և գրէին 'ի վերայ բռելոյ որմոյ տաճարի թագաւորին, և թագաւորն տեսանէր զթաթ ձեռինն՝ որ գրէր։ Յայնժամ հատան գոյնք թագաւորին (թագաւորին գոյնը նեռեց) և յօդք միջոյ նորա լուծանէին, և ծունկք նորա զմիմեանս բաբախէին։ Աղաղակեաց և ասէ. Որ ոք ընթերցցի զգիրդ զայդ և զմեկնութիւն դորա ցուցանէ ինձ, ծիրանիս զգեցցի և երկրորդ 'ի թագաւորութեան իմում տիրեսցէ (և թագաւորութեանս մէջ երրորդ տիրող պիտի ըլլայ)։ Մատանէին ամենայն իմաստունք Բաբելացւոց, և ոչ կարէին զգիրն ընթեռնուլ, և ոչ(4) զմեկնութիւն նորա ցուցանել թագաւորին։ Յայնժամ ածին 'ի

(1) Տես 32 էջ 4 կանոն։

(2) Բ-ա-յ-ա-դ-է կը կոչուին այն բառերը՝ որ ուրիշ բառի մը հետ դրուելով անոր հետ միանալոյն բանը կը նշանակեն. բայց աւելի որոշ կերպով կը յայտնեն զայն։ Ուստի Նաբուգոդոնոսորի հայր նորա բառն տեսնս, բացայայտիչ է հայր նորա, վասն զի Նաբուգոդոնոսորին հետ բլլալը կ'իմացնէ։

(3) Այս ածականներն իրենց մէջ ընդհանրապէս կը պահեն ղ-ա-ր-ա-ծ- գոյականը։

(4) Ոչ մակբային հետ զեղչուած բայն է է-ր-է-ն։

ներքս զԴանիէլ. և ասէ թագաւորն ցԴանիէլ. Ես լուայ զքէն թէ կարող ես մեկնել մեկնութիւնս. և արդ եթէ կարիցես զգիրդ ընթեռնուլ և զմեկնութիւն դորա ցուցանել ինձ, ծիրանիս զգեցցիս և երրորդ 'ի թագաւորութեան իմում տիրեսցես։ Ասէ Դանիէլ. Արքայ, Աստուած բարձեալ զմեծութիւն և զթագաւորութիւն և զպատիւ և զփառս ետ Նաբուգոդոնոսորայ հօր քում, և յորժամ բարձրացաւ սիրտ նորա, անկաւ յաթոռոյ թագաւորութեան իւրոյ, մինչև ծանեաւ թէ տիրէ բարձեալն թագաւորութեան մարդկան։ Եւ դու, որդի նորա Բաղտասար(5), ոչ խոնարհեցուցեր զսիրտ քո առաջի Աստուծոյ։ Վասն այսորիկ յերեսաց նորա (անոր կողմէն) առաքեցաւ թաթ ձեռինն, և զգիրդ զայդ գրեաց։ Եւ այս ինչ է գիրդ՝ որ գրեալ է. Մանէ, Թէկէղ, Փարէս։ Մանէ, չափեաց Աստուած զթագաւորութիւն քո և վախճանեաց զնա. Թէկէղ, կշռեցաւ 'ի կշիռս և գտաւ պակասեալ. Փարէս, բաժանեցաւ թագաւորութիւն քո և տուաւ Մարաց և Պարսից։ Եւ 'ի նմին գիշերի սպանաւ Բաղտասար արքայ Քաղդէացւոց, և Դարեհ արքայ ա՛ռ զթագաւորութիւնն, որ էր ամաց վաթսուն և երկուց(6)։ Դանիէլ Ե.

30

ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ ՏՈՎԲԻԴԱՑ

Քաղցեալ, անօրէն
Ընկենուլ, նետել, յգետ
Մնալ, սպասել
Առնել ճաշ, ճաշ պալ (մեկու մը)
Ճնճղուկ, ընլուն մը (սերչէ)

Թափել, էնալ, տրնել
Այպն առնել, ծաղր ընել
Առաստաղ, պան ծածկը
Ծրտել, աղբ յգետ (ընլնոց)
Ջերմաջերմ, պատ պատ

---

(5) Տես 2 կանոն սոյն դասին մէջ։

(6) Տարիք ցուցնող բառերը սեռական հոլով բնութեան խնդիր կ'ըլլան։ Հոս ամաց բնութեան խնդիր է էր բային. Որ էր ամաց վաթսուն եւ երկուց (որ վաթսուն երկու տարու էր)։

Եւ Տ--ԲԷՐ[1] ողորմութիւնս բազումս արարի եղբարց ի-մոց՝ որ ընդ իսն էին՝ 'ի Նինուէ։ Զհաց իմ տայի քաղցելոց, և զձորձ իմ՝ մերկոց։ Եւ զոր (զով որ) տեսանէի ես յաղգէն իմմէ թէ մեռեալ էր, և ընկենուին զնա ---- պ--ղէն[2], ես թաղէի։ Եւ կամ թէ յորժամ սպանանէր զոք Սենեքերիմ արքայ դողանայի և թաղէի։ Եւ 'ի տունին մեծի արարին ինձ ճաշ մեծ, և բազմեցայ ուտել և ըմպել։ Ասեմ ես ցորդին իմ. Ե՛րթ ած դու քեզ յեղբարցն մերոց աղքատաց՝ զորս և գտանես, և ես մնամ քեզ։ Եկն և ասէ. Հա՛յր, մի ոմն յաղգէս մերմէ՝ ---- Ռ--ֆ-ել են ---- Նոր-[3] կայ 'ի հրապարակի անդ մեռեալ։ Եւ ի՛ գնալ-ն էր հ--ղ-ել[4] չոգայ առի զնա և բերի 'ի տուն իմ մինչեւ եմուտ արեգակն, փորեցի և թաղեցի զնա։ Եւ մերձաւորքն իմ այսն առնէին և ասէին. Արդ ո՞չ եւս երկնչի (ալ չը՞ վախնար) մեռանել վասն իրացս այսոցիկ (այս բաներուն համար). զի վասն որոյ հալածեցաւն (ինչ բանի համար որ հալածուեցաւ), դարձեալ եկեալ թաղէ զդիակունսն։ Ի նմին գիշերի դարձայ՝ իբրեւ թաղեցի, և ննջեցի ես պղծեալ --- ---[5] գաւթին և զերեսս իմ ոչ ծածկեցի։ Ոչ գիտէի թէ ճնճղուկք նստէին յառաստաղս անդ, և աչօք բացօք (բաց աչքերով) 'ի վեր հայէի, և ծրտէին ձագքն ջերմաջերմ յաչս իմ։ Եւ երթեալ իմ առ բժիշկս, ոչինչ օգնէին ինձ։

Տ-ՎԲԷՐ Ա—Բ

---

(1) Տ--ԲԷՐ բացայայտիչն է Ե-ին։ (Տես 35 էջ 2 կանոն)։

(2) Աբ---- նախադրութիւնն սեռական խնդիր կ'առնու։

(3) Այս խօսքին մէջ Նոր- աւելադրութիւն է, ---- յարաբերական դերանուան հետ կրկնուած իբրեւ զարդ. ---- Ռ--ֆ-ել են ---- Նոր-, կը թարգմանուի, որոյ ոտքերն փրթած են։

(4) Ինչպէս անցեալ դերբայներու՝ նոյնպէս եւ բայի մը յարակատար, գերակատար եւ սովորական անցեալ ժամանակաց եզակի գ. դէմքին հով՝ տէր բային սեռական կը դրուի։ Ուստի այս խօսքին մէջ ի՛ տէրբայի է գնալ-ն էր հ--ղ-ելին, իբր թէ ըսուած լինէր. Մինչչեւ նստակեալ էի Ե-։

(5) Տես 34 էջ 1 կանոն։

31

ԵՐԳ

ԱՐՏԱՍՈՒԲ ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿԱՆՆ

Արփիագեղ, աբեռոռ պէս գեղեցիկ
Ցոլանալ, գոռչ ցոլիլ (լուսոյ պէս)
Վերասլանալ, վեր թռչիլ
Սերարփին, սերովբէ
Երկնաբնակ, երկնից մէջ բնակող
Զօնել, նուիրել
Փրկանակ, փրկութեան գործիք՝ պատ-
Շիթ, կաթիլ [ճառ

Արտասուէ Յիսուս
Մայրենի 'ի ծոց (1)
Մըթագնի դըւարթ
Երեսաց իւրոց
Արփիագեղ լոյս։
Ցոլացեալ յերկնէ
Սերարփին հրեշտակ,
Զարդասուսաց նոր
Ցուկեղէն բաժակ
Ըղձէր ամփոփել (2)։

Եւ վերասլացեալ
Նըւիրէ Հօր զայն,
Արդ սովաւ, ասէ,
Լիցի փառաբանեան
Մահացուաց յուսալ (3)։
Իսկ հայրն երկնաբնակ (4)
Բաւէ՞ր արդեօք դա,
Այլ որդեակն իմ ինձ
Զարիւն իւր ցանկայ
Զօնել փրկանակ։

---

(1) Ի ծոց մայրենի (մօր ծոցին մէջ)։

(2) Այսպէս շարադրելով կարդա. Ամփոփէ ղէրն աբդասուսաց նոր յուկեղէն բաժակ կամ յուկեղէն բաժակի։

(3) Այսպէս կարդա, Մահացուաց լիցի յուսալ փառաբանեան կամ փառաբանեան յուսացեալ մահացուս (մարդիկ)։

(4) Զեղչուած է ան կամ պարտեանէ եր բայը։

32

ՍՈՂՈՄՈՆ ԽՆԴՐԻ ՅԱՍՏՈՒԾՈՅ ՁԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Փոխանակ, տեղը
Խելամուտ լինել, խելք հաւցնել
Հաճոյ թուել, աղէկ երեւնալ
Բան, բառ (ձէյ)
Փոխանակ զի, որովհետեւ
Ցետ քո, յետ եղեւեղ
Խնդրել զանձն (ուրեք), (ինչ-որ մը) կենդանը վերցնելու աշխատիլ

Երեւեցաւ Տէր Սողոմոնի 'ի քուն գիշերոյ, և ասէ. Խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ։ Եւ ասէ Սողոմոն. տէր Աստուած իմ, դու եղուր զծառայ քո թագաւոր Դաւթի հօր իմոյ (¹). և ես եմ մանուկ փոքր։ Տացես ծառայի քում սիրտ լսելոյ և դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելամուտ լինել 'ի մէջ բարւոյ և չարի։ Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի Տեառն, զի խնդրեաց Սողոմոն զայն բան։ Եւ ասէ ցնա Տէր. Փոխանակ զի խնդրեցեր յինէն զբանդ զայդ, և ոչ խնդրեցեր քեզ աւուրս բազումս, և ոչ խնդրեցեր քեզ մեծութիւն, և ոչ խնդրեցեր զանձինս թշնամեաց քոց. ահա եղուր քեզ սիրտ իմաստուն և հանճարեղ, իբրեւ զքեզ ոչ որ եղեւ յառաջ քան զքեզ և յետ քո ոչ որ յարիցէ նմանող քեզ։ Եւ զոր ոչ եւ խնդրեցեր՝ եղեւ, ընդ-ունեալ և զքո-ս (²)։

Գ. Թագ. Գ. 5—13

(¹) Փոխանակ Դաւթի հօր իմոյ (իմ Դաւիթ հօրս տեղ). Այս խօսքին մէջ պէտք է որոշէ ուշակերտը բացայայտիչն ու բացայայտեալը, գիտնալով միանգամայն թէ բացայայտիչ եւ բացայայտեալ շատ անգամ միեւնոյն հոլովով կը դրուին։

(²) Յարաբերականը շատ անգամ յարաբերեալէն առաջ ալ կրնայ դրուիլ։ Այս խօսքին մէջ ընդ յարաբերական դերանունը իւր յարաբերեալներէն՝ այսինքն ընդունեալ զքո-ս-էն առաջ դրուած է։ Պարզ կերպով պէտք էր ըսել եղեւ զոր ընդունեալ և զքո-՝ զոր ոչ եւ խնդրեցեր։ Իսկ թէ այս խօսքը թարգմանենք այսպէս. Ինչ որ չուզեցիր դու՝ զայն տուի քեզ, այսինքն՝ մեծութիւն եւ փառք՝ այն ատեն զքո-ս և ընդունեալ բառերն իբրեւ յայտնիչ կը նանչցուին զոր ին։

33

ԳՈՒԹ ՄԱՅՐԵՆԻ

Ցիս (մչ.), կ'աղաչէմ
Ի հասարակ գիշերի, կէս գիշերուան
Դիւեցուցանել, կամովն անուանել
Այգունն, առաքուան կանուխ

Ստնդիաց, կամ ուտող
Կտրել յերկուս, երկուսէ կորեալ
Խառվեցան աղիք նորա, գոռալ
Առնուլ, քերել [շրժել

Երէեցան երկու կանայք Սողոմոնէ (1), և ասէ մի կինն. Ցիս, Տէր իմ, ես և կինս այս էաք 'ի միում տան, և ծնայ 'ի տանն։ Եւ եղեւ յաւուրն երրորդի ծնաւ և կինս այս. և մեք առանձինն էաք, և ոչ ոք գոյր ընդ մեզ 'ի տանն՝ բաց 'ի մէնջ երկոցունց (մեր երկուքէն զատ), Մեռաւ որդի սորա 'ի գիշերի, քանզի ննջեաց 'ի վերայ նորա, և յարեաւ 'ի հասարակ գիշերի, և առ զմանուկն իմ 'ի գրկաց իմոց, և աղախին քո 'ի քուն էր, և ննջեցոյց զնա 'է ծոց է-րոյ (2), և զորդին իւր զմեռեալ ննջեցոյց 'ի ծոց իմում։ Յարեայ ընդ առաւօտն դիւեցուցանել զորդին իմ, և նա էր մեռեալ. և հայեցայ ընդ նա այգունն, և ահա չէր որդին իմ՝ զոր ծնայ։ Եւ ասէ միւս կինն. Ոչ, այլ որդի քո մեռեալն, և որդի իմ կենդանին։ Ասէ ցնոսա արքայ. Դու ասես թէ՝ Այս որդի իմ է՝ որ կենդանիս է, և որդի դորա մեռեալն. և դու ասես. Ոչ, այլ որդին քո մեռեալն, և որդին իմ կենդանին։ Եւ ասէ արքայ. Առէ՛ք առ իս զսուրն։ Եւ բերին զսուրն առաջի արքայի, և ասէ արքայ. Կտրեցէ՛ք զմանուկն զսոնդիաց զկենդանի (3)

---

(1) Հոս Սողոմոնի բառը սեռական չէ՝ ուստի եւ ոչ յատկացուցիչ, վասն զի կիներն Սողոմոնին չեն, այլ երկու կիներ երեւցան Սողոմոնի։ Ուստի Սողոմոնէ տրական հոլով բնութեան խնդիր է երեւեցան բային։

(2) Փոխանակ ըսելու 'է ծոցէ է-րոյ, 'է ծոցէ իմում, կրնանք ըսել. 'է ծոց է-րում, իմում եւ այլն, վասն զի է ով անորոշ հայցականը երբեմն է ով վերջանոլով տրականի տեղ կը գործածուի։

(3) Սոնդիաց եւ կենդանի ածականներուն վրայ կրկնուած է իրենց գոյականին նախդիրը։

յերկուս, և տուք զկէսն նորա դմա, և զկէսն նորա նմա։ Եւ պատասխանի եւ կինն՝ որոյ որդին կենդանին էր, և ասէ ցարքայ, քանզի խռովեցան աղիք նորա 'ի վերայ որդւոյն իւրոյ, և ասէ. Ցի՛ս, տէր, տուք նմա զմանուկն կենդանի, և մահու մի՛ սպանանէք զնա։ Եւ միւսն ասէր. Մի՛ է՛ լիցէ՝ և մի՛ դ-ր-(¹), կորեցէք ընդ մէջ (մէջ.քէն կորեցէք)։ Պատասխանի եւ արքայ և ասէ. Տուք դմա զմանուկն կենդանի, որ ասաց թէ տուք զդա նմա՝ և մահու մի՛ սպանանէք զդա, նա է մայրն դորա։ Գ. Թ-գ. Գ. 16—28

34

ԱՆԱՆԻԱ ԵՒ ՍԱՓԻՐԱ

Խորել, ծէջէն գ-ղն-ալ
Ո՞չ ապաքէն, չէ՞ դ՞ որ
Հանել զոգի, հոգէն էլէլ

Զի՞ է զի, է՞ն կայ որ, է՞նը-
Ահ, վ-ի
Ցոան կալ, ոգէ ելելլ

Այր ոմն Անանիա անուն հանդերձ կն-ա- է-ր-վ Ս-գէր-(¹), վաճառեաց ագարակ, և խորեաց 'ի գնոց անտի, գէ-ռ-ելվ Ա կն-ոջ(²), և երեր մասն ինչ, եդ առ ոտս առաքելոցն։ Ասէ Պետրոս. Անանիա, ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո ոգել զեղ Հոգւոյն սրբոյ Ա խ-ր-ել(³) 'ի գնոց գեղջն. ո՞չ ապաքէն մինչ կայրն (կեցած ատենը)՝ քո էր, և 'ի վաճառելն ընդ ո- էշ խանա-ռնե-մէ էր(⁴), զի՞ է զի եդիր 'ի սրտի քում զիրս զայս,

(¹) Ի՛ Ա դ-ր- սեռական բնութեան խնդիր են լիցէ էական բային, թէպէտ վերջի լիցէ բայր լռելեայն կ'իմացուի։ Պէտք է գիտնալ որ ոչ ամէն ատեն էական բայն սեռական խնդիր առնլով -ն-ն-ալ կը նշանակէ, մանաւանդ երբ այդ սեռական խնդիրը բայէն առաջ դրուած ըլլայ։ (Բաղդատէ 25 էջ 3 կանոն)։

(¹) Բացայայտիչը՝ որ է Ս-գէր-՝ իւր ն- բացայայտեալին հոլովովն դրուած է։

(²) Գործական հոլով անեռեւոյթներու համար տէրբային սեռական կը դրուի։

(³) Փոխանակ ըսելու՝ զէ -գէ-ցէ- գ- Հոգւոյն Սրբոյ Ա խ-ր-ցէ- եւ այլն։ (Տես 13 էջ 2 կանոն)։

(⁴) Ընդ նախադրութիւնը գործական խնդրով գ-ւէ կը նշանակէ։ Օր. Ընդ էլ-ն-ռնե-մէ գ-վէր (հու իշխանութեանդ տակ էր)։

ոչ ստեցեր մարդկան այլ Աստուծոյ։ Եւ լուեալ Անանիա զբանս զայնոսիկ, անկաւ և եհան զոգի. և եղեւ ահ մեծ 'ի վերայ ամենեցուն՝ որ լուան զայն։ Յոտն կացին երիտասարդքն և ամփոփեցին զնա և տարան թաղեցին։ Իբրեւ ժամք երեք անցին, և կին նորա ոչ գիտէր զինչ եղեալն էր, եմուտ 'ի ներքս։ Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. Ասա դու ինձ թէ՝ ՝ի՞նչ՝ փոխ զքեզ՝ վաճառեցէք։ (5)։ Եւ նա ասէ. Այո՛, ՝ի՞նչ՝ (6)։ Ասէ ցնա Պետրոս. Զի՞ է զի միաբանեցէք դուք փորձել զՀոգի Տեառն. Ահա ոտքն՝ որ թաղեցին զայրն քո 'ի դրան՝ հանցեն և զքեզ։ Եւ անկաւ անդէն առ ոտս նորա և եհան զոգի։ Մտին երիտասարդքն, գտին զնա մեռեալ, և հանին թաղեցին զնա առ առն իւրում։

Գործք. Ե. 1—11

35

ԻՂՁԲ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Ընտրել, լա՛ռ ՝ի՞ պէտ
Բնակակցել, ՝ի՞ դրդեալ քնակիչ
Լքանել (ելիք. յիքել (երեսե)
Տատրակ, ՝ի՞ զարանոյ պեսակէն թռչուն
Յարկ, տուն [մը (գուսրու)
Խնամարկել, խնամք տանիլ
Բոլորանուէր, բոլորովին նուէրուած
Օրհաս, դեռնելու օր (եմելը)
Յարատեւ, դիշեր պեսոց
Ոսկեձեղուն, յեղուն ոսկիէ

Ընտրեցի այո՛,
Ընտրեցի յաղթ կալ
Ի տան Աստուծոյ՝
Քան յոսկեձեղուն
Յարկս ամպարշտաց

Բնակակցել նոցուն (1)
Ո՞րպէս սիրելիք
Են յարկք քո, Աստուած,
Ուրո՞ զնրն ելիք (2),
Փափաքէր անձն իմ

(5) Տես 24 էջ 6 կանոն։
(6) Պէտք է իմանալ. Այնչափ փոխ վաճառեցաք։
(1) Նոցուն դերանունն ՝ի՞ զարանոյ բառին համար դրուած է։
(2) Կարդա այսպէս. Ա՞ստուած, ՝ի՞ զարանոյ յարիք ոչ՝ սիրելիք են՝ ՝ի՞ զարանոյ՝ ՝ի՞ զարանոյ՝ ՝ի՞ զարանոյ։ (ինչպէս սիրելի են քու յարկերդ անոր համար՝ որ իրենը թողուց)։

Ի գաւիթըս քո.
Արդ 'ի նմա հանդչիմ։
Զի եդիա զիւր տուն
Տառապեալ ճընճղուկ,
Եւ տատրակ զիւր բոյն։
Երանելի՛ են
Որ է տան տո՛մ սոպ
Ծ՚ոյ՛ տո բնակեն (3)
Երանեալ է այր՝
Ում դու խնամարկես,
Որ զրբոց ես հայր։
Արդ ընկալ զիս տէր,
Որ քեզ ընծայիմ
Բոլորանուէր։
Ի գաւիթըս քո
Լաւ է ինձ մի օր,
Քան բէ՛ր (4) արտաքոյ.
Ըստրուկ և գերի
Կեցից 'ի տան քում
Քան թէ տէր յերկրի։
Ասա վերջինն արեւ
Օրհաս յանկալի
Ծագեսցէ զինեւ։
Դու զողորմութիւն
Եւ զճշմարտութիւն
Ի սպառ սիրես դուն։
Եւ 'ի քոց ձրրից
Ոչ մերժես 'ի բաց
Որք գընան անբիծ։

---

(3) Այսպէս կարդամ. Երանելի են ծ՚ոյ՛ տո՛ր բնակեն սոպ 'ի տան տո՛մ. վերի խօսքին մէջ որ յարաբերական դերանունը իւր ծ՚ոյ՛ յարաբերական յառաջ դրուած է։ (Տես 39 էջ 2 կանոն)։

(4) Բէ՛ր՝ ածականին հետ լռելեայն կ'իմացուի սոսոր՝ (աւուրք բիւր)։

(5) Բայ մը ինչ հոլովով խնդիր որ պահանջէ, նոյն հոլովով խնդիր կ'առնու նաեւ նոյն բային որ՛դը կամ բայանը, եւ կամ անոր անցեալ դերբայն (Տես 20 էջ 1 կանոն)։ Ուստի Ցոսոլ բայը նախդրիւ տրական խնդիր պահանջելուն, Ը՚ոսոյեալը նոյն հոլով խնդիր առած է այսինքն 'ի ինչ։

36

ԵՂԻԱ ԵՒ ՈՂՋԱԿԷԶ ԻՒՐ

Կաղալ յերկուս հետս, երկու կողմն
Հեղուլ, ճաֆել [ֆն կողերն
Ցօշել, կոր կոր ընել
Կարդալ, օֆնուրեան կոնչել, պոռալ
Միջօրէ, կէս օր
Ողջակէզ, ամբողջ ղոհ
Շերտ, ճեղքուած փայտ
Դիզանել, (եղանել)
Երեքինել, երեք անգամ ըսել կամ
Գարշելի, կուռ [ընել, եւայլն
Մերձենալ յընդերեկս, իրիկուան
Այպանել, ծաղրել [մօտենալ

Մերձեցոյց Եղիա զամենայն ժողովուրդն և ասէ ցնոսա. մինչեւ ցե՞րբ կաղայք յերկուս հետս, եթէ տէր է Աստուած, երթայք զհետ նորա։ Եւ մնացեալ եմ մարգարէ Տեառն միայն, և մարգարէք Բահաղու՝ որք չորեք հարիւր և յիսուն։ Տացեն մեզ երկուս եղինս, և ընտրեսցեն իւրեանց զմին, և յօշեսցեն և դիցեն 'ի վերայ փայտից, և հուր մի՛ դիցեն և ես արարից զմիւսն եղնն և եդից 'ի վերայ փայտից. և հուր ոչ մատուցից։ Եւ կարդասջիք զանուն աստուածոյն ձերոյ, և ես կոչեցից զանուն տեառն Աստուծոյ իմոյ, և Աստուած՝ որ լուիցէ հրով, նա է Աստուած։ Եւ առին (մարգարէքն Բահաղու) զզուարակն՝ զոր ետ նոցա. և արարին և կարդացին զանուն Բահաղու յայդուէ մինչեւ ցհասարակ օր, և ասէին. Լուր մեզ, Բա՛հաղ, լուր մեզ։ Եւ ոչ դոյր բարբառ, և ոչ ունկնդրութիւն։

Եւ այպանեաց 'ի միջօրէին զնոսա Եղիա և ասէ. Մեծաձայն կարդացէք, զի Աստուած է. թերեւս զբօսանք ինչ իցեն նմա, կամ թէ 'ի քուն իցէ և յառնիցէ։ Եւ իբրեւ մերձեցան յընդերեկան, խօսեցաւ Եղիա ընդ մարգարէս դարշելեացն և ասէ, 'ի բաց կացէք, արդ ես արարից զողջակէզն իմ։ Եւ 'ի բաց կացին և գնացին։ Եւ ա՛ռ Եղիա երկոտասան քար և շինեաց զքարինան յանուն Տեառն, և եդեալ զշերտսն 'ի վերայ սեղանոյն՝ զոր արար, և յօշեաց զողջակէզն և եդեալ 'ի վերայ շերտիցն։ Եւ ասէ. Առէ՛ք ինձ չորս

սավորս ջրոյ և հեղէք 'ի վերայ ողջակիզիդ և 'ի վերայ շերտիցդ։ Եւ ասէ. Կրկնեցէք. և կրկնեցին։ Եւ ասէ. Երեքկնեցէք և երեքկնեցին։ Գնայր ջուրն շուրջ զսեղանովն։ Եւ աղաղակեաց Եղիա յերկինս և ասէ. Լուր ինձ, Տէր, լուր ինձ հրով, և ծանիցէ ժողովուրդ թէ դու ես Տէր Աստուած։ Եւ անկաւ հուր յերկնից և եկեր զողջակէզն և զշերտսն։ Իբրեւ եղեւ ամենայն ժողովուրդն, անկան (¹) 'ի վերայ երեսաց իւրեանց, և ասեն, Արդարեւ Տէր՝ նա է Աստուած, Տէր՝ նա է Աստուած։ Դ. Թագ. ԺԸ. 21—40

37

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ ՆԻՆՈՒԷԱՑԻՈՑ

Ցառնել (արի՛), ելանել, (տեղէն՝ տուն 'ի վաղիւ անդր, հեղեալ օրը [դէն
Վիճակ արկանել, վէճակ յիշել.
Վիշապ, ահագին՝ խաղը յանկ կամ օյ

'ի վաղիւ անդր, հեղեալ օրը
Քաղել ոգւոց, հոգւոյն տալը։
Երկայնամիտ, համբերող
Որդն, որդան, որդ

Եղեւ բան Տեառն առ Յովնան և ասէ. Արի և գնա 'ի Նինուէ, և քարոզեսջիր անդ, զի ել աղաղակ չարութեան նոցա առ իս։ Յարեաւ Յովնան փախչել յերեսաց Տեառն, էջ 'ի Յոպպէ, եգիտ նաւ՝ որ երթայր 'ի Թարսիս. և եմուտ 'ի նա, և Տէր յարոյց հողմ. եղեւ մրրիկ մեծ, և նաւն 'ի վըտանգի կայր 'ի խորտակել։ Երկեան նաւավարքն երկեալ մեծ (¹), և ասեն էրաւանէր (²) ընկերը իւր. Եկայք արկցուք վիճակս դիտասցուք վասն ո՞յր են չարիքս այս։ Արկին վիճակս, և ել

(¹) Երբ տերբային եզակի բառ մը ըլլայ՝ իսկ իմասը յոգնակի, (հանամանան) բայը թէ եզակի եւ թէ յոգնակի կրնայ դրուիլ, ինչպէս հոս կը տեսնուի։

(¹) Բայերն շատ անգամ իրենց արմատը կամ արմատին մօտ բառը հայցական հոլովով կ'առնուն՝ գործիականի տեղ. ինչպէս երկեան երկեալ մեծ (մեծ վախով վախցան)։ Հոս երկեալ հայցական բնութեան խնդիր է։

(²) Էրաւանէր բառն եզակի ձայնիւ իբրեւ յոգնակի ուղղական գործածուելով՝ բայն ալ յոգնակի կը դրուի։ Իւր սեռական եւ տրական հոլովներուն տեղ ալ կը գործածուի էրաւանէրն, յանախ եզակի ուղղականի ձեւն պահելով, եւ դուն ուրեմ կը գործածուի յոգնակի հոլովով։

վիճակն Յովնանու։ Առին զՅովնան և ընկեցին 'ի ծովն, և դադարեաց ծովն 'ի խռովութենէ իւրմէ։ Հրաման ետ Տէր կիտին մեծի կլանել զՅովնան, և էր Յովնան 'ի փոր կիտին ՝ԷՐԷ՝ ԴԷ՝՝ Ե ՝ԷՐԷ՝ ՓԷՂԷՐ՝(3)։ Հրամայեցաւ 'ի Տեառնէ Վէլ՝՝ Յ՝՝Ն(4), և եթուք զնա 'ի ցամաք։ Յարեաւ Յովնան և գնաց 'ի Նինուէ, քարոզեաց և ասէ։ Այլ եւս երեք աւուրք, և Նինուէ կործանեսցի։ Հաւատացին արք Նինուէացիք ՅԱստուած. զգեցան քուրձ, և դարձան յիւրաքանչիւր ճանապարհաց իւրեանց չարաց. Ետես Աստուած և զղջացաւ 'ի վերայ չարեացն՝ զոր խօսեցաւ և ասէ. Ով Տէր, գիտէի թէ դու ողորմած ես և գթած, երկայնամիտ և բազումողորմ, և զղջանաս 'ի վերայ չարեաց։ Եւ 'ի քաղաքէ անտի և նստաւ յանդիման քաղաքին։ Եւ հրաման ետ Աստուած դդմենուոյն, Եւ եւ 'ի վերայ գլխոյն Յովնանու՝ լինել նմա հովանի, և ուրախ եղեւ Յովնան 'ի վերայ դդմենուոյն։ Եւ հրաման ետ Աստուած որդան առաւօտուն 'ի վաղիւ անդր. Եհար զդդմենին և ցամաքեցաւ։ Անկաւ արեւն զգլխովն Յովնանու և քաղէին ոգիք նորա, և ասէր. Լաւ էր ինձ մեռանել քան զայս կեանս իմ։ Եւ ասէ Տէր. Դու խնայեցեր 'ի դդմենին՝ յոր ոչ եղեր աշխատ (որուն համար չաշխատեցար). ես ո՞չ խնայեցից 'ի Նինուէ, յորում բնակեալ է աւելի քան զերկոտասան բիւր մարդիկ՝ որ ոչ ծանեան զաջ և զահեակ իւրեանց.

Յ՝՝Ն՝՝

---

(3) Տես 23 էջ 3 կանոն։

(4) Երբեմն գոյական բառ մը՝ ածական կ'ըլլայ ուրիշ գոյական բառի մը։ Հոս Վէլ՝՝ ածական է Յ՝՝Ն՝՝։ Կրնայինք ըստ ոմանց Վէլ՝՝Ը բացայայտիչ տալ Յ՝՝Ն՝՝ եթէ Վէլ՝՝ Յ՝՝Ն՝՝ միայն ուղղակի ՝ԷՐ՝ (՝՝Ը՝՝) ձկան համար ներելի ըլլար ըսել. բաց ասոնց Վէլ՝՝ օյ ալ կ'ըսենք առանց որոշելու թէ որն է այն օյը։

Եղնիկ եւ Գէորգ Սկեւռացի կը հաստատեն թէ՝ Ս. Գիրքն Վէլ՝՝ կը կոչէ յաղթանդամ օձերն՝ կամ ծովային գազանները իրենց անհոռնի եւ խիստ մեծ հասակին համար. այս տեսութեամբ Վէլ՝՝ բառը աւելի ճիշտ կ'ըլլայ ածական տալ Յ՝՝Ն՝՝՝ քան թէ բացայայտիչ։

38

ԱՌԵՂԾՈՒԱԾ Ի ՅՈՎՆԱՆ

Առեղծուած, հանելուկ	Յատակ, խորը տեղը
Ընթանալ, վազել, տալել	Առասպել, հանելուկ
Անողոք, ընչաց	Գիտակ, գէտցող

Առանց քայլելոյ
Ընթացաւ ընդ ծովն(1),
Եւ չունէր նաւակ.
Անողոք է ջրոյ(2)
Թաղեցաւ ընդ ջրով
Ի ծովուն յատակ։
Զուրկ էր նա յոտոյ(3)
Մեռեալ ոչ դողով՝
Եւ ընդէր յոտոկ(4).
Ո՞վ էր այս մարդ(5)
Ասա դու ինձ արդ,
Եւ առասպելիս
Իմ գիտակ լինիս։

---

(1) Տես 29 էջ 2 կանոն։

(2) Ածականներն այլ եւ այլ նոլորով խնդիր կ'առնուն։ (Տես 7 էջ 3 կանոն)։

(3) Զուրկ ածականը՝ որ հոս սնորոգելի եղած է՝ իւր խնդիրն բացառական նոլով կ'առնու։

(4) Ընդէր յոտոկ (աղուոր տունչ կ'առնուր). յոտոկ (մաքուր) բառը որ ածական մ'է հոս իբրեւ մանբայ գործածուած է. վասն զի ածականներէն ոմանք իբրեւ մակբայ երբեմն կը գործածուին։

(5) Ո՞Վ բառը սնորոգելի է մարդոյն։ Պէտք է գիտնալ որ խօսքի մը մէջ անծանօթ բառ մը գտնելու համար գործածուած նուրցական բառերն՝ (ով, ինչ, որու, որմէ, եւայլն) այն անծանօթ բառին նոլովն ու պաշտօնը կ'ունենան։

29

ԵՕԹՆ ԵՂԲԱՐՔ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ

Նահատակիլ, փոքրիկ կորել
Անցանել ըստ օրէնս, օրէնքէ դուրս
Ստինք, ծիծ [անցնիլ
Սրամտութիւն, բարկութիւն
Կենդանւոյն (մկ.), ողջ ողջ
Տապակ, պապկիլը աման
Ջեռուցանել, փութցնել
Արգանդ, մօրը փորը
Փոխիլ յաշխարհէ, մեռնիլ
Վախճանիլ, մեռնիլ
Խորհրդական, խորհուրդ տուող
Անարատ, մաքուր
Զարաշուք, անգութ, անպարկեշ-
Յապաղել, ուշանալ
Սրտաբեկ լինել, վհատիլ
Կատարել, մեռնիլ

Դիպ եղեւ եղբարս եօթն՝ մարքն հանդերձ կալեալս՝ ածել յարքան ընտրուրքն (¹)։ Մի 'ի նոցանէ նահատակեցաւ յառաջագոյն, ըստ կրսաւ խօսիլ և ասէ. Մեք պատրաստ եմք 'ի մեռանել՝ քան անցանել ըստ օրէնս (²) հայրենիս։ Սրտմտութեամբ լէ (³) եղեւ թագաւորն. հրամայեր կենդանւոյն 'ի տապակն ջեռուցեալս իջուցանել։ Իբրեւ առաջինն փոխեցաւ յաշխարհէ, զերկրորդն 'ի տեղի տանջանացն մատուցանէին, և անդէն հարցանէին. Կերիցե՞ս խոզենի միս։ Նա պատասխանի ետ և ասէ. Ոչ։ Վասն այսորիկ և սա 'ի նոյն տանջանս տանջեալ՝ վախճաներ։ Յետ նորա զերրորդն ածին և զլեզուն խնդրէին։ Նա վաղվաղակի մատուցաներ, և զձեռսն քաջասիրտս տարածաներ, զի և թագաւորն ինքնին իսկ զարմացեալ լիներ վասն պարանոյն արդի փոքրիկն (⁴), զի առ ոչինչ զցաւսն հա-

---

(¹) Այսպէս կարդամ. Դիպ եղեւ ածել յարքան ընտրուրքն եղբարս եօթն կալեալս հանդերձ մարքն իւրեանց։ Հոս կալեալս (բռնուած) ածական է եղբարքին։

(²) Ըստ նախադրութիւնը անորոշ հայցականով դիպէ մը, սահմանէ մը դուրս կը նշանակէ։

(³) Լէ ածականը գործական հոլով խնդիր կ'առնու։

(⁴) Վասն փոքրիկն արդի պարանոյն, կամ վասն փոքրիկ արդի պարանոյն։ Առաջնոյն մէջ փոքրիկը յատկացուցչի ձեւով դրուած ածական մը կ'ըլլայ արդիին։ (Տես 12 էջ 3 կանոն)։

մարեցաւ։ Եւ սա իբրեւ փոխէր, չորրորդն 'ի տեղի մատուցեալ, 'ի նոյն տանջանս չարչարէին։ Մինչդեռ ոգիքն կըրատերոյ մանկանն առ իւր կային (երբ դեռ պզտիկ տղուն հոգին վրան էր) կոչեաց թագաւորն զմայրն, և աղաչէր լինել պարտաւոյն կենաց նորին խորհրդական (5), զի փրկեսցի։ Իբրեւ կարի շատ ստիպեաց, յանձն առ խօսել ընդ որդւոյն, և ասէ. Ողորմեաց ինձ, որդեակ իմ, յուշ լիցի քեզ (միտքդ ըլլայ, յիշէ.) զի կրեցի զքեզ ինն ամիս յարգանդի, և սնուցի զքեզ զերիս ամս 'ի գիրկս սահմանք։ Արդ՝ աղաչեմ զքեզ, որդեակ, մի զարհուրիր դու 'ի չարաչուք դահճէ այսի. այլ եղբարցն արժանի եղեալ, ընտրեա զմահ՝ քան զկեանս աշխարհի։ Եւ մինչդեռ մայրն զայս մխիթարութիւնս մատուցանէր, սկսաւ խօսել պատանեակն և ասէ. ո՞եմ կայք (որտե՞ւ կեցեր էք), զի՞ յապաղէք, զի՞ ինչ ընելոց (6) հրամանի թագաւորիդ, այլ հրամանաց հնազանդեալ եմ՞ օրէնաց հարցն Ղերոց(7)։ Ցայնչափ քաջութեան սրտի մանկանց եօթանեցունց սրտաբեկ լինէր թագաւորն։ Առաւել 'ի վերայ կրտսերոյն դառնապէս տանջանս մատուցանէին. սակայն և սա անարատութեամբ և սրբութեամբ՝ յուսացեալ 'ի Տէր՝ մեկնեցաւ յաշխարհէ։ Զհետ որդւոյն և մայրն երանելի 'ի նոյն օրէնս կատարեցաւ։

Բ. Մ-կ. Զ.

---

(5) Խորհրդական լինել կենաց պարտաւոյն։ Վերոյգրելոյն մէջ նորին աւելցուրիւն է պարտաւոյն համար դրուած։

(6) Երբոր ըսել (մտիկ ընել) նշանակէ չէզոք բայ է, եւ վերջանոլով տրական բնութեան խնդիր կ'առնու։ Այսպէս կան Բանի մը բայեր՝ որ իրենց նշանակութիւնը փոխելով երբեմն ներգործական են եւ երբեմն չէզոք. Օր. Տալ բայը երբ բուն իւր նշանակութիւնն պահէ՝ ներգործական է, իսկ երբ նշանակէ հարբեցնել՝ չէզոք է. նոյնպէս Բաղալ բայը երբ նշանակէ ջնջել եւայլն ներգործական է, իսկ երբ նշանակէ դիրքի անձի միայն վերաբերելով՝ չէզոք կ'համարուի։

(7) Կարդա. Այլ հնազանդեալ եմ՞ հրամանաց օրէնաց հարցն Ղերոց (այլ ենազանդած եմ մեր հայրց օրէնքի հրամաններուն)։ Այս խօսքին մէջ հրամանաց տրական բնութեան խնդիր է հնազանդեալ եմ՞ բային. օրէնաց յատկացուցիչ է հրամանացին, եւ հարցն յատկացուցիչ է օրէնացին։ Վասն զի պիտի հարցնէ աւակերտը, որին հրամաններուն — օրէնաց։ Որին օրինաց — հարցն Ղերոց (մեր հայրերուն)։

40

ԴԱՒԻԹ ԵՒ ԱԲԻՍՈՂՈՄ

Երիվար, Յե
Պատուիրակ, պատգամաւոր
Եղջեր (աժ.), եղջերաբեղջերաժ քող)
Հետիոտս (մկ.), ոտոտվ
Զառ 'ի վեր, դառ վեր
Պարտիզ, յաղբոտել
Հանդէս առնել զօրուն, զբաղբհամարել, ուլէ անցընել
Զորի, (գոռբեր)
Թաւ, ոսոսերբ շոտ (սբէ)
Վիհ, անդունդ, ձեծ քոս
Բոկ, բոպէկ

Արար Աբիսողոմ կառս և երիվարս, և առաքեաց պատուիրակս յամենայն ցեղս Իսրայելի, և ասէ. 'ի ըսել յեր (1) ըղձային եղջեր փողոյ. ասասջիք եթէ թագաւորեաց Աբիսողոմ։ Եւ եղեւ ժողովուրդ բազում երթեալ ընդ Աբիսողոմայ։ Ասէ Դաւիթ ցամենայն ծառայս իւր. Արիք և փախիցուք։ Եկ արքայ և ամենայն տուն նորա հետիոտս, եկանէր ընդ զառ 'ի վերն Զիթենեաց, եկանէր և լայր, և ինքն երթայր բոկ։ Եւ Աբիսողոմ և ամենայն Իսրայել մտին յԵրուսաղէմ։ Եւ Դաւիթ եհաս 'ի բանակս, և հանդէս արար զօրուն՝ որ ընդ նըմա, և կացոյց 'ի վերայ նոցա հազարապետս և հարիւրապետս։ Պատուէր եա արքայ և ասէ. Խնայեսջիք 'ի պատանեակ էմ Աբէսողոմ (2)։ Եղեւ կռիւ յանտառին Եփրեմայ, և պարտեցաւ անդ զօրն Իսրայելի առաջի ծառայիցն Դաւթի։ Դիպեցաւ Աբիսողոմ առաջի ծառայիցն Դաւթի, և էր հեծեալ 'ի ջորւոջ իւրում. եմուտ ջորին ընդ թաւ կաղնեաւ մեծաւ, պատեցաւ գլուխս նորա ընդ կաղնեաւն, և կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր (3), և ջորին անց 'ի ներքոյ նորա (անոր տակէն)։ Եւ եռեաս այր մի և պատմեաց Յովաբայ։ Առ Յովաբ երիս նետս և եհար զնոսա 'ի սրտի Աբիսողոմայ, և ընկէց

---

(1) Տես 14 էջ 4 կանոն։

(2) Տես 35 էջ 2 կանոն, բաղդատէ նաեւ (39 էջ 1 կանոն)։

(3) Ընդ նախադրութիւնը՝ շաղկապով կապուած երկու անորոշ հայցականներու առջեւ դրուելով կը նշանակէ (երկու բանի) ինչ տեղ։

զնա 'ի վիհ մեծ յանտառին։ Եւ եհաս Քուսի և ասէ ցարքայ. Աւետիք պեռռն էմոյ ոբէոյէ (4), զի արար Տէր իրաւունս։ Ասէ արքայ. Երթ ողջոյն էջէ մանկանն էմոյ Աբիսողոմայ (5)։ Եւ ասէ Քուսի. Եղիցին իբրեւ զմանուկն Թշնամիք տեառն իմոյ արքայի։ Խռովեցաւ արքայ և ելաց, եւ այսպէս ասէր 'ի լալ իւրում. Որդեակ իմ Աբիսողոմ, Աբիսողոմ որդեակ իմ. ո՞ տայր զմահ իմ փոխանակ քո, ես փոխանակ քո, Աբիսողոմ որդեակ իմ, որդեակ իմ Աբիսողոմ։

Բ. Թագ. ԺԵ—ԺԸ

ԵՐԳ

Ի ԾՆՈՒՆԴ ՓՐԿԶԻՆ

ՎՐՈՑՐ ԵՒ ԱՌԱՆ ՀՈՎԻՒԲ Ի ԲԵԹՂԵՀԷՄ

Նորանչան, ղաբմանալի
Վարսամ, գէսաւոր սոպղ
Գերապանծ, խէսոպ պանծալի
Օ՜ն առնուլ, փաղաքրուել
Երկնահանգէտ, երկնէց նման
Ամեալ զմտաւ, տարածեալ, խորհէլ
Վարանիլ, անձրկէլ, ղաբուել

Մանկացեալ, էբրեւ մանուկ ծնաց
Աղքատին, խեղճ, ոդէսոպ
Ներկուռ, գէսպուռն, վարժ
Օձասպան, օձը՝ սոպանն սպաննող
Հարկանել նուագ, երգ ղաբնել
Մեծարգոյ, պատուաւոր
Աւետարանել, սաեռեալ փարոզել

(4) Տես 39 էջ 1 կանոն։

(5) Երթ ողջոյն էջէ մանկանն էմոյ Աբիսողոմայ։ Այս խօսքին մէջ մանկանն տրական բնութեան խնդիր է էջէ բային. պէտք է թարգմանել. Միթէ կենդանի (ողջ առողջ) է Աբիսողոմ զաւակս։

ՎՐՈՅՐ

Գիտիցե՞ս, Առան,
Զի ծնաւ մեզ արքայ,
Լոյս նորանշան
Զիւրեւ ցոլանայ։
Վարսամ 'ի յերկնէ
Զեղեամբ 'է հրէշ (1)
Աւետարանէ
Փրկիչ աշխարհի։
Արքայք գերապանծ
Առ նա խոնարհին,
Եւ զօրք 'ի բարձանց
Նուէրս բերեալ։ Դոն (2)
Օն ասելոյ Ս հրէշ (3)
Նոցին արդ ըղձեա,
Մատուցուցուցեալ նշուէր
Ցայրն երկնահանգեալ (4)

ԱՌԱՆ

Ըղձոյն իսկ և իմ
Ածեալ ըղմբտաւ՝
Այլ յոյժ վարանիմ
Եթէ զինչ բնաւ
Հովիւք չքաւորք
Տանել կարիցեմք
Առ որ թագաւորք
Ի յայց գան վրսեմք։

ՎՐՈՅՐ

Մի՛ ինչ վարանիր։
Ոչ գանձս 'ի հովուաց
Խընդրեսցէ 'ի ձիր
Մանկացեալն Աստուած։
Այլ մեր աղքատինք
Այս լիցին նըւէրք
Առնում ես սրբինք։
Դու ներկուռ 'ի յերդ՝
Երգեա զյաղթանակ
Գառինն օձասպան,
Մինչ ես ըղնքուագ
Հարից հովուական։
Եւ քան զամենայն
Նըւէր մեծարգոյ,
Լիցի մանկանն այն,
Երգըս մեր հաճոյ։

---

(1) Տես 43 էջ 5 կանոն։

(2) Լէնէն կամ Խոնարհէն բայը զեղչեալ է։

(3) Անցեալ դերբայներու fով տէր բային սեռական հոլով կը դրուի։ (14 էջ 1 կանոն)։

(4) Մատուցուցուցեալ նուէր յայցն երկնահանգեալ (նուէր տանիմ դէպ 'ի այն երկնաանման այրը)։

42

ԴԱՆԻԷԼ ԵՒ ԹՇՆԱՄԻՔ ՆՈՐԱ

Ձիւթ, (ղէֆԸ)
Հարկանել, ղբՆԵԼ, ԽՈՌԵԼ
Կուտիլ, ԲՈՂՈՔԵՄԲ ԺՈՂՎՈՒԷԼ
Տալ 'ի ձեռս, ՅԱՆՁՆԵԼ, ՄԱՊՆԵԼ
Տագնապել, ՆԵՂՈՒԷՆ՝ ՎԽԷ ԳՈԼ
Հարկաւ, (մկ.) ՈՊԷՊՈԵԼՈՎ
Պատրուճակ, ՂՈՀԷ կամ ՈՊԵԼՈ-
Վաղվաղակի, ՇՈՊՈՎ [ԿԵՆԴԱՆԷ
Աչխարել, ԼԱԼ ՈՂԲՈԼ
Գէշ գէշ պատառիլ, ԿՈՐԸ ԿՈՐԸ ԸԼԼԱԼ

Էր վիշապ մի մեծ, և պաշտէին զնա Բաբելացիքն։ Ասէ թագաւորն ցԴանիէլ. Միթէ զդմանէ՞ ասիցես թէ պղնձի է. ահաւասիկ կենդանի է, ուտէ և ըմպէ. արդ եկ պագ դմա երկիր։ Ասէ ցնա Դանիէլ. Ես Տեառն Աստուծոյ իմոյ երկիր պագանեմ, զի նա է Աստուած կենդանի։ Բայց դու, ա՛ր-քայ, տուր ինձ իշխանութիւն, և սպանից զվիշապդ ՈՐՈՆՑ ՈՐՈՅ ԵՒ ՓՈՐՈՂՆԷ(¹)։ Եւ ասէ թագաւորն. Տո՛ւր։ ԷՂ(²)։ Եւ ա՛ռ Դանիէլ իւղ, ձիւթ և ճարպ և մազ, և եփեաց 'ի միասին և արար գնդակս, և եհար 'ի բերան վիշապին, և իբրեւ կերաւ՝ պայթեաց վիշապն։ Իբրեւ լուան Բաբելացիքն, բարկացան յոյժ, և կուտեցան 'ի վերայ թագաւորին և ասեն. Հրեայ եղեւ ԹԱԳԱՒՈՐՆ (³). ԶԲԷԼ կործանեաց, և զվիշապն սպան, զքուրմն կոտորեաց։ Եւ ասեն ցթագաւորն. Տուր մեզ 'ի ձեռս զԴանիէլ, ապա թէ ոչ՝ սպանանեմք զքեզ և զտունքո։ Իբրեւ ետես թագաւորն եթէ կարի տագնապեն զնա, հարկաւ 'ի ձեռս ետ նոցա զԴանիէլ։ Եւ նոքա արկին զնա 'ի գուբն առիւծուց, և անդ էր զվեց օր (⁴)։ Էին 'ի գբին եօթն առիւծք, և տային նոցա հանապազ երկուս մարդս և եր-

---

(¹) ԱՐՈՆՑ նախադրութիւնը սեռական հոլովով խնդիր կ'առնու։
(²) Ձեղչում կայ. պէտք է ըսել. Տուեալ լէջ բեզ (ԸՆԴԷՐ ԴԵՐ ԸԼԼՈՅ կամ ԻՆԴՐՈՆԴ ԼԸ ԸՆԴՀԵՏ)։
(³) Տես 9 էջ 3 կանոն։
(⁴) Տես 23 էջ 3 կանոն։

կուս պատրուճակս. բայց յայնժամ ոչինչ արկին նոցա, զի վաղվաղակի կերիցին զԴանիէլ։ Եւ թագաւորն եկն յաւուրն եօթներորդի աշխարել զԴանիէլ։ Իբրեւ եկն 'ի բերան գրոյն, և հայեցաւ և ետես զի նստեր Դանիէլ, աղաղակեաց 'է յոյն ձայն (5) և ասէ. Մեծ ես, Տէր Աստուած Դանիէլի, և չիք այլ ոք բաց 'է քեզ (6)։ Եւ առ զնա 'ի վերս։ Եւ զՀնասակարս կորստեան նորա արկին 'ի գուբն. և դէպ դէպ պատառեցան նոյն ժամայն առաջի նորա։ Դան. ԺԴ. 22—41

43

ԳՈՂԻԱԴ ԵՒ ԴԱՒԻԹ

Այլազգի, օտար ազգ (ըստ Հրէից՝ Փղշտացի։
Ճակատել, պատերազմի շարուել
Ճակատ, պատերազմական զօրաց շարք։
Մենամարտել, երկու մարդ առանձին կռուել
Հարկանել, խոցել, դաստնել, ծեղել
Ցուպ, (գեղնէկ)
Ողորկ, քայլուն (հարթ)
Հեղեղատ, յորմէ ձեզ անցնող ջուր
Մախաղ, (ջանթա)
Պարս (սափան)
Խարտեաշ, (գունդալ)
Գեղարդն, նիզակ
Ասպար, վահան
Պարսաքարել, պարսավ տալ նետել
Սաղաւարտ, պատերազմի գլխոնոց
Զահի հարկանիլ, վանուել

Ժողովեցին այլազգիքն զբանակս իւրեանց 'ի պատերազմ (պատերազմի համար), և Սաւուղ և արք Իսրայելի ճակատեցան 'ի պատերազմ ընդդէմ այլազգեացն։ Եւ ել այր զօրաւոր 'ի ճակատէ այլազգեացն՝ Գողիադ անուն նորա. եկն եկաց, ձայն ետ 'ի ճակատն Իսրայելի և ասէ ցնոսա. Ընդէ՞ր ելանէք ճակատել 'ի պատերազմ ընդդէմ մեր։ Ընտրեցէք

(5) Նախդրիւ տրական երբեմն կը գործածուի գործիական հոլովի տեղ։ Հոս Աղաղակեաց 'է յոյն ձայն բառաց փոխանակ ասելու՝ Աղաղակեաց յոյնէ ձայնս։

(6) Բաց կամ բայց նախադրութիւնը բացառական հոլովով խնդիր կ'առնու։

դուք ձեզ այր մի, և ես և նա ՄՆՈՄԲՊԷՍՈՍ[1] երկոքեան. եթէ կարասցէ հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ 'ի ծառայս[2]։ ապա թէ ես յաղթեցից, եղիջիք դուք մեզ 'ի ծառայս։ Իբրեւ լուաւ Սաւուղ և ամենայն Իսրայէլ[3] զբանս այսպազգւոյն, շահէ հարան[4] եւ երկեան յոյժ։ Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Ծառայ քո երթիցէ և մարտիցէ ընդ այսպիսւոյն ընդ այնմիկ[5]։ Տէր Աստուած՝ որ ապրեցոյց զիս 'ի ձեռաց այսպազգւոյն 'ի ձեռաց արջոյն, ապրեցուսցէ զիս 'ի ձեռաց այսպազգոյն այնորիկ։ Ասէ Սաւուղ. Երթ, և Տէր եղիցի ընդ քեզ։ Եւ առ զցուպն իւր 'ի ձեռին իւրում, և ընտրեաց իւր հինգ քարինս ողորկս 'ի հեղեղատէն և եդ զնոսա 'ի հովուական մախաղին, և զպարան 'ի ձեռին իւրում, և մերձեցաւ առ այրն այսպազգի։ Եւ գնայր և գայր այսպազգին և մերձենայր առ Դաւիթ, և այր վահանակիր առաջի նորա։ Իբրեւ հայեցաւ և ետես զԴաւիթ՝ արհամարհեաց զնա, զի էր պատանեակ խարտեաշ և աչօք գեղեցիկ, և ասէ. Զիմարդ, շո՞ւն եմ ես, զի ցպով և քարամբք գաս 'ի վերայ իմ։ Եկ առ իս, և տաց զմարմին քո թռչնոց երկնից և գազանաց երկրի։ Եւ ասէ Դաւիթ ցայսպազգին. Դու գաս 'ի վերայ իմ սրով գեղարդեամբ և ասպարաւ, և ես գամ 'ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց։ Եւ աճապարեաց, ձգեաց զձեռն իւր 'ի մախաղն և առ անտի քար մի, և պարսաւքարեաց և եհար զճակատ այսպազգ-

---

(1) Եթէ խօսքի մը մէջ տէր բայիներ տարբեր դէմք են, բայը յոգնակի կը դրուի, ու դէմքով՝ Ես-ոդ-դէ- դէմք ունեցող տէրբայիին հետ կը համաձայնի։ Ինչպէս, Ես և Նա ՄՆՈՄԲՊԷՍՈՍ խօսքին մէջ երկու տարբեր դէմքի տէր բայիներ գտնուելով՝ ՄՆՈՄԲՊԷՍՈՍ բայը յոգնակի դրուած է, համաձայնելով Ես- դերանուն տէր բայիին դէմքին։ Պէտք է գիտնալ որ Առաջին դէմքը որ է (ԵՍ) նախապատիւ է Երկրորդ դէմքէն՝ որ է (ԴՈՒ), եւ երկրորդն ալ նախապատիւ է Երրորդ դէմքէն որ է (ՆԱ)։

(2) Երբ գոյականը բառ մը -ՈՒԹԻՒՆ ըլլայ, կրնայ նախդրիւ տրական կամ է ով անորոշ հայցական հոլովով դրուիլ։

(3) Բաղդատէ 19 էջ 3 կանոն։

(4) Հարէ-ՆԷԼ բայը Ը նախդրով վերջանոլով տրական ԲՆ-ՐԷՆ ԷՆԴԷՐ կ'առնու։

(5) Ածականը իր գոյականին նախդիրն իր վրայ ալ առած է։ (Տես 8 էջ 2 կանոն նաեւ 17 էջ 3 կանոն)։

ւոյն. և եմուտ քարն ընդ սաղաւարտն 'ի ճակատն, և անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր։ Ընթացաւ Դաւիթ, առ զնոցին սուսեր, և սպան զնա և եհատ զգլուխ նորա։ Իբրեւ տեսին այլազգիքն թէ մեռաւ զօրաւարն նոցա, փախեան. և արք Իսրայելի յարձակեցան զհետ նոցա և կոխեցին զբանակս նոցա։ Ա. Թագ. ԺԷ.

44

ԵՐԿԱՅՆՄՏՈՒԹԻՒՆ ՅՈԲԱՅ

Ուստը, մանչ զաւակ
Լուծք եզանց } զաւէտ մը եղ
Հարկիք եզանց }
Մատակ, էգ (տէղէ)
Արօտական, արածողաց
Սպաս, կաբաւէտ տան
Վարել, հողը հերկել, վարուցան ընել
Դերեվար, գերէ տանող՝ բռնող
Զաղրութիւն, աղտոտութիւն
Բացական, հեռու, բաց տեղ կեցող
Պատիկ, պաշտէլ [յակող (զբտ)
Ասպատակաւոր, յափշտակելու յար-
Օթագանալ, գերեալը ճանչ անցընել
Ասպատակել, յափշտակելու կամ
Անկանիլ, փլուիլ [ուերելու յարձակիլ
Վարս, մաղ
Անդրէն, դարձեալ, հան
Կեղ, խոց, ուռեցք
Աղբեւք, աց, (ղեօփլեւ)
Ժուժկալել, դիմանալ
Զարտչար (ած.) խիստ գեղ
Հարկահար, ծառայ կամ աղախին
Ամեցուցանել, ծերցընել
Ցաճախութիւն, շատութիւն ուժեալը

Այր ոմն էր յԱւսիդ աշխարհի, որում անուն էր Յոբ, և էր այրն այն ատուածապաշտ։ Եղեն նորա (¹) ուստերք եօթն և դստերք երեք, և էին խաշինք նորա եօթն հազար, ուղտք երեք հազար, լուծք եզանց հինգ հարիւր, էշք մատակք արօտականք հինգ հարիւր, և սպասք բազում յոյժ։ Հարկիք եզանցն վարէին և էշքն մատակք արածէին առ նոսօք (²), և եկին գերեվարքն և գերեցին զնոսա և զմանկտին կոտորեցին սրով։ Հուր անկաւ յերկնից և այրեաց զհօտսն, և զհովիւսն

(¹) Տես 25 էջ 3 կանոն։ (²) Տես 24 էջ 1 կանոն։

ը-ՙ Ն-ՙ՚ ՀՐԷՆ-ԿԷ (3) ԵԿԵՐ։ Ասպատակաւորք ասպատակեցին և պատեցան զուղտուքն և գերեցին զնոսա և զմանկտին կոտորեցին սրով։ Մինչդեռ ուստերքն և դստերքն ուտէին և ըմպէին ՝՝ ԵՐԷՅՈ-ԵՂԲՕՐ (4) իւրեանց, յանկարծակի հողմն մեծ եկն յանապատէ և եհար զչորեսին անկիւնս տանն, և անկաւ տունն 'ի վերայ որդւոցն, և վախճանեցան։ Յարուցեալ Յոբ՝ պատառեաց զհանդերձս իւր, և կտրեաց զվարսս գլխոյ իւրոյ, և անկեալ 'ի գետին՝ երկիր եպադ Տեառն և ասէ. Մերկ եկի ես յորովայնէ մօր իմոյ, և մերկանդամ դարձայց անդրէն։ Տէր ետ և Տէր առ, որպէս Տեառն հաճոյ թուեցաւ՝ նոյնպէս և եղեւ, եղիցի անուն Տեառն օրհնեալ։ Եւ սատանայ եհար զՅոբ չարաչար կեղով յոտից Ն-Ղ-Ը-ՐԸ-Ի (5). և նստէր յաղբեւս արտաքոյ քաղաքին։ Իբրեւ բազում ժամանակ անցանէր 'ի վերայ (վրան շատ ժամանակ անցաւ), ասէ ցնա կինն իւր. Մինչեւ ցե՞րբ ժուժկալեալ ասիցես թէ ահա համբերեցից տակաւին։ Դու ինքնին 'ի զաղրութիւն որդանց նոտիս օթագայեալ բացական. և ես մոլորեալ և հալկահար, Ա-Ռ-ՆԵ 'Ի Ա-Ռ-Ն-ԵԼ 'Ի Ա-Ղ-Ա-ՆՔ (6), սպասեմ թէ ե՞րբ մոռանիցէ արեգակն, զի հանգեայց 'ի տառապանաց իմոց՝ որ այժմ պատեալ են զԷ-Ն-Ի-Ն (7)։ Աղէ, ասա բան ինչ 'ի Տէր, և վախճանեաց։ Եւ նորա հայեցեալ ընդ նա՝ ասէ. Եթէ զբարիսն ընկալաք 'ի ձեռանէ Տեառն, չարեացս ո՞չ համբերիցեմք։ Եւ յայսմ ամենայնի՝ որ ինչ անցք անցին ընդ նա (ինչ անցքեր որ գլխէն անցան), ոչ մեղաւ Յոբ ա-

(3) Ը-Ղ- նախադրութիւնը վերջանոլով տրական խնդրով Հ-Ն-Հ-Ղ (կէօրէ) կը նշանակէ։

(4) Տես 34 էջ 1 կանոն։

(5) Մ-Ն-Ի- նախադրութիւնը ց կամ է նախդիր հայցական խնդիր կ'առնու։

(6) Երբ բառ մը երկու անգամ կրկնել պէտք ըլլայ՝ (ոչ թէ զօրութեան կամ զարդու համար)՝ երբեմն զաս եւ երբեմն մի եւ նոյն հոլովով, անոնցմէ մին միայն պահանջուած նախդիրը կ'առնու։ Ուստի, Տ-Ա-Ռ 'Ի Ա-Ռ-Ն-Ի- Ա-Ղ-Ա-ՆՔ խօսքին մէջ՝ կը տեսնեմք որ Ա-Ռ- եւ Ա-Ղ-Ա բառերն նախդիրս տրական ըլլալով՝ իրենց է նախդիրը չեն պահած՝ ու միայն բացառականներու վրայ դրուած է այն։

(7) Գործիական հոլովի վրայ դրուած Զ նախդիրը Բ-Ը-Ը-Է, Վ-Ս կը նշանակէ։

ռաջի Տեառն։ Եւ Տէր աճեցոյց զՑոբ, և եռ կրկին քան որչափ ինչ էր յառաջագոյն Ցոբայ(8) 'ի յաճախութիւն. ծնան նմա ուսաներք եօթն և դստերք երեք. եռեռ զորդիս իւր և զորդիս որդւոց իւրոց, և վախճանեցաւ ծերացեալ և լցեալ աւուրք (յոլովաժ օրերով)։ Ճոբ. Ա.—բ. ԻԲ

45

ԶԳԱՐՈՒՆ ԵՒ ԶԱՄԱՌՆ ԴՈՒ ՍՏԵԼԾԵՐ

Լիր, Բովանդակութիւն
Հաստել, ապեղծել
Դիրել, ծէծ տալ, անանել
Երկնառաստ, երկնքէն առաք եկած
Ոռոգիլ, ջրուել
Սնհատ, անհատնում
Վաղորդայն, (մկ.) վաղն (առաւօտ)
Ատոք, լեցուանկեկ (ցորեն)
Ծածանիլ, շարժիլ ծեղմ հողմէ
Վարսագեղ, գեղեցկի ճերեկեր
Կողր, երք, սար (գալ)
Որսընդոստ, որսորդաբար վերց ցարդ-
Զետեղիլ, հաստատուիլ [էն ցնող
Շանթ, կայծակ
Մայրի (լամ սղաճի)
Բարձրատաստ, սարերը բարձր
Շնչել, փչել
Հիւսիսի, հիւսիսային հովը
Համասփիւռ, ամէն կողմ սփռուած
Մէգ, մառախուղ (բուռ)
Սկանակիտ, գայլուն, մատուր
Կայլակել, բղխել, վազել (ջրէ)
Վհիտ, յարակ, մատուր
Ծաւալիլ, պարծանալ
Եղտիւր, ջրոտ տեղ
Սփնածիր, երկրէս ընդլայնուած

Քո, Տէր, քո է տիւ
Եւ քո է գիշեր.
Դու զաշխարհ լրիւ
Իւրով հաստեցեր։
Ամառն և գարուն
Հաստատեալ կան քեզ,
Քեզ շրջան առնուն
Լուսին և արեւ։
Ոչ ծաղկունք դիւին
Ի ցող երկնառաստ,
Ոչ բոյսք ոռոգին
Ցանցրեալ 'ի յանհատ(1)։

(8) Քան որչափ ինչ էր Ցոբայ (Տես 25 էջ 3 կանոն)։
(1) Տես 54 էջ 5 կանոն։

Եթէ ոչ դու զայն
Իբր ըզմարդարիտ
Սրփռեռ վաղորդայն
Ընդ լեառն ընդ հովիտ (2)։
Թեւ ցորեան ատուք
Ծածանի 'ի հերկ,
Ծանրանան մերոգաք
Վարսագեղ կողերք։
Ի հրամանաց քոց
Շանթ որոտընդոստ
Ճայթէ 'ի յամպոց
Ի մայրիս բարձրոստ։
Մերթ չընչէ զերփիւռ,
Մերթ խիստ հէ՛ռ-ռէ՛ռ (3)։

Ծածկէ համասփիւռ
Մէգ զերեսս երկրի։
Ասա ականակիտ
Կայլակէ աղբիւր,
Անդ վրտակ վրճիտ
Ծաւալի յեղտիւր։
Ամենածիր 'ի քէն
Փակեալ Ովկիան,
Եւ ոչ անցանեն
Ալիքն ըստ սահման (4)։
Ի քէն ամենայն
Զափով և թըւով
Զեռեղեալ եղան
Ընդ ցամաք՝ ընդ ծով։

46

ՋՐՀԵՂԵՂ

Սարջանալ, ղղջալ
Ջնջել, սրբել, կորուսանել
Ապականութիւն, փեշրութիւն
Ապականել, եղծանել, ոչնչացնել
Տապան, նոյի նաւը
Խորշ, ծակ, խոռոչ
Նաւթ, (նէֆթ եղէգ)
Հասակ, մարդէն, բնակիչ
Սահանք, ըրէ սասարկ հոսանք
Վերացուցանել, վեր հանել
Ընդունք, ելնի ծակեր
Զորեքկուսի, (արեւելքն արեւելէ)

Իբրեւ ետես Տէր Աստուած եթէ բազմացան չարիք մարդկան 'ի վերայ երկրի, սարջացաւ զի արար զմարդն՝ և ասէ. Ջնջեցից զամենայն մարմին՝ զոր արարի. մի միասցէ ոգի իմ 'ի մարդկանդ յայդմիկ, վասն լինելոյ դոցա մարմին։ Բայց

(2) Տես 10 էջ 4 կանոն։
(3) Հէ՛ռ-ռէ՛ռ բառն ուղղական է՝ կը գրուի նաեւ հէ՛ռ-ռ (Տես 30 էջ 4 կանոն)։
(4) Տես 48 էջ 2 կանոն։

Նոյ՝ այր արդար կատարեալ, հաճոյ եղեւ Աստուծոյ։ Ասէ Տէր Աստուած ցՆոյ. Ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է, զի լցաւ երկիր ապականութեամբք 'ի նոցանէ. և ահա ես ապականեցից զնոսա և զերկիր։ Արդ արա դու քեզ տապան 'ի չորեքկուսի փայտից, խորշս խորշս գործեսցես զտապանն, և նաւթիւ ծեփեսցես զնա ներքոյ և արտաքոյ։ Եւ մտցես 'ի տապանն, դու՝ և որդիք քո և կին քո և կանայք որդւոց քոց ընդ քեզ(¹)։ Եւ ածից ես անձրեւ 'ի վերայ երկրի դքառասուն տիւ և դքառասուն գիշեր, և ջնջեցից զամենայն հասակ՝ զոր արարի։ Այսր Նոյ զամենայն՝ զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր Աստուած. և եմուտ 'ի տապանն վասն ջրոցն հեղեղի։ Եւ յետ եօթն աւուր սահանք երկնից բացան, և եղեւ անձրեւ 'ի վերայ երկրի դքառասուն տիւ և դքառասուն գիշեր, և բազմացաւ ջուրն և վերացոյց զտապան. և շրջէր տապանն 'ի վերայ ջրոց, և սաստկանայր ջուրն յոյժ յոյժ 'ի վերայ երկրի և ծածկէր զամենայն լերինս բարձունս։ Եւ մեռաւ ամենայն մարմին շարժուն 'ի վերայ երկրի, ամենայն մարդ և ամենայն՝ որ ունէր շունչ կենդանի յռնդոունս իւր։ Եւ մնաց միայն Նոյ և որ ընդ նմա էին 'ի տապանի անդ(²)։

Ծ ննդ. Զ. Է.

47

ԴԱՒԻԹ ԵՒ ՄԱՆՈՒԿ ՆՈՐԱ

Հարկանել, Ներել, Ցրտրել
Խնդրել, Ողջել
Շշնջել, Խոխոել
Պահել, Ծոմ բռնել

Իմանալ, Հասկնալ
Օծանիլ, Ի-ղով խոնել
Տքնիլ, Ընդանալ, Սրբոնան մնալ
Այսրէն, Նոքէն, Հոս

(¹) Տես 19 էջ 3 կանոն։

(²) Անդ, անդ մակբայներն՝ է նախդրիւ վերջանոյով տրականի հոլ կը դրուին այս, այն ցուցական դերանուանց տեղ՝ եւ ածական են։

Օր. 'ի տապանէ անդ կ'ըսեմ փոխանակ ըսելու 'ի տապանէն յայնմիկ։
յերկրէ սոյ » » » յերկրէս յայսմիկ։

Եհար Տէր զմանուկն և հիւանդացաւ։ Խնդրեաց Դաւիթ յԱստուծոյ վասն մանկանն, պահեաց պահս և անկաւ 'ի վերայ գետնոյ։ Եւ յարեան 'ի վերայ նորա (անոր վրայ եկան) ծառայք տանն յարուցանել զնա (¹), և ոչ կամէր յառնել 'ի գետնոյն, և ոչ եկեր ընդ նոսա հաց։ Եւ եղեւ յաւուրն եօթներորդի մեռանել մանկանն (²). և երկեան ծառայքն Դաւթի պատմել նմա։ Եասա Դաւիթ եթէ չչնչեն ծառայք նորա և խնացաւ եթէ մեռաւ մանուկն. յարեաւ 'ի գետնոյն, և լուացաւ և օծաւ, փոխեաց զհանդերձս իւր, և եմուտ 'ի տունն Աստուծոյ և երկիր եպագ նմա. եմուտ 'ի տուն իւր և խընդրեաց հաց ուտել, և եդին առաջի նորա հաց և եկեր։ Ասեն ցնա ծառայքն իւր. Զինչ է բանդ այդ զոր արարեր վասն մանկանն, մինչդեռ կենդանի էր, պահէիր և լայիր և տրքնէիր, և իբրեւ մեռաւ մանուկն, յարեար կերար և արբեր։ Եւ ասէ Դաւիթ. Մինչդեռ կենդանի էր մանուկն, պահէի և լայի, քանզի ասէի՝ Ո՞ գիտէ, ողորմեսցի Տէր և կեցցէ մանուկն։ Արդ որովհետեւ մեռաւ մանուկն, ես ընդէ՞ր պահիցեմ, միթէ կարո՞ղ իցիմ դարձուցանել զնա այսրէն. ես առ նա երթալոց եմ, և նա առ իս ոչ դարձցի։

Բ. Թագ. ԺԲ. 15—23

(¹) Երբեմն անորոշ դերբայ մը առանց իր վրայ է կամ — է նախդիրներն ունենալու՝ եթէ իրմէ առաջ գտնուող դիմաւոր բայի մը հետ կապուած ըլլայ, հոմանուն կը թարգմանուի։ Ուստի այս օրինակին մէջ յարուցանել ՝ն— կը թարգմանուի (զանի ոտ հանելու համար). իբրեւ թէ գրուած ըլլար՝ Վոտ յարուցանելոյ, 'է յարուցանել կամ — 'է յարուցանելոյ եւայլն։

(²) Տես 13 էջ 2 կանոն. նաեւ՝ 54 էջ 2 կանոն։

48

ՁՈՐԵՑՈՒՆՑ ԵՂԱՆԱԿԱՑ ԸՆԴ ԻՐԵԱՐՍ ՎԷՃ

Նաժիշտ, աղաչէն
Արփի, արէա-
Ճեամ, փալաւաճ+
Արօտ, խոտաւէտ դաշտ
Երփն, գոյն (պէսպէս)
Բոցակէզ, բոցէ պէս այրող
Միգաճեամ, հպարտաւանութեամբ փալող
Նորափեսուր, նորէ պէս էղած
Հասակ, յորենի՝ գարէի գլուխ
Վայր, տեղ, դաշտ

Անդուստ, անդէնէն
Վէճ տալ, վէճաբանել
Զուարթարար, ուրախացնող
Դաշն (մկ.) ձեղմ յայնով
Արմատիք, երկրի բերբ+ (յորեն, գարի
Ոսկեձեւ, ոսկէի յեւով [եւայն)
Կուրթք, կթոց (պաղ պօղաւ)
Նախամեծար առնել, պատուաւոր
Զայնել, կանչել, խօսել [սեպել
Արհամարհ, անարգ, անպէտան

Նաժիշտը արփւոյն չորեքին՝
Որ իշխեցողք են տարւոյն,
Մին որ 'է ցեմ(1) իւր ոսին
Պրճնէ զարօտ երփն 'ի գոյն։
Երկրորդն 'ի շող բոցակէզ,
Միւսն ոսկուզուվք սիգաճեամ,
Զորրորդն 'է յեանց բազմեալ դեղ(2),
Տային դեռանց վէճ ընդդէմ(3)։
Նորափեսուր՝ դն ինէ-,
Ասէր. երկէր, ղարդարէ(4),
Մէսն այն(5)՝ թէ զհասակ ոսկեձեւ
Ես ներկանեմ 'ի վայրի։

---

(1) Ի ցեմ բառը նախդրիւ տրական դրուած է փոխանակ գործիականի։ (Տես 54 էջ 6 կանոն)։

(2) Փոխանակ ըսելու. Զորրորդն բազմեալ 'է դեղյեանց։ (Տես 16 էջ 1 կանոն)։

(3) Մէջեանց խնդիրն հեռացած է ընդդէմ նախադրութենէն։

(4) Այսպէս կարդա. Ասէր մին. ինեւ նորափեսուր զարդարի երկիր։

(5) Հոս բայը զեղչեալ է. Միւսն այն ասէր, եւայլն։

Նախանձընդդէմ երկոցուն՝
Անդուստ և մ-ուրն պանծայր
Գօլ ը-ուսոտու- յիրենուոյն
Ե- ը-ուրնուրբ ը-ուոյ մայր (6)։
Զորրորդն յայնժամ դաշն և հեղ
Զայնեալ առ քորսն իւր ասէր.
Թող արմբուիք կացցեն ձեզ
Ծաղկունք և կութք այդեբեր։
Այլ Տէրն 'ի գալ իւր յաշխարհ
Առ 'ի ծնանել տղայաբար,
Նախատեցաբ ը-ուրհատուրհ
Սատանանէն էմ արար (7)։

49

ՀԱՒԱՏՔ ԱԲՐԱՀԱՄՈՒ

Մխել զձեռն, յեռ+ դպցնել
Զգել, երկնցնել

Ափն, եղեր+
Հանել յողջակէզ, ըստ ընել

Փորձեաց Աստուած զԱբրահամ և ասէ. Ա՛ռ դու ըստ էր քո սիրելի՝ զԻսահակ (1), և հանցես զդա յողջակէզ։ Յարեաւ Աբրահամ, առ զվայտ ողջակիզին և եդ 'ի վերայ Իսահակայ, առ 'ի ձեռն զհուրն և զսուրն, և գնացին երկոքեան 'ի միասին։ Եկին 'ի տեղին՝ զոր ասաց նմա Աստուած։ Անդ շինեաց

---

(6) Այսպէս կարդա. Միւսն պանծայր քէ մայր էր լուսատու ձիքենուոյն եւ զուարթարար որթոյ։

(7) Նախամեծար արար զարհամարն սատանանիսն իմ։

(1) Բացայայտիչ եւ բացայայտեալ մի եւ նոյն հոլովով դրուած են։ (Տես 39 էջ 1 կանոն)։

սեղան Աբրահամ, եդ 'ի վերայ զփայտն, կապեաց զԻսահակ զորդի իւր, և եդ զնա 'ի սեղանն 'ի վերայ փայտին։ Եւ ձգեաց Աբրահամ զձեռն առնուլ զսուրն և զենուլ զորդին իւր։ Կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից և ասէ. Մի՛ մեր զձեռն քո 'ի պատանեակդ, զի այժմ գիտացի թէ երկիւղած ես դու յԱստուծոյ (²), և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի։ Համբարձ Աբրահամ զաչս իւր և տեսս խոյ մի կախեալ ղձաւոյն Սաբեկայ զեղջերոյ (³)։ Առ զխոյն և երհան զնա յողջակէզ։ Կոչեաց Հրեշտակ Տեառն զԱբրահամ յերկնից և ասէ. Ցանձն իմ երդուայ, ասէ Տէր, վասն զի ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ, օրհնեցից զքեզ և բազմացուցից զզաւակ քո՝ որպէս զաստեղս երկնից և որպէս զաւազ առ ափն ծովու, և օրհնեսցին 'ի զաւակի քում ամենայն ազգք երկրի։

Ծննդ. ԻԲ.

50

ՅՈՎՍԷՓ ԵՒ ԵՂԲԱՐՔ ԻՒՐ

Զրոյց, ը-ը
Խորհուրդ 'ի մէջ առնուլ, խոր-[հուրդ ընել
Զգել, ՀԷՐ ՀՈՒԼԷԼ
Մերկանալ, հանել (հանդերձյք)
Թաթաւել, ՌՈՒՆԷԼ

Առաքել, (մարդ) ՂՐԿԷԼ
Շնորհս գտանել, պատիւ գտնել
Ուլ, այծու յոգ [սէրելի ՇԱՐԼ
Կացուցանել, հաստատել
Ընկենուլ, ՅԳԷԼ ՆԵՏԵԼ

Իսրայէլ սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն զորդիսն իւր։ Եւ նախանձեցան ընդ նմա եղբարքն իւր։ Եւ գնացին արածել զխաշինս հօրն իւրեանց։ Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ. Երթ, տես եթէ ո՛ղջ իցեն եղբարքն քո և խաշինք, և բեր ինձ զրոյց։ Տեսին զնա եղբարքն յառաջագոյն 'ի հեռաստանէ,

(²) Տես 43 էջ 5 կանոն։

(³) Կաբէլ, կոչել, անուն, բառն հարիւրել (բռնել) բայերն ՀՆԱԽԴՐՈՎ առանց է ի բացառական բառարան ԽՆԴԷՐ կ'առնուն։

խորհուրդ վատ 'ի մէջ առին՝ սպանանել զնա։ Եւ իբրեւ եկն Յովսէփ, մերկացին զպատմուճանն նորա 'ի նմանէ, և առին ընկեցին զնա 'ի դուրն, և նստան ուտել զհացն։ Եւ անցա-նէին արք Մադիանացիք վաճառականք։ Ասէ Յուդա ցեղ-բարսն իւր. Զի՞նչ օգուտ է եթէ սպանանիցեմք զեղբայրն մեր. եկայք վաճառեսցուք զնա Իսմայելացւոց։ Եւ լուան նմա եղբարքն իւր, ձգեցին հանին զՅովսէփ 'ի դրոյ անտի, և վաճառեցին Իսմայելացւոցն քսան դահեկանէ (¹)։ Եւ առեալ զպատմուճանն Յովսեփայ, զներին ուլ այծեայ, թաթաւեցին զպատմուճանն յարեանն, և առաքեցին առ հայրն իւրեանց և ասեն. Զայդ գտաք, ծանիր եթէ որդւոյ քոյ իցէ։ Եւ ծանեաւ զնա և ասէ. Պատմուճանս որդւոյ իմոյ է. գազան չար եկեր զնա։ Պատառեայ զհանդերձս իւր և սուգ ունէր 'ի վերայ որդւոյն իւրոյ։ Իսկ Մադիանացիքն վաճառեցին զՅովսէփ յԵգիպտոս՝ Պեռոփրէայ դահճապետի Փարաւոնի (²)։ Եւ էր Տէր ընդ Յովսեփայ, և եղիւ շնորհս առաջի Տեառն իւրոյ, և կայր զնա 'ի վերայ տան իւրոյ և զամենայն ինչ էր 'ի ձեռս Յովսեփայ։ Եւ եղեւ օրհնութիւն Տեառն 'ի վերայ ամենայն ընչից նորա 'ի տան և 'ի յանդի։

Ծննդ. Լէ—Լթ

(¹) Տես 24 էջ 6 կանոն։
(²) Տես 35 էջ 3 կանոն. նաեւ՝ 39 էջ 1 կանոն։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Մինչեւ ցայսր նախընթաց Օրինակաց ներբեւ Քերականութեան Համաձայնութեան այնչափ ինչ կանոններն աւանդել հարկ համարեցի, որչափ կարեւոր էր աշակերտի մը եւ միանգամայն կարելի ուսանել Ա. Տարւոյ երջանին մէջ։

Թէպէտ ասի եւ անդր զնուած հոսուածք բերականական բացատրութենէ զուրկ են, բայց աւելորդ է ըսել թէ դասախօսը պէտք է որ իբրեւ բաղուած հեսագայ դասուց մէջ ալ պահանջէ նախադրեալ կանոններն՝ որպէս զի ուսանողք կարող ըլլան բաջ ըմբռնել։

Աշակերտք կրնան ի բերան ուսանել գրքուկիս մէջ ամփոփուած չափաբերեալ առակներն, եւ երբեմն փոխել զայնս յարձակ բան։

1

ԾԵՐՈՒՆԻՆ ԵՒ ՄԱՀ

Ի միում աւուրց, օրին Դէկը
Պարտասիլ, յոգնէլ
Հարկիլ, սոխոր-էլ
Դնել յերկիր, գլխոյնը դնել

Ցընդերկար ընթացիցն, երկոր ա-
Ցանցիման, դէմոցը [տեն գ-ելելն
Զարարատիկ, դժբախտ
Եղկելի, ընչա-ա-

Ի միում աւուրց Ծերունի ոմն հատեալ փայտ յանտառէ և բարձեալ 'ի յուս բերէր զայն 'ի տուն, այլ յընդերկար ընթացիցն պարտասեալ հարկեցաւ դնել յերկիր զբեռն իւր, և սկսաւ յոգնութիւն կարդալ զմահ։ Եւ ահա յանդիման եկն ել երեւեցաւ նմա Մահ, և եհարց զնա թէ առ ի՞նչ կոչէր զնա։ Յայնժամ Ծերունւոյն զահի հարեալ՝ պատասխանի ետ նմա և ասէ. «Զի տացես յուս զբեռն իմ»։

Բարոյական. Յուցանէ առակս զի ամենայն ոք սիրէ զկեանս, թէպէտեւ լցեալ չարաբաստիկ և եղկելի։

2

ԲԱԴ ԵՒ ԽՂՈՒՆՋՆ

Ողոքել, սլաքել, սէրոբ էջեցնել
Խղնջիւն, (սայլանկեօղ)
Ցօղել, ցօղէ պէս էջնել
Ցօղագին, ըվ
Պատուասէր, պարծ- ընող
Ստապատիր, սուտ և խաբեբայ

Ի՞բր, ի՞նչպէս
Ցռուկ, փէր
Կափկափել, երբրա- ղրնել
Ամրանալ, սպանով պանո-ըրել
Զրահամորթ, մորթը երկանի նման
Շողոմք, կեղծաւոր խօսքեր

Ողոքեր Բադ ըզխըզընջիւն ասելով.
«Արի՛ եկ ո՛վ խըզընջունի, ցօղէ անձրեւ ցօղագին,
Եվ դու արտաքս 'ի ճեմ զի գքեզ պատուեցից»։

Իսկ նա ասէ. «Զիք իմ առ այլս ընդքեզ տեսեալ պատուասէր
Եւ ի՞բր առ իս յանկարծակի լինիցիս,
Բայց թէ զցըռուկ քո կափկափեսս արեան իմոյ ծարաւի»։
Ասաց և խոյս եւ ամրացաւ 'ի զրահամորթ պատենին։
Խրատէ առակս ընդուշանալ 'ի ստապատիր շողոմից։

3

ԱՌԻԻԾ, ԷՇ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Ընկերչակել, ընկեր ըլլա՝ ժողովուել
Երէ վայրի, վայրէ որոյ անասուն
Աղէտք, ըրէ, ըշուռուռուրեան
Բրդիլ ի զայրոյթ, բարկորեան
Բաժանարար, բաժին ընող [գրգռել
Գիշատել, բզէտուել

Առիւծ, Էշ և Աղուէս ընկերչակեալ ընդ միմեանս՝ ելին յորս։ Ցըմբռնելն իւրեանց երէ վայրի, հրամայեաց Առիւծ Իշոյ՝ առնել զբաժին աւարին։ Սորա յերեսին հաւասար մասունս կատարեալ զայն՝ հրաւիրէր զնոսա յընտրութիւն։ Բայց Առիւծու բրդեալ 'ի զայրոյթ գիշատեաց զնա։

Ապա յանձն արար Աղուէսու բաժանել զայն, իսկ նա զամենայն ժողովեալ 'ի մի մասն և եթ, դոյզն ինչ եթող իւր 'ի բաժին։ Յայնժամ ասէ ցնա Առիւծ. «Եւ ո՞ ուսոյց քեզ, սիրեցեալդ իմ, այդպէս լինել բաժանարար»։ Նա պատասխանի եւ ասէ. «Անցք որ ընդ Էշ անցին»։

Բարոյական. Վկայէ առակս զի աղէտք դրացեաց իմաստուն խրատք են մարդկան։

4

ՆԱՍՐԷՏՏԻՆ ԵՒ ՊԱՐՏԱՏԷՐՆ

Զգենուլ, հագնել
Պատառատուն, պատռուած
Բոլորք, ամէն ոք
Ցղել եկակոչ, պոռալ կանչել
Ակմբահոյլ, բոլորը դիպուած ժողովուած
Չէր վայել, չէր վայլէր
Ցամաքիլ, ամլանալ
Աղագաւ, (նխ.) համար

Լաւ է զգենուլ աղքատ քան գող պարտական։
Խրատեալ երբեմն յիւրոց անտի բարեկամաց Նասրէտտին,
Զի չէր վայել շրջել նրմա պատառատուն ըզգեստուք,
Որ հանճարոցն էր բոլորից մեծարոյ.
«Բարուք խրատէք» ասաց, և ել 'ի շուկայն՝
Առնուլ իւր ձորձրս վայելուչս պարտեօք։
Յետ ոչ բազում աւուրց մինչ կայր յակմբահոյլ ժողովի,
Գայ պահանջել դերձակն ըզգինս ըզգեստուն,
Ընդառնալով յղել առ նա եկակոչ։
Յայնժամ յամաքիլ լեալ Ծերունին՝ «Ո՞չ, ասէ, այսր աղագաւ
Պատառատուն յանձն առնուի շրջել քան գող պարտական»։

5

Ա. Ց Գ Ի

Պարզել ոգւոյ, հոգին տալը
Հիւղ, խրճիթ
Ուրանօր, ուր տեղը
Խարխարել, տկնոտվրայ ընել (հողը)
Պատառել յակօսս, ակօս ակօս ընել
Ի միտ առնուլ, հասկնալ
Տալ իմանալ, հասկցնել

Ի պարզել ոգւոյն ասէր հայր մի ցերեսին որդիս իւր.
«Սիրեցեալ որդեակք իմ, յունիմ այլ ինչ թողուլ ձեզ բայց

միայն զհիւղս զայս՝ և զայդին որ շուրջ զնովաւ, ուրանօր է դանձ ծածկեալ։ Սկսարուք վարել զերկիրն անդուլ, և անշուշտ լիցի ձեզ գտանել զայն»։

Ցետ մահուան հօրն, որդիք նորա փութացան յառաջ քան զամենայն խարխարել զայդին բովանդակ, և չգտին անդ ոսկի կամ արծաթ. այլ ի չէր նոցա երբէք պատառեալ յաւուս զայդին այնքան խնամովք, 'ի նմին ամի երեր առատ ողկոյզս խաղողոյ, որ 'ի զարմացումն եղեւ նոցա և յերջանկութիւն միանգամայն։

Ցայնժամ 'ի միտ առին թէ զինչ հայր իւրեանց տայր նոցա իմանալ դանձիւն ծածկելով։

6

ԵԶՈՎՊՈՍ ԵՒ ՍՏԱՀԱԿ

Ցոգն, ունք, շոգ	Մարթ է, կրեալ է
Հրապուրել, հմայել (քեշ բանել)	Պատրել, խաբել
Դանակ, ոգակ	Պատուհաս, պարիծ
Փարթամ, հարուստ	Կախաղան, մարդ կախելու գործիք
Ժպիրհ, գոհաղ, յանդուգն	Վրէժ տալ, պարիծը կրել

Ցաջողութիւն գյոգունս 'ի վնաս հրապուրէ։
Ոմն ըստահակ եհար քարամբ զԵզովպոս.
Իսկ նա՝ «Կեցցես» ասէ, տրուեալ նրմա դանակ,
Եւ յաւելու. «Աւելի ինչ ոչ ունիմ,
Բայց ուսուցից ուստի քեզ մարթ է առնուլ։
Ահա հրզօր ոք և փարթամ հասեալ գայ,
Ընդնա նոյնպէս հար քարիւ,
Եւ զարժանին ընդունիցիս փոխարէն»։
Հաւանեցաւ նա և արար ըստ խրատուն,
Այլ ըղձըպիրհ յանդգնութիւն պատրեաց յոյս,
Քանզի ածեալ 'ի պատուհաս կախաղանաւ ետ վրէժ։

7

ԳԱՅԼ ԵՒ ԿՌՈՒՆԿ

Մխել, ծԷԼԸ ծդՆԵԼ (պՆՄՆՄՔ)
Մուծանել, ծդՆԵԼ
Երկայնաձիգ, ԵրԿՆՈՅՆ
Պայմանեալ, պՆՅՄԱՆՈՎ հՈՒԱՊԱՊՈՒԱԾ
Շարժիլ ի ծիծաղ, ԽՆԴՊՈՒԼ
Ատամն, ԱԿՈՈՅ
Զերծուցանել, ՈՂՈՊԵԼ
Ակնարկել, ՆՈՅԷԼ, ԴԷՊԵԼ

Շնորհապարտութիւն, ԵՐԽԽՈՊԷԷՊՈՒՐԻՔԱՆ

Մխեալ կայր ոսկը 'ի կոկորդ Գայլոյ՝ որ վարձս խոստացաւ Կռնկան եթէ կամէր մուծանել զկտուց իւր 'ի ներքս՝ հանել զոսկը յորկորոյն։ Երկայնաձիգ ուլամին յաջողեաց նմա խլել զայն 'ի բաց, և խնդրէր 'ի նմանէ զպայմանեալ վարձս։ Շարժեալ նորա 'ի ծիծաղ և ասա կրճտեալ զատամունս իւր, ասէ ցնա. «Շատ իսկ համարեսջիր քեզ վարձ զերծուցանել յորկորոյ և յատամանց Գայլոյ զգլուխ քո ողջ և անվնաս և առանց ինչ չարի»։

Բարոյական. Ակնարկէ առակս 'ի նենգամիտս՝ որ զերծեալք 'ի վտանգաց՝ այսպէս լինն յայտ առնեն զշնորհապարտութիւն առ բարերարս իւրեանց։

8

ԱՐՋ ՍՈՎԵԱԼ

Ճարակ, ՈՐԵԼԷԹ
Ժայռուտ, ԹՈՐՈՊ
Զկայ առնուլ, ԿՅՆԷԼ
Մխրճել, ԽՈՒՆԵԼ (ԸՐՈՅՆ ԾԷԼ)
Աւարառեալ, ԿՈՂՈՊՊՈՒԱԾ
Ըմբոշխնել, ճաշակել, համբ առնուլ
Նենգախոյզ, ԽՈՐԷՈՒՆԵԱՄԲ ապանՋ
Ժժմակ, ճճի (պԷՀճԷԹ) [ՈՂ
Հուն, ԸՐԷ ԱՆՅԹ, ԸՐԷՆ ԵՐԵՍՀԹ ԹԷՂԸ
Կռուել, ԹԱԿՌԷԼ
Հաս եւ խած լինել, ԱՓԱՀՈՒՆԵԱՄԲ
Ընդոստնուլ, ՅՈՊԿԷԼ [ՈՐԵԼ

Արջ 'ի մայրիս եթէ երբեք ոչ դըտանէ իւր ճարակ,
Ի ծովին ուրեք դիմեալ 'ի ժայռուտ՝
Եւ գկայ առեալ 'ի վիմի,
Տակաւ ըղարունարն մըխըրճէ անդր 'ի հուն.
Եւ 'ի գալ խեչափառէից կըռուել յոտիցն 'ի մուշտակ,
Անդէն ընդոսա 'ի ցամաք
Զաւարառեալ ժըժմնական 'ի բաց թօթափէ,
Եւ ըմբոշխնէ նենդախոշոշն երեալ նոցին հաս և խած։
Այսպէս քաղցոյ և զանմտին սրելով զուշ։

9

ԿՐԻԱՑ ԵՒ ԱՐԾԻՒ

Ի դէմս ածել, ՝՝ՐՔՔԸ ԴՆԵԼ. ՝՝ՐՐԿԷԼ
Յոգնաթախանձ, շատ ՝՝ՂՂՆՕՀ
Յանձն դնել, էր վրայ ՅՓԷԼ ԲԵՐԵԼ
Մագիլ, ճէրան (ՓԷՆՂԷ)
Ի դէպ ելանել, յարմար գալ
Ի պայքար մտանել, ԿՐՐԷԼ (ԽՕՐՀՕՂ)

Աղաչէր Կրիայ զԱրծիւ զի ուսուցանէ նմա թռանիլ ընդ օդս։ Եւ մինչդեռ 'ի դէմս ածէր Արծիւ եթէ անհնար էր ազգի Կրիայից յաջողել յայնպիսի ինչ, նա առաւել ևս յոգնաթախանձ աղերսէր։ Յայնժամ արծուոյ կալեալ 'ի մէջ մագլացն՝ ամբարձ զնա յօդս 'ի վեր և ապա ընկէց 'ի վայր։ Անկաւ Կրիայ 'ի վերայ ժայռից, և ջախջախեցաւ պատեան նորա։

Բառդրական. Ի դէպ ելանէ առակս այս բաղմաց՝ որ ոչ լսեն բանից իմաստնոց, և 'ի պայքար մտեալ՝ յանձինս դրեն զվտանգ։

10

ԱՆՄԻՏՆ ԻՆԲՆԱՄԵՍ

Հաւասարիք, բոլոյ, ճշմարտութիւն
Կղզակ, ծնօտ
Հուր առնուլ, բռնկիլ

Ալիք, ծերմակ մաղեր
Ի ստորեւ, տակը, վար
Ինձէն, (մկ.) ի յեռուանց

Զանազանութեան իւրոյ ինքնին իսկ տայ անմիտն հաւասարս։
Ի մատենի ուրեմն անմիտն ընթերցեալ,
Զի կարճամիտ յաճախ գտանին որոց երկայն է կըզակ,
Մ՛ռ հայելի, և զի գիշեր էր մթին
Կալեալ միւսով ձեռամբ ըզճրագ, մինչ ըզկըզակ իւր զընէր.
Ցանկարծակի հուր ի ճրագէն առեալ ալիքքն կիզան։
Ցայնժամ յաւել նա ի ստորեւ մատենին.
«Այո՛, այդպէս է, վրկայեմ, զվարձ առեալ և ինձէն»։

11

ԳԱՅԼ ԵՒ ՊԱՌԱՒ

Բռնադատիլ, ստիպուիլ
Մ՛րդ եւս, հէմա
Կուր, կիրակուր

Գգուել 'ի գիրկս, գրկուիլ մեջ տա-
Այլազգի, տարբեր տեսակ [ռած տիրել
Իրք, գործք

Հանդէպ, նման, համառաջ

Գայլ 'ի սովոյ բռնադատեալ այսր և անդր գնայր 'ի խնդիր սննդեան։ Հասեալ 'ի տեղի ուրեք՝ լուաւ զի մանուկ ոմն լայր և կին մի Պառաւ ասէր ցնա. «Դադարեա՛ց 'ի լալոյդ, եթէ ոչ ա՛րդ եւս արկից զքեզ կուր գայլոյ»։

Համարելով սորա զի ճշմարտութեամբ ինչ ասէր Պառաւն, ընդ երկար սպասեալ մնայր անդ։ Այլ 'ի հասանել երեկոյի, լուաւ դարձեալ զի Պառաւոյն գգուեալ 'ի գիրկս զմանուկն ասէր ցնա. «Սիրեցեալդ իմ թոռնեակ, եթէ ե-

կեսցէ այսր գայլ, մեք սպանցուք զնա». Ի լուր բանիցս այսոցիկ 'ի բաց գնաց Գայլ ասելով. «Այլազգ բանք և այլազգ լինին երբք 'ի տանս յայսմիկ»։

Բարոյական. Առակս այս այնոցիկ է՝ որոց գործք ոչ հանդէտ գտանին բանից նոցա։

12

ԽՈԶ ԵՒ ՔԱՂԴԵԱՑ

Քաղդեայ, սոդոմբաշի
Արփ, սոդոմ
Երկնապիշ, աչքերը երկնից դնած
Խոյզ, ֆոդոնելը
Բուտ, ճաքակ
Երկրաքիր, հող քրող
Ուրն, ան, ճիտ, վիշ
Անշրջելի, ընդարձող
Ակահ, դեղձակ
Ի ճահ (մկ.), յարմար
Երկրաքարշ, սիսոսուր, մուկ
Անճաշակ, համը չառնող

Բնաւորիլ, բնորոշեն ելեալ

Խոզի յուսումն երթեալ առ ոտս քաղդեայց,
Գիտել զարփից շրջան, լինել աստղաբաշխ,
Հրամայեցաւ դիտել զաստեղս երկնապիշ.
Եւ 'ի չկարելն հայել 'ի վեր ընդ երկին,
Զի ցոռուկ 'ի խոյզ և երթ բրտոյ տրաւ նմա երկրաքիր,
Ուրանն 'ի վեր անշրջելի բնաւորեալ,
Պատգամ նրմին եւ վարժապետն քաղդեայ.
«Երկրաւորին գոլով քո յար 'ի խընդիր,
Երկնաւորաց վասն այնորիկ չես ակահ»։
Ի ճահ առակս այս այնոցիկ պատահէ,
Որք երկրաքարշ վարեն կենցաղ՝ երկնաւորաց անճաշակք։

13

ԵԶՆ ԵՒ ՈՐԹԱՏՈՒՆԿ

Եզն, (կեյեկ)
Վարիլ, ։ղը։էլ. հալածո։էլ
Որթատունկ, (ասմ։)
Ոչ ինչ անտի 'ի բացեայ, անկէ ոչ հեռու, այսինքն՝ տոպէն
Տատանումն, շրժէլը
Սաղարթ, պերբե։
Ղօղեալ, պահո։ըպած
Զայս օրինակ, այսպէս, այս օրինակ
Յետկոյս, (նախ.) էպե։ը

Եզն հալածական վարեալ յորսորդաց ոմանց թաքեաւ ընդ միով յորթատնկոց։ Եւ իբրեւ անցին նոքա ընդ այն՝ ոչ ինչ անտի 'ի բացեայ, յապահովի և 'ի թաքստեան համարեալ նա զանձն իւր 'ի ժամէ անտի՝ սկսաւ ճարակել զտերեւս որթատնկոյն, բայց 'ի տատանմանէ սաղարթուցն՝ յետս դարձան որսորդքն, և կարծէին՝ որպէս և էր իսկ՝ զի անասուն մի ղօղեալ կայր յետկոյս տերեւոցն, և սպանին զեզնն 'ի հարուած նետից։ Ի մեռանել իւրում զայս օրինակ բարբառէր նա և ասէր. «Արդարագոյն կրեմ պատուհաս, զի չէր պարտ չար առնել այնմ՝ որ փրկեացն զիս»։

Բարոյական. Խրատեա՛ց այսու առակաւ, զի պատուհասէ Աստուած զայնոսիկ՝ որ առ բարերարս իւրեանց գտանին վնասակարք։

14

ՆԱՍՐԷՏՏԻՆ ԵՒ ԿՈՂՆԱԿԱՆՔ

Ճոխութիւն, հարստո։թիւն
Առաջիկայ, ներկայ, ա։ջե։ կեցող
Ընծայել 'ի ճաշակ, ո։ոնել։ համ։ [տաբ պա։
Այլուր, ո։բէշ տեղ
Սամոյր, ասմո։ (էբ։բ։)
Համեմք, կերակրոյ համ պո։ող քաներ
Պաշտիլ, պարբասո։էլ
Համադամ, ընդէր կերակո։ր
Ելեւեալս առնել զիրերօք, էրարո։ հեպ մրցէլ
Ի սպաս նորին, անոր ծառայելու։

Զի ճոխութիւն յաճախ ուրեք քան ըզհանճար մեծարի,
Վկայէ այսմիկ առաջիկայս քեզ առակ։
Երթեալ երբեմն Նասրէտտին
Հրաւիրանաւ 'ի ճաշ ընդ այլ կոչնականս,
Եւ զի չէր ճոխ հանդոյն այլոց ըզգեցեալ,
Ոչ ոք ըզնա պատուասիրեալ մեծարէր,
Ոչ ընծայէր ինչ ոք նըմա 'ի ճաշակ։
Իսկ միւսանգամ այլուր 'ի ճաշ հրաւիրեալ,
Զոգաւ հանդերձս 'ի փոխ առեալ, արկեալ սամոյր մեծագին։
Պըսակէին բաժակք, պաշտէր համադամ,
Եւ երեւելքս զիրերօք մինչ առնէին կոչնականք
Ի սպաս նորին և համեմոց 'ի հրաւէր։
Ինքն առ նոսա ըզձորձս յառաջ մատուցեալ,
«Կերայք, ասէ, ձորձք իմ, սամոյր իմ դու կէր»։
Ցայտ ետն այսպէս արարեալ,
Զի ոչ վասն իւր ինչ մեծարէր 'ի նոցունց,
Այլ վասն ընչից՝ ճոխ 'ի ձեւոյն կարծեցեալ։

15

ԷՇ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Արկանել զանձամբ, հոգնել
Ողջոյն, ցոլոր
Ահ արկանել, վախցնել
Ցականջալուրս հասանել, լսել
Խանչիւն, ըմբոշխնել
Մնասարծութիւն, փոշ պարծանք
Ծաղր կալ, խաղ ելանել

Մորթ առիւծենի արկեալ զանձամբ Էշ, ընթանայր ընդդաւառն ողջոյն՝ ահ արկանելով այլոց կենդանեաց։

Եռես 'ի հեռուստ զԱղուէս, և փորձ փորձեաց 'ի նա ևս ազդել երկիւղ. բայց սա, զի լուեալ էր յառաջագոյն զձայն նորա՝ ասէ ցնա. «Սակայն լեր դու վստահ, զի և ես զարհուրեալ փախչէի եթէ չէր ինձ յականջալուրս հասեալ քոյդ խանչիւն»։

Բառոյական. Վկայէ առակս զի տգէտք ոմանք անապարժութեամբ իւրեանց պատրեն զանծանօթս, այլ ծաղր կան ծանօթից։

16

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Զքնաղագիւտ, հազուագիւտ
Տուժել, ընս ընել
Ասի, կըսուի ըն, կը պատմուի ըն
Լոյծ, հալածք (սուլտ)
Ոմպ, խոռլէ։
Ի մէջ մատուցանել, ծէլրեղ բերբել
Յագուրդ, կշտանալը
Սովալլուկ, անօրուրենէ ղրղրուող

Թրատէ առակս երբեք ումեք մի՛ ցնասել,
Իսկ որ ցնասէն՝ արդարապէս տուժեսցի։
Աղուիսու ասի՝ ի ճաշ նախ հրաւիրեալ զԱրագիլ,
Պատրաստելով նըմա ումպ լոյծ՝ ի պնակի,
Զոր ճաշակել երբեք նըմա չէր հընար։
Հրաւէր ապա արար և ինքն արագիլ,
Եւ մատուցեալ լի փրշրանոք չիշ՝ ի մէջ,
Կըտուց՝ ի ներքս արկանէ ինքն՝ ի յագուրդ,
Սովալլուկ ըղճաշակից իւր թողեալ։
Եւ մինչ՝ ի զուր լիզոյր նա զուրն անօթոյն,
Աւանդի չքնաղագիւտ հաւոյն այսպէս խօսեցեալ.
«Համբերութեամբ պարտի կըրել որ ինչ այլում ոք արար»։

17

ՇՈՒՆ, ԱԳԱՂԱՂ, ԵՒ ԱՂՈՒԷՍ

Դաչն կռել, խոսոսմ ինէլ
Յուզի անկանել, ճամբայ ելնել
Փապար, խոռուլ, ծակ
Զհասարակ գիշերաւ, կէս գիշերուն
Յեղակարծ, յանկարծ
Զրձել ատամնացի, ակռայովրնօրուել
Բարապան, պռնապան
Ցանկալի էր նմա, կը փափաքէր
Գուն գործել, ջանալ
Գիրկս արկանել (սուրէ), գրկել (ձեռք)
Յեղանակել, երգել
Խոյանալ, վազել, վրան յարձակիլ
Ի կիր արկանել, գործածել
Ճարտարամիտ, խելացի

Շուն և Ագաղաղ դաշն բարեկամութեան ընդ միմեանս կռեալ՝ անկան յուղի։ Իբրեւ 'ի վերայ եհաս գիշեր, երկաքանչիւրն 'ի քուն մտին. հանդեաւ Ագաղաղ 'ի վերայ միոյ 'ի ծառոց և Շուն առ արմին նորա՝ յորում գտանէր փապար մի։ Ի խօսել Ագաղաղին զհասարակ գիշերաւ՝ որպէս սովորն էր, լուաւ Աղուէս զձայն նորա, և դիմեաց յանկոյս, և 'ի ներքոյ ծառոյն կացեալ՝ աղաչէր զնա զի իջցե 'ի վայր, և յաւելոյր թէ յոյժ ցանկալի էր նմա գիրկս արկանել կենդանւոյ՝ որ այնպէս քաղցրաձայն յեղանակէ։ Ասաց նմա Ագաղաղ՝ զարթուցանել նախ զդռնապանն՝ որ ննջէր առ ստորոտով ծառոյն, զի կարասցէ իջանել, եթէ բանայր նմա։ Եւ մինչդեռ գուն գործէր Աղուէս արտաքս զբարապանն կոչել, խոյացաւ Շուն յեղակարծ 'ի վերայ նորա և գիշատեաց զնա ձրձեալ ատամնացի։

Բարոյական. Ցուցանէ առակս զի արք զգուշաւորք 'ի կիր արկանեն բանս ճարտարամիտս, առ 'ի հանել ընդդէմ ոսոխաց իւրեանց՝ զօրաւորագոյն թշնամիս։

18

ԴԱՄՈՆ, ԾԻՐԱՆ ԵՒ ՄԱՐԴԻԿ

Դամոն, սուրբ (պարարտ երէց)
Հարկանել, առնուլ զատամունս, ակռան առնել
Թանչք, փորհարուրիւն
Լորձել, ակռան առնել
Ելով, իբր գոլով, լինելով
Տարապարտուց, պարապ տեղը
Դատափետ լինել, խիստ դատապարտանի ենթարկուիլ
Բերկրութիւն, զուարճութիւն
Զառածանիլ 'ի չարիս, ընթանալ ճանապարհ
Դժնդակ, գեղ

Ամբաստանեալ յոմանց դամոն և ծիրան
Զի զատամունքս կերուցաց հարկանեն,
Պատասխանի ետուն նոցա և ասեն.

«Գիտեն հըմուտք ի բըժըշկաց զի մեք գըրգռիչք եմք թանչից,
Արդ թէ լորձեմք, և զմեզ մարդիկ սակայն ուտել յաճախեն.
Զի՞նչ առնէին թէ ղկերողաց ոչ առնուաք զատամունս։
Շնորհակալեաց ուրեմն ելով արժանիք
Տարապարտուց լինիմք 'ի ձէնջ դատափետք»։

Առակս 'ի դէպ գայ բերկրութեանց աշխարհի,
Որոց կըցորդք գողով աղէտք դըժընդակք
Զառածանեն միշտ զանըզգոյշս 'ի չարիս.
Զիւրէ՞ արժան մեզ գոհանալ զԱրարչէն
Զի զփուշ ընդ վարդ, և զցաւ խառնէ ընդ հաճոյս։

19

ԹՌՉՈՒՆՆ ԿԱՐՄՐԱԼԱՆՋ

Կարմրալանջ, կ՝ուրծէը կ՝ուրծէր Ը՝ը՝-	Ցանկ, (ՆԷՐ)
Տարափք, (ՈՍՂՆՈՒ) [ՂՆ (ՈՍԽ)	Կենակից, ընկեր, ամուսին
Շնչել, փչել	Անկարկեան, անկոսկած
Ընդելանալ, վարժուիլ	Ցածել, պոռոցընել
Ունդ, հունդ	Խրտչել, (ԽՐՏՉԵՑ)
Կարկառել, յերկնցնել	Թեւածել, ճոպռել
Լուծանիլ, հալիլ	Ցօղել բարբառ, խօսիլ

«Դրկ Դրկ Դրկ» գոչէր կացաւն իւրով թռչուն մի կարմրալանջ կայեալ առ պատուհանաւ հողագործի ուրումն, և ասէր. «Ցիս, տէր, բաց ինձ, զի անկանիցի տարափք ձեանց, զընչէ հողին հիւսիսի, և ես սովամահ կորնչիմ։

Դիտացեալ 'ի նա առնն, երաց զպատուհան իւր, և թըռչունն եմուտ ընդ այն 'ի ներքս, և սկսաւ ժողովել զփշրանս հացի անկեալս 'ի սեղանոյ։ Եւ յետ սուղ ժամանակի ընդելացաւ մանկանցն՝ որ 'ի տան անդ, մինչեւ գալ նմա և 'ի ձեռանէ նոցին առնուլ զունդն՝ զոր կառկառէին առ նա։

Այլ 'ի լուծանել ձեռանց, եհաս գարուն, և ցանկք պարտիզայ ծածկեցան սաղարթագեղ։ Յայնժամ եբայ հողագործն զպատուհան իւր և հիւրն այն փոքրիկ թռչաւ 'ի մերձակայ անտառ ուրեք, և ուրախութիւն մեծ եղեւ ընտանեացն, զի հրճուէին 'ի լուր զուարթարար երգոց նորա։

Այլ 'ի դալ ձմերայնոյ եկն դարձեալ թռչունն՝ զհետ առեալ բերելով զկենակից իւր. սոքա երկոքին աներկեւան վստահութեամբ մտին 'ի հիւղն այն, և այսր անդր յածէին զաչկունս իւրեանց առանց ինչ խրտչելոյ։ Որդիք երկրագործին բերկրեցան 'ի տեսիլ նոցին, և ասէին. «Թրռչունքս այսոքիք թեւածեալ թռչին մեզ ընդ առաջ, որպէս թէ ունիցին ինչ ասել մեզ»։

Պատասխանի ետ հայրն և ասէ ցնոսա. «Եթէ մարթ էր նոցա յօդել բարբառ, ասէին ցմեզ. Ի բարեսիրութենէ ծնանի վստահութիւն աներկեւան»։

20

ՆԱՍՐԷՏՏԻՆ ԵՒ ԺՊԻՐՀ

Զուգակշիռ, հաւասար [ՀԱՒԱՍԱՐ	Օրէնսգէտ, օրէն+ գէտ=ՕՐԷՆԳԷՏ
Ընդ վայր հարկանել, քանդել ՔԱՆԴԵԼ	Պարտաւոր, յանցաւոր
Զգնալ, դաբդրել, տալ [ՏԱԼԵԼ	Ի բաց ելանել, մեկնել, դուրս ելնել
Ածել, հանել ապտակ, ապտակ	Դատաւոր, դատ պահանջող

Զիք ինչ պատուոյ զուգակշիռ 'ի մարդիկ,
Եւ որ գանձուց իսկ վաճառէ զայն, զանձն ընդ վայր հարկանէ։
Ի զգնալն երբեմն Նասրէտտինայ ընդ հրապարակ քաղաքին,
Ոմն յամբոխէն ժանտ և ժպիրհ ուժգին նըմա հան ապտակ։
Հասին զինուորք կալան ածին ըզյանցաւորն 'ի յատեան.
Զուգաւ ըզհետ նոցին և ինքն իսկ Ծերունին դատաւոր։
Մատեան 'ի վայր առեալ յայնժամ օրէնսգէտքն տան վրճիռ։
Պարտաւորին հատուցանել նըմա երիս դահեկանս

Այնքանով անարդ գընոց տեսանելով Մերունեաց
Զանձին պատիւ վաճառեալ,
Միումն և ինքն 'ի նոցանէ ած ապտակ,
Եւ էլ 'ի բաց ասելով
«Քեզ ըզպահանջ իմ թողում»։

21

ԸՆԿՈՅԶ

Ձեմ առնուլ, պոռդել
Այն ինչ, դեռ նոր
Վիճակել, էջնալ (Վիճակաւ)
Երկուստեք, երկոս կողմն
Ծառուղի, երկոս կողմը ծառէ ճամբայ
Սպառուած, ծայր

Յուշի կապել, դիտել պահել
Սուրալ, վազել
Ուշ ունել, ուշադրութիւն ընել
Արշաւանք, վազելը
Յուշ արկանել, յիշեցնել
Առիթ, պատճառ

Մինչդեռ Ելիսա և Եւդինէ ճեմ առեալ շրջէին 'ի պարտիզի իւրեանց, գտին ընկոյզ մի այն ինչ անկեալ 'ի ծառոյն։ Աստի յարեաւ վէճ առ 'ի գիտել թէ ո՞ւմ վիճակեսցի այն։

Պահանջէր զայն Ելիսա զի նախ իւր էր տեսեալ. և Եւդինէ՝ զի ինքն ժողովեալ էր զայն, չկամէր տալ 'ի բաց։

Մինչդեռ երկուստեք այսպէս վիճէին, անդրանիկ եղբայր նոցա Կարապետ մատեաւ առ նոսա և ասէ ցԵլիսա. «Զի մի լիցի կռիւ ընդ քեզ և ընդ Եւդինէ, երթայք 'ի ծայր ծառուղւոյն և յորժամ երիցս ծափ զծափի հարիցս, եկեսջիք առ իս։ Որ վաղ եկեսցէ՝ նմա տայ զընկոյզն. այլ պարտ է ձեզ զգուշութեամբ ընթանալ, զի ոչ որ արագընթացն է ժամանեսցէ միշտ 'ի կէտ նպատակին»։ Դատերքն մատաղատիք ընկալան զառաջարկութիւն եղբօրն իւրեանց, և չոգան 'ի սպառուած պարտիզին. և 'ի տալ նշանին՝ սկսան ընթանալ։ Եւդինէ յուշի կապեալ զբանս եղբօրն հայէր զգուշութեամբ թէ յո՞ ուրեք հաստատէր զոտս իւր յընթացսն. իսկ Ելիսա գահավէժ սուրայր, ոչ յայլ ինչ ուշ ունելով բայց 'ի

պտուղն՝ որ մրցանակ լինելոց էր արշաւանաց նոցա. սակայն զինչ դէպք պատահեցին։ Հարաւ Ելիսա ընդ կոճղ ծառոյ որ կայր զերեսօք երկրին, և անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց։

Մինչդեռ յառնէր նա աչք յարտասուս, եհաս Եւգինէ 'ի նպատակ անդր, և ընկալաւ զընկոյզն 'ի ձեռանէ եղբօրն։

Իսկ Կարապետ 'ի դէմն ածէր Ելիսայ զգահավէժ և զանզգոյշ ընթացս նորա, յուշ արկեալ նմա զհինաւուրց առածն՝ որ ունի այսպէս.

« Յամրընթաց
Միշտ ճեպեայ »։

Բայց Եւգինէ՝ զի սիրտ բարի էր նորա, բաժանեաց ընդքեռ իւրում զընկոյզն՝ որ առիթ խռովութեան եղեւ նոցա։

22

ԳՈՐՏ ԵՒ ԱՐՋԱՌ

Նկրտել, ջանք ընել
Նախանձ բերել, նախանձիլ
Խորշոմեալ, կնճռոտ
Նայապէս, անոր պէս
Դիտապատ անկանել, դռոտ եղեալ
Ստուարացեալ, հաստաքցոտ, դեղցոտ

Գորտոյ զարջառ տեսեալ ուրեք 'ի դաշտի,
Եւ մեծութեան նորին նախանձ բերելով,
Ուռոյց ըզմորթն խորշոմեալ, և հարցանէր ցորդիս իւր՝
Արդեօք էր ըստուարացեալ նայապէս։
Ասեն, «Ոչ»։ Եւ ուռուցեալ սաստկագոյն,
Եհարց դարձեալ՝ Ո՞ ստուարագոյն էր յերկուց,
Նոքա եւսուն պատասխանի թէ. « Արջառ »։
Զայրացեալ ապա մինչ գուն գործէր ուժգին եւս ուռնուլ
Դիտապատ անկաւ յերկիր պայթուցեալ։

23

ՃԻՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՋՄՈՒՆՔ

Անձրեւաթուրմ, անյրեւ Ընդեալ,
Անսուաղ, անօրէն [Ընդեալ
Զեղեւ ինձ պարապ, ժամանակ ը-
նեցայ
Քաղցրանուագ, փողոցին երգող
Քրքիջ բառնալ, բարբարոյն խնդալ
Քա՛ջ է, շատ ուղիղ
Կայթս հարկանել, ցոփիլ, պարել

Ցաւուրս ձմերայնոյ ցամաքեցուցանէին Մրջմունք զանձրեւաթուրմ հասս ցորենոյ։ Ճիպուռն անսուաղ խնդրեաց 'ի նոցանէ ճարակ առ յուտել։ Ասեն ցնա Մրջմունք. «Ընդէր յամարայնի ոչ ժողովեցեր քեզ կերակուր»։ Պատասխանի ետ նոցա Ճիպուռն և ասէ. «Զեղեւ ինձ պարապ առնել զայդ, զի յօրինէի յայնժամ երգս քաղցրանուագս»։ Ցայնժամ քրքջիջ բարձին մրջմունք և ասեն. «Քաջ է, որովհետեւ երգէիր յամարայնի, հնպա, կայթս հարջիր և 'ի ձմերան»։

Բարոյական. Վկայէ առակս թէ չէ պարտ զանց առնել զիւրք, զի մի՛ հասցեն վիշտք և վտանգք։

24

ՄԿՈՒՆԵՔ ԵՒ ԿԱՏՈՒ

Ծերպ, ծակ, տեղ
Համախմբել, ոեկոեղ ժողովել
Հրապարակ, ժողով
Հրեշտակ, պարտիզապետ
Հեռ, ապեւորեան
Դարմանել, անուցանել
Առանին (մկ.), փոն մեջ

Ի բաց անկանել, գեղոնը՝ ոեկոեղ
Մեղանչել, ընսել [խնդալ
Ուխտաղրուժ, ուրիշը ընկող
Պատճառել, կեղծաւորել
Ընդարձոյս, բնական
Խիզախել, վազել անվախ
Հաւատս ընծայել, հաւատալ

Մըկունք 'ի ծերպս հալածականք 'ի Կատուոյ
Համախմբեալ հրապարակ,
Ցըղեն հրեշտակ առ նա աղերս առնելով.
«Զի՞ մեղանչեմք քեզ որ այդքան հեռիւ ըզմեզ հալածես.
Զի՞նչ քո ուտեմք»։ Իսկ նա ասէ. «Ա՛յլ վնասակար էք մարդկան,
Ո՞չ իսկ գիտէք զի առ 'ի պահ ամբարոյ
Նոքա ընդդէմ գողոցդ ըզմեզ դարմանեն։
Արդ եթէ դուք ոչ մեղիցէք պաշարոյ,
Տացի չըրջել ձեզ առ տընին համարձակ,
Զի մի վնասել ինձ ձեզ ահա խոստանամ»։
Ասաց և զալ 'ի ձեւ երդման ած 'ի գլուխ։
Համարձակեալ յայնժամ Մըկանց եղեալ արտաքս 'ի ծերպից
Առ 'ի ճարակ հատից 'ի բաց անկելոց,
Ցեղակարծում հաս ուխտադրուժն 'ի վերայ։
Եւ 'ի բողոք բառնալ նոցին զերդումն 'ի յուշ առնելով,
Նա պատճառէր թաթ ըզդըլխով ոչ առ երդումն ինչ ածեալ
Ա՛յլ ընդաբոյս էր իւր 'ի բնէ սովորոյթ։
Որք խիզախեն 'ի վանդ՝ հաւատս ընծայելով սըտերդմանց,
Նոցա առակս այս ասացեալ է 'ի խրատ։

25

Ա. Գ. Բ Ե Ր Ա Կ Ն

Տօթակէզ, փոթորիկ՝ այրող
Բոցատիպ, բոցէ նման
Առուաբար, վաղող ջուրէ պէս
Հէք, խեղճ
Ցայտել, դուրս ցատկել
Ցուրտ, պաղ
Աղիտաբեր, ընտ բերող
Ցողոց հանել, հառաջել
Ժանտաժուտ, խիստ փէշ, ընտակոր
Խօթութիւն, հիւանդութիւն
Ցեղյեղել, ծլար կրկնել (խոտ մը)
Առնուլ յարբուն, խմել

Ի միում 'ի տօթակէզ աւուրց ամարայնոյ՝ շրջէր Զարեհ ընդ դաշտորայս, այսք նորա բոցատիպք էին, և քիրան հոսէր առուաբար 'ի ճակատուէն։ Մանկիկն հէք կիսամահ 'ի ծարաւոյ, եհաս յանկարծ յաղբերակն մի՝ որ ալիք արծաթափայլք բղխէին 'ի ներքոյ ժայռի՝ ընդ հովանեաւ վարսագեղ կաղնւոյ։

Ցայնժամ Զարեհ գահաւէժ խոնարհեցաւ 'ի ջուր անդր՝ որ ցուրտ էր իբրեւ զսառն, և յըմպէլն 'ի նմանէ անկաւ գրեթէ անդգայ։ Զոգաւ հիւանդացեալ 'ի տուն ծնողացն, և կալաւ զնա ջերմն աղիտաբեր։

Ցոգւոց հանեալ 'ի մահիճս ցաւոց իւրոց հառաչէր և ասէր։ «Եւ ո՞ հաւատայր զի աղբերակն այն վճիտ ունէր յինքեան թոյն ժանտաժուտ»։

Ի լուր բանից նորա ասէ ցնա հայրն. «Ո՛չ աղբերակն այն ականակիտ եղեւ պատճառ խօթութեանդ, այլ անդգուշութիւն քո և եթ։ Պարտ էր քեզ յուշ ածել զոր յաճախն յեղյեղէի առ քեզ, թէ չէ բարւոք 'ի ջերմութեան մարմնոյ ցուրտ ինչ առնուլ յարբումն»։

26

ՆԱՍՐԷՏԻՆ Ի ՀԱՐՍԱՆԻՍ

Առ ահին, վախէն, վախուն համար
Խուռն, բազմութիւն
Զանկիկ, պզտիկ ղանգակ
Գարշապար, (ԷՕԻԾԷ)

Անկանել 'ի թմբիր, ընդ-ուրեան դէջ
Սթափել, խելքը վերն գալ [ինալ
Անապակ, ըստ գինի
Ի վարանս անկանել, դադարեցնել

Ի հարսանիս ուրեք երբեմն Նասրէտտին հրաւիրեալ,
Ամբոխ բազում կոչնականաց ետես անդ.
Եւ առ ահին դուցէ 'ի խառան անդ շրփոթեալ կորիցէ,
Զանկիկ յոտին 'ի գարշապար եդ նշան։

Արկան ամբոնը, ըսկիզբն եղեւ խընճոյից.
Պըսակեցան բաժակը, արբին արբեցան։
Անկաւ և ինքն իսկ Ծերունին ընդ ճաշակիցս 'ի թըմբիր։
Ցայնժամ մի ոմն յոտանէ նորա զղանկիկըն լուծեալ,
Կապեաց յոտին այլոյ ուրուք զայն մեղմիկ։
Եւ 'ի սիմափել բաղմականին յանապակէ և 'ի քնոյ,
Լուաւ ըղձայնն նըշանակ իւր Ծերունին առընթեր.
Եւ 'ի վարանս եղեալ՝ ումեք, որ անդրէն կայր՝ հարցանէր.
«Դա աւադիկ ես եմ, այլ ես ո՞ իցեմ»։
Այսպէս նա ցնորըս պատճառէր արբեցելոց առ 'ի խրատ։

27

ԷՇ ԵՒ ՊԱՐՏԻԶՊԱՆ

Հարկանել սպաս ծառայութեան,
Դոյզն ինչ, փէշ մը [ծառայել
Վաստակել, ուշխարել, յոգնել
Բրուտ, (էօմլէկճի)

Դուրգն, դրգան, քրտի անէ-
Խաղախորդ, կաւի մատրող, քորձաձող
Ցոռեգոյն, սուրալի քեշ
Եղո՛ւկ եմ ես, ընչաւոր եմ ես

Էշ՝ որ սպաս ծառայութեան հարկանէր առ պարտիզպանի ումեմն, ճաշակելով դոյզն ինչ և վաստակելով յոյժ, աղաչեաց զԱրամազդ տալ նմա զերծանել 'ի ձեռաց նորա, և ածիլ 'ի վաճառ այլում ումեք տեառն։

Լուաւ Արամազդ աղերսանաց նորա և վաճառեցաւ նա բրտի ումեմն, այլ անդ առաւել չար քան յառաջն ընկճեր 'ի վաստակս՝ ընդ ծանրութեամբ բեռանց, դարձուցանելով զդուրգն անօթոց կաւեղինաց։ Ապա անդրէն խնդրեց իւր այլ տէր, և վաճառեցին զնա ումեմն խաղախորդի։ Անկեալ 'ի ձեռն տեառն յոռեգունի քան զմիւսս, և տեսեալ որ ինչ անցք անցանէին, ասէր հառաչանօք «Եղո՛ւկ եմ ես, լաւ էր

թէ կայի մնայի ընդ իշխանութեամբ առաջնոց տերանց իմոց, զի սա, որպէս տեսանեմ խակ զմորթ իմ եւս աշխատ արասցէ»։

Բարոյական. Ակնարկէ առակս 'ի սպասաւորս՝ որոց վիշտ լինի ընդ կորուստ առաջին տերաց իւրեանց, մանաւանդ յորժամ զյետնոցն առցեն զվորձ։

28

ԿԻՆ ԵՒ ԱՂԱԽՆԱՅԻ

Ժրագլուխ, աշխատասէր
Հաւախօս, տարտուան դեմ ոչ աղաղ-
ղաց խօսելոյն ժամանակը
Առաջի դնել, առջեւը դնել
Զարաբաստ, դժբախտ

Անընդհատ, շարունակ
Ածել 'ի կատարումն, լցնել
Պայման, վէճակ
Այնու զի, որովհետեւ
Կանխայարոյց, կանուխ ելնող

Կին ոմն այրի ժրագլուխ ունէր ընդ իւրեւ աղախնայս՝ զորս սովոր էր զարթուցանել յառաջնումն անդ հաւախօսի՝ վաստակ առաջի դնել նոցա 'ի գիշերի։

Զարաբաստ զանձինս համարեալ սոցա վասն անընդհատ վաստակոցն՝ 'ի մտի եդին սպանանել զաղաղաղ տանն, զի 'ի ձայնէ նորա յառնէր Տիկինն 'ի մէջ գիշերի։ Այլ 'ի կատարումն ածեալ զխորհուրդն զայն, դտան 'ի դժնդակագոյն պայմանի, այնու զի Տիրուհին իւրեանց ոչ եւս կարացեալ գիտել զժամ հաւախօսին, առաւել կանխայարոյց զարթուցանէր զնոսա 'ի քնոյ։

Բարոյական. Վկայէ առակս զի բազումք ձեռօք իւրեանց զհետ ձգեն զառիթ չարեաց։

29

ԾԱՌԻՔ ՊՏՂԱԲԵՐԻՔ ԵՒ ՈՒՂԵՒՈՐ

Դրախտ, պարտէզ
Արուագ, ընբ, ցամաք
Ի նանիր, պարապ տեղը
Դայեկել, պարտասուել
Տալ 'ի ճաշակ, ուտելու համար տալ
Ջամբել, տալ (կերակուր)
Կշտամբիլ, յանդիմանուիլ
Ինքնակոչ, ինքնիրեն եկող
Գարնանի (մկ.), գարնան ատեն

Ի դրախտ ուրեք 'ի Ձմերայնի մոռանէ այր ուղեւոր,
Քաղել պըտուղ 'ի ծառոց,
Եւ ոչ տերեւ յայնժամ գըտեալ 'ի նոսին,
Թըշնամանէր ամուլս արուագս ընդոստ։
Առ որ մի ոմն 'ի նոցանէ պատասխանեսայ հեզաբար.
«Մի տըրտմիր, այր դու, և մի զմեզ 'ի նանիր բամբասեր.
Զի Ձմերայնի թէ ոչ հանդչիմք զօրանալ,
Զկարեմք ծաղկել գարնայնի,
Եւ ոչ ըզմիրգս յամարայնի դայեկել,
Տալ զայնոսիկ քեզ յաշնայնի 'ի ճաշակ։
Ընդէ՞ր ոչ եկիր յայնժամ վայելել,
Ցորժամ մարդ և անասուն պըտղովք մերովք կերակրէր։
Թէ դու պատրաստ 'ի ճաշակել իցես միշտ,
Այլ ոչ և մեք՝ միշտ 'ի ջամբել քեզ ճաշակ»։
Սովին այսու առակաւ կըշտամբի հիւր ինքնակոչ,
Որ ճաշ յայլոց դայ պահանջել տարաժամ։

30

ՀԱՍԿՔ ԿՐԿԻՆ

Ցոյլ, ծոյլ
Բարձրամիտ, հպարտ
Զկծեցուցանել, սէրտը կսկծեցնել
Ցոխորտ, գոռոզ
Առակ արկանել, առակ ըսել

Գերանդի, դեզ հանգաղ
Ուղղաբերձ, գլուխը սղէղ
Խոլ, անդգ
Հակամէտ յերկիր, գեղջինը ծռած
Մնամէջ, դեղը պարապ

Առն միոջ էին երկու որդիք։ Մին 'ի նոցանէ յոյլ էր և անաւարտ, միւսն վաստակասէր և հեզ։ Եւ մինչ անդրանիկն բարձրամիտ զկծեցուցանէր յոխորտ բանիւք զսիրտ կրտսեր եղբօրն. լուաւ զայն հայր նոցա և արկ առակ մի այսպէս։ «Ի ժամանակի յորում հողագործն պատրաստէր գերանդիս 'ի հունձ, մի 'ի հասկաց՝ ուղղաբերձ ամբարձեալ զգլուխ իւր 'ի վեր՝ խոլ մնափառութեամբ ծաղր առնէր զայլովք՝ որոց գլուխք նոցա խոնարհեալ կային յերկիր հակամէտ։ Ցայնժամ ոմն 'ի նոցանէ ասէ ցնա.

«Թէ գլուխս էր քեզ ատոք 'ի ցորեան
Ոչ այնքան 'ի վեր ամբառնայիր զայն»։

Ի մնամէջ գլուխս լայնանիստ բնակէ հպարտութիւն»։

31

ԳԵՂՋՈՒԿ ԸՆԴ ԸՆԿՈՒՋԵՆԵԱՒ

Ընկողմանել, եան գալ
Շինական, գէղացի
Բարձրաձաղկ, ճէ-ղէրը բարձր
Ծիլ, ծիղ, (ֆիլիզ)
Նրբենի, բարակ
Ուր, մինդեռ

Ճահաւորիլ, վայելել
Ի միտս դալ, խելքը վրան գալ
Ի բարձու, բարձր տեղը
Բարձրաբերձ, գլուխը բարձր
Արմն, արմատ
Գլխովին, բոլորովին

Իմաստութեամբ և խորհրդով արար բնութիւն զամենայն։
Ընդ հովանեաւ ընկուզենւոյ ընկողմանեալ չինական,
Եւ զբարձրաճաղկ ծառոյն զմիրգսըն դիտելով փոքրրկունս,
Ուր մեծափոր դըդումբ 'ի ծիլ նըրբենի
Անդ առ արմին նորին աճէր ուռուցիկ։
«Քանի՞, ասէ, սա առաւել ճահաւորէր 'ի ծառին,
Եւ փոխանակ դըդմոյ ընկոյզն 'ի ծըղին։
Այլ մինչդեռ բանքըն դեռ կային 'ի բերան,
Մի յընկուզաց անտի անկաւ յընկողմելոյն 'ի ճակատ.
Ցայնժամ 'ի միտս եկեալ՝ «Ընտրհ.ք, ասէ, խնամոց Արարչին,
Որ 'ի բարձու անդ եդ ըզմիրգըն մանրիկ.
Զի եթէ զմիւսն էր անդ եդեալ բարձրաբերձ,
Արդ ըզճակատ իմ յանկանելըն ջախջախէր դըլխովին»։

32

Ա. ՆԶՐԵԻ

Գեղապայծառ, գեղեցիկ՝ պայծառ
Ուղխորէն, սելի պէս
Թափ անցանել, ճեղքեն անցնել (բառ-
Պարկ, փողբակ [նի մը)
Անհարթութիւնք օդոյ, օդին գեղ
Թանձրախիտ, շատ սըխ [երբեմն
Փոքր միւս եւս, էլ մեծ որ...
Հուղկահար, սաստկակ

Զգել, տալել, պաշարել (ղեռելը)
Մտրակ առնել, խարազանով ղարնել
Ասել ընդ ինքն, ինքնիրեն ըսել
Զի՛ անմտացայ, ի՞նչ անխելքութիւն
Տանել, հաղթերել [ըրէ
Վերախնամ տեսչութիւն, Աստ-
Երաշտ, ցրտ (օդ) [ուած
Զրաւիլ 'ի կենաց, կեռնելե վերջանալ
(մեռնիլ)

Վաճառական ոմն դառնայր 'ի շուկայէ հեծեալ 'ի ձի, ունելով ընդ իւր պարկ ինչ լի արծաթով. Տարափք արձրեւաց իջանէին ուղխորէն, և ողողէին զնա թափ անցեալ մինչեւ 'ի մարմին նորա։ Վասն այնորիկ տրտնջայր զՏեառնէ, զի ան-

հարթութիւնք օդոց ոչ 'ի ճահ պատահեցին՝ խափանելով ու-
ղեւորութեան իւրում։

Եւ ահա եմուտ յանտառ ուրեք Թանձրախիտ, և փոքր
միւս եւս անկանէր նուազեալ 'ի տեսիլ հուղկահարի մոյ՝
որ կայր մնայր յեղր ճանապարհին։ Խորհեցաւ սա ձգել
զհրաղէն իւր, այլ զի Թրմեալ էր վառօդն յանձրեւաց՝ չկա-
րաց հանել հուր, և վաճառականն մնրակ 'ի կուշտ արար-
եալ ձիոյն, զերծաւ 'ի փախուստ։

Եւ իբրեւ կայր յապահովի, ասէր ընդ ինքն. «Ո՛հ, զի՛
անմտացայ յոյժ, չհանդուրժեալ տանել տեղատարափից անձ-
րեւաց, որպէս ամենայնի՝ զոր յղէ առ մեզ վերնախնամ
Տեսչութիւն։ Եթէ երաշտ էին օդք և գեղապայծառ, արդ
եւս զրաւեալ էի 'ի կենաց. և կին իմ և որդեակք 'ի զո՞ւր
մնալոց էին դարձին իմում։ Անձրեւաւն՝ զորմէ տրտունջ բար-
ձի՝ հաս ինձ միանգամայն պահպանել զկեանս իմ և զինչս»։

33

ԵՂՋԵՐՈՒ ԱՌ ԱՂԲԵՐ

Զկայ առնուլ, կոյնէլ
Բազմաճիղ, ճիւղերբ շատ
Անգոսնել, արհամարհել
Նրբութիւն, բարակութիւն
Ամարեկ, սարսափած
Փախուստ առնուլ, փախչիլ

Բարակ, որոյ շուն
Ի դերեւ առնել, պարպել հանել
Միջամուխ լինել, մեջ մտնել
Կառչիլ, կենալ
Դժնեայ, չար գեղ
Ցոչիլ, կորոյ; կորոյ ըլլալ

Որ արհամարհ ինչ քեզ Թըւի և անարդ,
Օգտակար քան զոր դուվեսդ է յաճախ,
Վկայէ այսմիկ առաջիկայս քեզ առակ։
Եղջերու յրմնկելն ըզկայ առեալ յաղբեր,
Եւ յալիս անդ ըզպատկեր իւր տեսեալ,

Մինչ ընդ եղջերսըն բազմաճիղս ըսքանչանայր և գովէր,
Ըզսրբութեանցն անդոսնելով նրբութիւն,
Ի ձայնէ որսորդաց յանկարծակի ահաբեկ,
Փախուստ ընդ դաշտն առեալ թեթեւ ընթացիւք,
Ըզբարակացն արար ըզճիգն 'ի դերեւ։
Ի յանտառ անտի դիմեալ միջամուխ,
Կառեան եղջերք իւր արգելեալ 'ի կողերս,
Եւ 'ի դժնեայ շանց խածատեալ յօշեցաւ։
Աւանդեն 'ի մեռանելն յայնժամ այսպէս բարբառեալ.
«Աւաղ հիւրիս, անագան այժմիկ լինիմ խելամուտ.
Զի որ անարգք կարծեցեալ՝ պիտանեգոյնք դըստան լինէ,
Եւ որ թուէին գովելիք, եղո՞ւկ, կորուստ լինէ ածին»։

34

ԲԵԿՈՐ ՓԱՅՏԻ

Արկանել յարեւէ եւ յընչից, մեռ-
նիլ, նշան [ցընել և կողոպտել
Բուռն հարկանել զհետոց (ուս-
բուք), (մեկոս մը) հետուէն եռեւեռն
Զուառական, եռեղծ [երթալ
Ցակն անկանիլ, ուշէն ղբնուռել.
Ցերեկէ, առջէ օրուընէ [պեռնուռել
Անդապահ, արդէ պահապան
Եղեռն, ոճրագործութիւն
Ոստախիտ, ճեղքերը շատ
Ածել ինչ ընդ բանս, բան մ'ըսել
Շիղ, կոտոր [ասելցնել
Ունել 'ի դիպահոլ, բանդ դնել
Ցուրատ կալ, ուրանալ
Ի կիր առնուլ, գործածել
Ի վեր հանել, յայտնել

Ի միում 'ի ձմեռնային սաստկաշունչ աւուրց ընդ առաւօտան ուղեւոր ոմն դառնայր 'ի բնակութիւն իւր բարձեալ բերելով գումար մեծ արծաթոյ։ Ցանկեան ուրեք յանտառի անդ ըմբռնեցաւ յաւազակէ ոմեմնէ՝ որ արկ զնա յարեւէ և յընչից.

Մի ոմն ի պահապանաց անտառին մինչդեռ շուրջ զգնայր

ընդ այն, նշմարեաց նիշս արեան յեղը ուղղոյն և բուռն հարեալ զհետոյն սկսաւ ընթանալ մինչեւ եգիտ զմարմին չուառական ուղեւորին։ Ի նմին գիշերի Ատենական մերձակայ քաղաքին եկն 'ի տեղի անդր Ջահիւք վառելովք, և յակըն անկաւ նմա 'ի սեսարանի անդ եղերանն բեկոր մի փայտի, որ թուէր խլեալ յոստախիտ գաւազանէ, և առանց ընդ բանս ինչ ածելոյ ընդ ումեք, առ զայն և պահեաց զգուշութեամբ։

Ի վաղիւ անդր 'ի մռանել իւրում յատեան խորհրդոյն, եռեռ յանկեան ուրեք սրահին զգաւազան անդապահին, և մատուցեալ 'ի զնին ծանեաւ զի պակասեր 'ի նմա չիղ փայտի յար և նման նմին՝ զոր յերեկէ գտեալն էր առընթեր դիական ուղեւորին։

Կասկած 'ի միտս նորա անկաւ եթէ մի գուցէ անդապահին գործեալ լցէ զեղեռնն զայն. և խոկոյն եռ ըղնա ունել 'ի դիպահոջ։

Մարդասպանն նախ յուրաստ եկաց ամենեւին, այլ իբրեւ ցուցաւ նմա բեկորն փայտի՝ որ 'ի ճահ գայր գաւազանին իւրում, հատան գոյնք երեսաց նորա, և խոստովան եղեւ զոճիրն։ Դատապարտեցաւ անդէն 'ի մահ, առաջի ամբոխի բազմութեան, որ հիացեալ զարմանային եթէ զի՞արդ Նախանամութիւնն աստուածային 'ի կիր առնու երբեմն հրնարս դուղնաբեայս, առ 'ի վեր հանել զգաղտնածածուկ եղերունս։



35

ՀԱՑՐ ԵՒ ՈՐԴԻ

Հետեւակ, ոտոտվ տալոզ	Հետի, ոտոտվ (եոյան)
Անցաւոր, անցորդ	Պարսաւադէտ, պակասը գէպոզ
Նուս, կոնակը (յեոյն, էշոյն)	Կազմ, պատրաստ
Ողնաբեկիլ, ծերէն ոսկրը կոտրել	Անփոյթ առնել, հոգ չընել
Զի՞նչ եւս առնել էր, ալ ի՞նչ ընէր	Պատշաճ, յարմար, օրէնաւոր
Խնուլ, գոցել	Կծանել, կծել, ցաւցնել

Ուղեւորէր հանդերձ որդւովքն պատանեաւ Նասրէտտին,
Ինքն հետեւակ՝ յէշ ըզմանուկն հեծուցեալ։
Անցաւորաց ոմանց տեսեալ զայն, ասեն
«Տեսէք զորդի ստահակ զի գնայ հեծեալ առոյգ հասակաւ,
Հետեւակել հօրն տալով ծերունւոյ»։
Յայնժամ իջեալ մանկանն, ըզհայրն հեծուցանէ 'ի գրաստուն.
Անցանեն այլք, անգութ ըզհայրն կոչեն,
Զի գնայր հեծեալ և զհէր մանուկն աշխատ առնէր 'ի տօթի.
Ծերն ըզմտաւ ած և զորդին առնուլ ըզհետ իւր 'ի նուս.
Եւս առաւելք յայնժամ 'ի գրաստն ողորմեալ,
«Ողնաբեկի արդ, ասեն, ալք անողորմք, հէրն յաւանակ»։
Զի՞նչ եւս առնել էր ըզբերան հասարակաց առ 'ի խնուլ.
Իջին յերկիր, գնային հետի երկոքեան,
Ըզգրաստ ըզհետ իւրեանց անբեռն ածելով։
Եւ ոչ այնու պարսաւադէտք լռեցին,
Դարձեալ անմիտս կոչելով ըզնոսա,
Զի գրաստ ունայն զէշն ընդ իւրեանս ածէին,
Վաստակաբեկք ինքեանք 'ի գնալ առ 'ի խնայումն անբանին.
Այսպէս ուսոյց Ծերն ըզոամկին անփոյթ առնել գատաստան.
Զի և զպատշաճն 'ի կրծանել կազմ և պատրաստ է պարսաւ։

36

ՃԱՆՃ ԵՒ ԱՌԻԻԾ

Ոչ ինչ երկիւղ է ինձ 'ի քէն, ընդ
Լերկ, տաղ ըստ ենցոց [քեռնոյ ենեն
Անցանել զանցանել, [ենոյ գերեզ-
Աղէ՛, (հա՛յոյ) [ղանցել
Մատչիլ 'ի գուսպար, կոսէլ

Զայնատուր լինել, սպասիցեն կոյսք
Սարդի ոստայն, (եօրէ-մտնէ)
Կոծել, ծեծկոտելով լալ
Զգեստնել, գեղջնը ղրնել
Անողորմ (մկ.), անգութ կերպով

Մատեան Ճանճ յԱռիւծ և ասէ ցնա «Ոչ ինչ երկիւղ է ինձ 'ի քէն, զի չես դու զ որ հզօր քան զիս, եթէ կցէ այս այսպէս, ո՞ւր ապա գտանիցի զօրութիւն քո։ Մի թէ այնո՞ւ կցես ահարկու, զի պատառես զայլս ճիրանաւ, և ժանեօքդ խաժատես, այդչափ ինչ կարող է առնուլ կին՝ որ ընդ իւր ամուսնոյն կռուիցէ։ Բայց անցեալ զանցանեմ ես զքեզ, և եթէ կամիս, աղէ՛, մատիցուք 'ի գուսպար»։

Եւ յայնժամ ձայնատուր լեալ 'ի մարտ, յարձակեցաւ յԱռիւծ և կծանէր զքիթ նորա և զլերկ մաշկ ռնգացն։ Իսկ սա իւրով ճիրանաւն պատառէր զանձն իւր, և ոչ ինչ կարաց ազդել 'ի նա։ Ճանճ՝ յաղթական Առիւծու՝ եհար փող, յեղանակեաց երգ յաղթութեան և թռեաւ 'ի բաց։ Բայց 'ի թռիչն արգելաւ յոստան ուրեք սարդի՝ որ սկսաւ ծծել զարիւն նորա, և նա կոծէր ողբայր յայնժամ զի ընդ մեծագոյն կենդանիս 'ի կռիւ եկեալ՝ սատակմամբ կորնչէր 'ի ձեռանէ սարդին։

Բարոյական. Ի դէպ ելանէ առակս ոլոց զգեստնեալ զմեծամեծ թշնամիս, 'ի փոքունց ապա ընկճին անողորմ։

37

ԿԱՏՈՒ ԵՒ ՈՂՆԻ

Ցանձն եղանիլ, ենդղենը յանձնել
Գուրթ, ուբ, գոբով
Սան, յեռէ գակ ռեծցած գաղայ
Խաբուսիկ, խաբեբայ
Կորիւն, յոգ (շան, կապայ եւլն.)
Ըմբռնիլ՝ անկանիլ 'ի պատրանս,
խաբուել

Որ յանձն 'ի լնաման ամպարըշտին եղանի,
Զանմըտութիւն իւր ողբայցէ անագան։
Կատուոյ կեղծեալ գուրթ ընդ Ողնի, թախանձէր
Առնուլ զորդեակ նորին փոքրիկ իւր 'ի սան։
Եւ մօրն 'ի յանձն առնուլ զայն,
Ցաւել թէ՝ «Զէ մարթ ըզմանկիկն առնուլ 'ի գիրկս գըգուել.
Մերկեա 'ի փշոց, զի կարացիս առնուլ ըզդա 'ի համբոյր։
Ըմբռնեցաւ մայրն 'ի պատրանս ընդ խաբուսիկըն գորով,
Եւ 'ի յանձնել նըմա զկորիւն իւր անգէն,
Ելաց զանմիտ վրստահութիւնն 'ի ճարակել զայն նորին։

38

ԿԱՏՈՒ ԵՒ ՄԿՈՒՆԲ

Աւուր աւուր, (մկ.) օրէ օր
Բնաւք, ամենը
Զերծ կալ, ազատ մնալ
Ցինքն ձգել, էրեն փաշել
Նիւթել, պապրատել. խորհել
Օղամանեակ, (հալքա)
Բեւեռեալ, գամուած
Գլխովին, էակ (պէկ)

Բազմութիւն յոյժ էր Մկանց 'ի տան ուրեք, զոր գիտե-
լով Կատուի՝ եհաս անդր և ըմբռնեալ մի ըստ միոջէ

խեղդամահ սպանանէր։ Տեսեալ Մկանց զի աւուր աւուր պակասէր թիւ իւրեանց, ասէն ցմիմեանս. «Մի եւս իջցուք ի վայր, զի մի բնաւիցս հասցէ կորուստ, և Կատուի ոչ կա-լացեալ ելանել մինչեւ ցայսր, զերծ կացցուք 'ի վտան-գէց»։ Իբրեւ ոչ եւս իջանէին Մկունք, խորհեցաւ կա-տու ձգել զնոսա յինքն՝ խոլամանկութիւն ընդդէմ նոցին նիւթելով։ Եւ ապա յօղամանեակ մի երկաթի՝ որ բեւեռեալ կայր 'ի ձեղուան, և կախեալ զայնմանէ՝ կեղծէր զանձն մեռեալ։ Բայց մի 'ի Մկանց անտի հանեալ զգլուխ իւր արտաքս ընդ ծակն և տեսեալ զնա, ասէ ցնա. «Բարեկամ, եթէ եղիցիս պարկ ինչ գլխովին, ոչ մերձեցայց առ քեզ»։

Բարոյական. Խրատեաց այսու առակաւ՝ զի ալք խոհեմք եթէ միանգամ առցեն զվորձ չարութեանց մարդկան, ոչ եւս այնուհետեւ կեղծեաք նոցա անկանին 'ի պատրանս։

39

ՊԱՐ ՄԵՂՈՒԱՑ

Նարդոս, դեռակ մը ամբոսալ
Հոյլ ի հոյլ, խոմբ խոմբ
Հոյզ, հէր,
Պան, դեղբեն խոբեսեալ (կեռդ)
Ամրոց, բերդ
Բջիջ, կոճակեն այսինքն քէրնակեն [ծակերը
Եկաւոր
Կալ ի պահ, պահպանութիւն ընել
Պարունակել, շրջապատել
Թիկնապահ, արքայի պահպանութիւն
Մրկուզ, ընկեն [ընող (ղբրի)
Գրոհ, բաղմութիւն, ժողովուրդ
Բոյծ, անուանդ
Մամակերտ, մամով շինուած

Թէ քանիցն է առաւել օգտակար
Օգնել միմեանց և միաբան 'ի միասին վաստակել,
Առաջիկայ օրինակաւըս ցուցից։
Մեղուաց գործն պար 'ի ծաղկունս համասփիւռ,

Որ 'ի նարդոս, որ 'ի ծոթոր, որ հոյլ 'ի հոյլ մանիշակ,
Բարձեալ բերին հոյզ ընդ երեկս անոյշ 'ի պան խորբսխին.
Արուեստակեն այլք ըղբըջիջ մոմակերտ.
Այլք զարբայիւ պարուն ակեալ թիկնապահք,
Կէսք ըղմանկտին՝ ըղլոյս գրոհին դայեկեն,
Ջեկաւորացն ըղբեռն առնուն այլք 'ի բաց
Եռայ վաստակն, և բոլորից 'ի նոյն 'ի գործ լեալ աշխատ՝
Նախահոգակք ճմերայնոյ պաշար ինքեանց ամբարեն։
Այսպէս մըրգուղն այն թըռչնիկ
Որ միայնակ՝ անձեռընհատն է 'ի գործ,
Ոչ զիւրն եւեթ լընու ըզպէտս
Ի միասին վաստակելով ընդ այլոց,
Այլ և հանուրց պատրաստէ
Մեղր 'ի ճաշակ, բոյծ 'ի լոյս։

40

ՄԱՆՈՒԿՆ ԿՈՎԱՐԱԾ

Շրջշրջել, ըբ՝ կոմ դարձնել
Սողսկիլ, պլտ՝ել՝ սողլտվ
Առաթուր, ոտէ՝ ոտ
Կորակոր, ամենեն վար նայելով
Կոխան առնել, կոխել
Ամենապարտ, ամենեն ընկճած
Ի խոնարհ արկանել (զաչս), (աչ՝
Աթուր, ոտ՝ [էք) քեռոնք ծռել

Մանուկ ոմն արածէր զկով իւր 'ի մարգագետնի ուրեք՝ առ որով տարածանէր պարտէզ գեղեցիկ։ Շրջշրջեալ կաչս իւր յայսկոյս և յայն, եռեռ կեռասենի մի ծանրաբեռեալ կարմիր բերանգ պտղով. և վազվազակի թողեալ զանասունն՝ սողսկեցաւ ել 'ի ծառ անդր առ 'ի քաղել զայնոսիկ, իսկ կովն համարելով զինքն համարձակեալ, եմուտ 'ի պարտէզն յայն, ճարակեցաւ զբաղումս 'ի չքնաղագիւտ տնկոց, առաթուր

կոխելով և զայլս։ Պահապան մանկանն տեսեալ զնա 'ի պարտիզին՝ փութացաւ էջ 'ի ծառոյն, և դիմեալ 'ի նա, գաւազանաւն եհար զնա ուժգին։

Ցայնժամ խոյս տուեալ հիքին 'ի հարուածոց անտի՝ կոխան արար ընդ ոտիւք զածուս ծաղկազուարճս։ Իսկ հայր մանկանն դիտելով զայս ամենայն 'ի հեռուստ՝ եկն մատեաւ առ որդի իւր և ասէ ցնա. «Ո՞ ուրեմն իցէ արժանի այդ օրինակ ուղղութեան, դո՞ւ, երթէ անասնեակն, զի ոչ ճանաչէ նա զբարի և ոչ զչար, իսկ դու ընդհակառակն թերացեալ դատանիս նախ 'ի պարտուցդ պահ ունելոյ նմա, և ոչ այսչափ միայն, այլ և 'ի զայրոյթ դրդռեալ՝ իբրեւ անբան ոք վարեցար ընդ նմա։

Ամօթապարտ և կորակոր զաչս 'ի խոնարհ արկեալ մանկանն, խոստացաւ այնուհետեւ խնամովք հսկել կենդանւոյն և մի ուրեք տալ զանձն 'ի բարկութիւն։

41

ՄՈՒՐԱՑԻԿ ԵՒ ՆԱՍՐԷՏՏԻՆ

Ի ճահ, յոբմոբ
Կառուցանել, շինել
Ստիպաւ, (ստիպել)
Խարխուլ, խոխոտ

Ճիգն, ջանք աշխատութիւն, ջանք
Կարկառել զաչ, աչքերէնդնել
Լնուլ լցոյլ, լեցընելով լեցընել այսինքն՝ շատ լեցնել

Տաժանումն, յոգնութիւն

Ի ճահ իւրում անմտութեան խրատել զանմիտն է արժան։ Երբեմն իւր տուն կառուցանէր Հաղարացին Նասրէտտին։ Առ շինուածովն ըզկայ առեալ մուրացիկ ոմն անցաւոր, Բարձր 'ի տանեացն 'ի վայր կոչէ զճարտարապետն ըստիպաւ։ Նա ընդ խարխուլ սանդուղս 'ի վայր ճրգամբ մեծաւ իջանէ. Եւ իբրեւ գայ, ողորմութիւն 'ի նմանէ

Կարկառելով զաջ մուրացիկն խնդրէր։
Ցայնժամ ըզհետ իւր 'ի վեր
Ընդ նոյն սանդուղս ըզնա նովին տաժանմամբ
Ածեալ մինչեւ անդր 'ի տանիս, ասէ ցնա Ծերունին,
« Լընուլ լըցցէ տէր ինքն ըզպէտըս քոյին »։

42

ԳԱՆՁԱՊԱՀ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ

Ի սկզբան անդ, ՈՒՈՒՉ	Վարել կենցաղ, ՈՂԲԷԼ
Աւագութիւն, ՌԵՃ ՊՇՂԾՆ ՊՈՊԷՈՒ	Հարուստ, ՀԷՂԴ (ԲՈՀՈՒ)
Արդարամտութիւն, ՀՈՒՈՒՊՈՒԲՄՈՒՈՒ	Մատիսն կալ, ՄՈՊՃՄԱՆ ՌԵՉ ԿԷՆՈՒԼ
Ցաճախել, ՇՈՒՊՈՒԼ [ՌԷՈՒ	Գնացք, ԸՆԹՈՑԻ, ՎԱՐԻ
Ցանձն էին նմա, ԱՆՈՐ ՅԱՆՁՆՈՒՈՒՃ	Ձեռնթափ լինել, ՅԵՈՒ ԻՈՒՇԷԼ
Թանկագին, ՈՈՒՉ [ԷԷՆ	Վեհ, ԲՈՒՅՐ
Ցաւելուլ, ՈՒԵԼՅՆԵԼ ԸՈՒԵԼ ԴՈՒՅՆԵՈՒԼ	Ցասումն, ԲՈՒԿՈՒՌԷՈՒ

Թագաւորի ումեմն պարսկի յոյժ սիրելի էր դանձապահ իւր, որ 'ի սկզբան անդ ոչ այլ ինչ էր բայց հովիւ պարզ, և ապա ելեալ 'ի բարձրագոյն աւագութիւնս, արդարամտութեամբն իւրով և հանճարով։

Վասն որոյ յաճախեցին նմա նախանձաւորք, և ամբաստան եղեն զնմանէ առ իշխանն իրբ այն թէ խորէր նա յարծաթոյ և 'ի թանկագին իրաց անտի՝ որ յանձն էին նմա։ Եւ յաւելուին զի պահէր զայնոսիկ զգուշութեամբ 'ի սենեկի ուրեք փակելոյ ահագին դրամբ երկաթեաւ։ Եւ իրրեւ յայց էլ իշխանն նախարարին իւրում, եռեալ արդարեւ դուռն մի գաղտնի, որպէս պատմեցաւ նմա։ Վաղվաղակի ետ բանալ զայն և յապուշ հարաւ ոչ այլ ինչ գտանելով անդ բայց

սրինդ մի և եթ, ցուպ և մախաղ և աղքատին հանդերձս հոլուական։

Գանձապահին տեսեալ յայնժամ զզարմացումն տեառն իւրոյ, ասէ. «Հոլուական վարէի կենցաղ 'ի մանկութեան իմում, և դու, ո՛վ արքայ, դու ետուր ինձ թողուլ զքանել զպայմանն իմ նախկին առ 'ի յանձն առնել ինձ զմեծամեծ պաշտամունս՝ զոր ընում։ Զօրհանապազ մոռանեմ 'ի սենեակ այսր՝ հարուստ մի ժամ կալ մոռախոհ յառաջին վաստակս, և սրնդաւս յեղանակել երգս ախորժելիս յունկն իմ, որպէս երբեմն նուագէի 'ի գովեստ Արարչին։ Թուի ինձ եթէ չարաչարաչարեալ է ոմանց զգնացից իմոց։ Ներեսջիր ինձ արդ ձեռընթափ լինել 'ի գործոցս և դառնալ 'ի հայրենիս ուր անցուցի զբարեբաստագոյն աւուրս կենցաղոյս»։

Խելամուտ եղեւ իշխանն վերիոյ առաքինութեանց պաշտօնէին և գրգռեալ 'ի ցասումն ընդդէմ չարախօսաց նորին, դիրկս էարկ գանձապահին իւրում և ոչ միայն չեթող նմա հեռանալ 'ի նմանէ, այլ և հաստատեաց զնա 'ի պաշտամունս իւր, և մեծապարգեւ մեծարեաց զնա։

43

ԿՈՒԻ ՄԿԱՆՑ ԵՒ ԱՔՍԻՑ

Խաժամուժ, «ինչոր ժողովուրդ
Ի պարտութիւն մատնիլ, յաղթուել
Տալ ճաշակ, կռուել
Աքիս, (կելինձիւ) անասուն
Վէպ, պատմութիւն
Լայնատարր, ընդարձակ, լայն
Անդնդախոր, շատ խորունկ
Անձաւ, (մաղարա)
Նուրբ, քաղաք
Կապելայ, գինեպուն
Հապշտապ, (վախեն) ահեղ
Մաղապուր զերծանիլ, հաղթ-
Սաղար, ջրավար [ապրիլ
Արկածք, գլխու եկած վտանգ
Աղն, ինք, աղի
Աւազանի, պերպերեան մը ծածերը

Ի պարտութիւն մատնեալ Մկանց 'ի տալ ճակատ ընդ Աքսից,
(Որոց վէպք 'ի կապելայս նըկարին),
Մինչ դառնային 'ի փախուստ,
Հաղիւ անկեալ 'ի նուրբ ծակտի հապշտապ,
Ջերծան ուրեմն 'ի մահուանէ մազապուր։
Բայց սաղարք նոցին եղջերս 'ի գլուխ իւրեանց բերելով,
Նշանաւորս 'ի ճակատուն երեւել
Զի զհետ իւրեանց այլ զօրականքն գայցէ,
Կառեան 'ի դրունս անդ և գերի 'ի թշնամեաց վարեցան.
Զորըս զենեալ յաղթականին, սովեալ ժանեօք առ ընկլոյզ
Ի լայնատարր որովայնին յանդնդախորն 'ի յանձաւ։
Ցորժամ արկածք չարեաց զաղինքս շուրջ պատեալ պաշարեն,
Վրանդի աւադանին, իսկ խաժամուժքն դիւրաւ
Պառաստարեալ գտանէ անձին ապաստան։

44

ԵՐԵՔԻՆ ԿԱՐՄՐԱԽԱՑՏ ՁԿՈՒՆՔ

Բարեբաստ, Երջանիկ
Խաղխամ, (Փորմաքլեք)
Լայնածաւալ, Խիստ լայն
Ծուփք, (Ջրոյն) երեսը
Մկանունք (Ջուրց), (Ջրերուն) երեսը
Առ ինչ, Ի՞նչու համար
Ճախր առնուլ 'ի ճեմ, Թռչելու [տեղն Ռուսիէլ, Յոտկիլ
Խայտալ, Յոտկիլ (ուրուխուրենեն)

Առն միոջ էին երրեակ ձկունք ոսկեփայլք՝ զորս եդեալ յականակիտ ալիս լճակի, արկանէր նոցա յաճախ փշրանս հացի՝ ասելով. «Ձկունք մանրիկք, եթէ կամիք լինել բարեբաստք, մի անցանիցէք երբէք ըստ խաղխամդ այդ՝ երթալ 'ի լայնածաւալ լիճ անդր՝ որ առընթեր կայ, և մի լողայցէք ընդ մկանունս ջուրց յորում ժամու չեղէց ես առ ձեզք»։

Ի միում աւուրց ասեն ցմիմեանս լճաբնակքն. «Ահա արդարեւ այր խստասիրտ, որ 'ի տանջանս մեր դնէ զհաճոյս իւր. առ ի՞նչ ոչ 'ի վեր ելցուք երբեմն 'ի ծուփս անդ ալեաց, և զի՞նչ վտանգ իցէ մեզ եթէ գնասցուք 'ի լիճ անդր»։

Ասէ մի 'ի նոցանէ. «Երթայց անդր ճախր առնուլ 'ի ճեմ»։ «Եւ ես, ասէ միւսն, զբօսայց սակաւիկ ինչ յարեւու»։ Սակայն երրորդն ասէր ընդ միտս իւր. «Այլս այս սիրէ զմեզ, զի յոյժ ցանկալի է նմա վայելել 'ի տեսիլ մեր, և ջամբել մեզ վշրանս հացի։ Անշուշտ իրաւունք են նմա արգելլոյ զմեզ զայս, և ես թէպէտեւ անգէտ պատճառացն, այլ սակայն հպատակ եղէց»։

Եկաց մնաց նա 'ի խորս անդ ջուրցն, թէպէտեւ խաղ առնէին զնովաւ եղբարք իւր և ծեծաղէին զանմեղութեամբ նորա։ Այլ զի՞նչ դէպ եղեւ։

Որ չոգաւն 'ի լիճ անդր մեծատարած, եկուլ զնա գայլաձուկն մի, և անդղ 'ի վերայ հասեալ խայտացելումն ընդ երեսս ջուրց՝ յափշտակեալ զնա յօդս 'ի վեր և ճարակեցաւ։

Մի և եթ ոք զերծ եկաց յաղետից անտի. այս այն է՝ որ իմաստուն դտաւ և հնազանդ։

45

ԱՂՈՒԷՍ ԵՒ ՆՈԽԱՋ

Հնարիլ, ջանալ
Խուսափել, փոխել
Ցանգէտս, չգիտնալով
Ոլորտ, բոլորտիւ, կողերն
Նոխազ, արու այծ
Ծարաւահիւծ, ծարաւէն մաշած՝ հաճ
Ցորդառատ, շատ արագ
Դաւանս նիւթել, խաբէութիւն ընել
Ճահիճ, (պուրտ)
Ալեւոր, ճերմակ մազեր ունեցող ծեր
Ի վեր վազել, վէր ցատկել
Շրջափակ, ջրս կողմը գոց

Այր խորամանկ եթէ 'ի վտանգ անկանի
Վնասուք այլոց հնարի անտի խուսափել։

Աղուիսու անկեալ յանդէաս 'ի ջրհոր,
Մինչդեռ փակեալ կայր շուրջ 'ի բարձր ողորմից,
Դիմեալ Նոխազ ծարաւահիւծ 'ի նոյն վայր.
Եհարց թէ քաղցր էր ջուրն և էր յորդառատ,
Իսկ նա դաւանս նիւթելով «Էջ այսր, ասէ, բարեկամ,
Այնքան է ջրոյս քաղցրութիւն, զի ոչ յագիմ ըմպելով»։
Եւ իբրեւ էջ Աղուէսն,
Աղուէսն ընդոստ ընդ բարձր եղջերսն 'ի վեր վաղեաց 'ի դրբոյն
Եւ ըզմոխազն եթող խրբեալ 'ի չրջափակ ճահճի անդ։

46

ՇԱԳԱՆԱԿԲ

Որկրամոլ, շատակեր
Թիսաթոյր, փոյնը Ռուխ (Եսմեր)
Երկբայել, տարակուսել
Առնուլ գնոց, ապակով առնուլ
Նա աւանիկ, Նա մանաւանդ
Բռնալիր, ափը լեցուն
Հրանուտ, կրակ դարձած
Գազախ, հրեէր
Շչիկ, սուլէլ
Արագ արագ, շուտ շուտ
Վերառաքել, վեր հանել
Գողանք, փողցուած բան
Ազգի ազգի, տեսակ տեսակ

Մատթէոս էր մանուկ ոմն յոյժ որկրամոլ։ Ի միում յաւուրց եառեալ 'ի վաճառականոցի ուրեք շագանակս գեղեցիկս, և զի չէր երբեք նորա ճաշակեալ անտի, եհարց ցվաճառող կինն՝ եթէ լաւագոյնք ինչ արդեօք էին պտուղքն այնոքիկ թիսաթոյրք։

Պատասխանի եառ կինն և ասէ. «Զիք ընդ այդ երկբայել. գնոց առ 'ի սմանէ, տէր իմ պատանեկիկ. և տեսցես քանիցն անուշահամք են պտուղքս, նա աւանիկ յորժամ եփեալ լիցին ընդ ջերմաջերմ մոխրով»։

Ա.յլ Մատթէի զամենայն զարծաթ իւր սպառեալ վասն ազգի ազգի մրգաց, մնայր դարձուցանելոյ վաճառողին զթիկունսն, և յայնժամ ձգեալ զձեռն իւր 'ի կողով անդր շագանակացն՝ էառ բռնալիր և խոյս ետ անդէն։

Ապա եկեալ 'ի տուն գաղտագողի էջ 'ի խոհանոցն, և ոչ զոր գտեալ անդ՝ անցեալ եկայ առ կրակարանին, և եդ ըզշագանակսըն ընդ հրանուտ գաղախաւն, և իբրեւ 'ի ջերմութենէ անտի սկսան շչել, նորա զուարճացեալ 'ի ձայնէ նոցին, և վասն արագ արագ եւս խորովելոյ զայնոսիկ, ծածկեաց ընդ բոցավառ ածխովք, և փչէր ուժգին։ Ցանկարծ մի 'ի շագանակաց անտի պայթուցեալ մոխիրս և ածուխս վերառաքեաց ընդ երեսս խօթամիտ մանկանն, որ մեծագոչ աղաղակաւ ընթանայր վեր 'ի վայր ընդ տունն բոլոր, որպէս թէ զլոյս աչացն կորուսեալ։ Ի ճայթմանէ անտի և 'ի գոչիւն աղաղակի մանկանն, ծնողք նորա և սպասաւորք որ 'ի տանն՝ զահի հարեալ ընթացան։ Յայնժամ յայտնեցան գողոնք նորա, որովք յանցապարտ զանձն կացուցեալ էր, և շատ խակ կրեաց տառապանս մինչև յաչացն բժշկել, և խելամուտ եղեւ զի որկրամոլութիւն թերութիւն է անարգ, որ և ըզմարդիկ առաջնորդեալ կարէ ածել 'ի գողոնս։

47

ԱՒԱԶԱԿ ԵՒ ԲԱՀԱՆԱՑ

Հուժկու, ուժէղ	Զհետ ձգել, ետեւէն փաղել
Արի, փաղ	Ուժգնապիրկ, ուժգին կապկպած
Կորզել, խլել, յափշտակել	Սուսեր, սուր

Բարիս յայլոց յանիրաւի պահանջէ այր չարագործ։
Ցաւաղակէ յանկարծ երբեմն ըմբռնեալ

Քահանայ ոմն, հուժկու բազկաւ և արի,
Կորզեաց ըզսուր 'ի ձեռանէ ասոխին.
Եւ զնա ըզհետ առեալ ձըգէր ուժգնապիրկ։
Աղաչաւոր յայնժամ գողն արկ զայս աղերս.
«Խնայեա՛ դու յիս որ հանապազ 'ի բեմին
«Խաղաղութիւն ամենեցուն» քարոզես»։
Ուստ քահանայն՝ «խաղաղութիւն արդարութեամբ յաջողէ»
Ասաց և զնա սուսերըն հանդերձ ած աւանդեաց առենի։

48

ԱՌԻԻԾ ԵՒ ՄՈՒԿՆ

Ողջոյն, ողջոյն
Թաւալգլոր անկանել, գլորել, գնալ
Աղերսական, աղաչող
Երթ յետս իմ, կորուսցէ անդրէն
Խրոխտապանծ, գոռոզաբարոյ
Վարմ, որոգայթ (գոռգոռ)
Դէմ դնել, երթալ
Մանուածապատ, ոլորած՝ պատած
Պրծել, խուսափել
Ծայրասուր, ծայրը սուր
Եղծանիլ, աւրուել (ջնջուիլ)
Ապրիլ, աղատիլ
Բանս 'ի մէջ արկանել, խօսք բանալ
Նորանշան, զարմանալի [ընել

Զօրն ողջոյն պարտասեալ յորսոյ՝ ննջէր Առիւծ յայրի ուրէք շուրջ զորով դրօսնոյր ամբոխ բազմութեան Մկանց։ Մի 'ի նոցանէ 'ի սողոսկել ընդ ժայռս 'ի վեր՝ թաւալգլոր անկաւ 'ի վերայ Առիւծու՝ ոյր ընդոստ 'ի քնոյ լեալ՝ կալաւ ըզխօթամիտն հզօր ճիրանաւն իւրոյ։ Աղաչէր զնա Մուկն աղերսական բարբառով և ասէ. «Ցիս, ո՛ Առիւծ, յակամայից մեղայ քեզ, զի ոչ կարացեալ կալ յոտին սահեալ անկայ 'ի վերայ քո։ Օրհաս մահուս ոչ յիմիք լիցի քեզ պիտանացու. արդ չնորհեա ինձ զկեանս իմ, և ծանիցես զիս արդեօք երախտապարտ քեզ մինչ 'ի սպառ»։

«Երթ յետս իմ» գոչեաց Առիւծն խրոխտապանծ, 'ի վեր առեալ զճիրան իւր, և Մուկն ոչ մնալով պատասխանուոյ՝ խոյս ետ արագընթաց։

Իսկ Աղքայն անասնոց 'ի մտանելն անդէն 'ի քուն, ոչ դադարէր 'ի մրմռելոյ, «Թուի ինձ, ասէր, զի զերախտագիտութիւնն բանս արկ նա 'ի մէջ, նորանչան իմն է գիտել թէ զիարդ կամ ի՞նչ իւիք մարթ իցէ ինձ դոլ երախտապարտ Մըկան»։ Յետ սուղ ժամանակաց մինչդեռ 'ի խնդիր կաղնոյ շրջէր Մուկն ընդ անտառս՝ լուաւ մռնչիւն իմն յուսահատ, և ասէր դէմ եդեալ յայն կողմն. «Ահա առիւծ մի անկեալ 'ի վտանգ»։ Ապաքէն ետես յայնժամ զԱռիւծն՝ որ խնայեաց երբեմն 'ի կեանս իւր ընթռնեալ յորոգայթ, զոր ոմն յորսորդաց եդեալ էր յորս երէոց։ Լաւք նորա ճարտարօրէն հիւսեալք մանուածապատ պրկեալ կային շուրջ զթաթիւք Առիւծուն, ցորչափ գուն գործէր նա պրծել զանձն 'ի վտանգէն, և ոչ ինչ օգնէին նմա ոչ ճիրանք նորա ահարկուք և ոչ ժանիք ծայրասուրք։

Յայնժամ ասէ Մուկն. «Կաց մնա սիրեցեալդ իմ, թէ՞ երեւս եղէց քեզ պիտանի»։ Զայս ասացեալ սկսաւ կրծել ըզթելս վարմիցն, որ մի ըստ միոջէ քակեալ և եղծեալ՝ ելս փախստեան ետուն Առիւծուն։ Եւ այսպէս ապրեցաւ նա 'ի ձեռն Մկանն։

Տե՛ս քանիցն ճշմարիտ է զի ամենայն ոք կարօտ գտանի փոքրագունի ումեք քան զինքն, զի ամենայն գործք բարիք զարժանաւորն ընդունին զվարձ։

49

ԿԱՂԻՆ

Անյողդողդ, հաստատամիտ
Արդարակորով, շատ շէտակ մարդ
Խիթալի, կամակոծելի
Որեար (յոգ.), մարդէն
Ապարանք, պալատ
Ցելուզակ, ատաղձակ
Ցարդիւնս ածել, յոռոմալ բերբել՝ կոտորել
Սայրասուր, բերանը սուր
Բուռն հարկանել, բռնել
Մնարք, ելեւոյն վերէ դէն
Շեշտ, շէտակ (շրջնելը)
Զէնընկէց լինել, զէնուը յիթել
Կաշկանդել, կապել
Վասն էր (գոյ.), պատճառ
Խնճեպ, կեղեւ

Ծերունի կոմն Հենրիկոս էր այր անյողդողդ և արդարակորով։ Որչափ սիրելի էր նա բարեաց՝ այնչափ ատելի իսկ էր և խիթալի չարամիտ որերոյ։ Ստահակք յոգունք՝ որ 'ի դիպահոլ կալեալ էին վասն դժնեից գործոց ինչ իւրեանց, միաբանեցին ընդ միմեանս, և վարձս խոստացան միում յինքեանց եթէ սպանցէ զնա 'ի վաղիւ անդր 'ի գիշերի։

Ի նմին աւուր երբեորդիւք կոմսոյն յայց եկին առ նա։ Հաճ և գոհ ընդ տեսիլ սիրալիր մանկանցն, պաշտեաց անդէն նոցա՝ և տանձ և խնձոր և ողկոյզս խաղողոյ և կաղինս և միրգս ազգի ազգիս։ Իբրեւ մեկնեցան նոքա, և ինքն չոքաւ 'ի քուն մնանել՝ յանձն եղեալ 'ի պաշտպանութիւն Ցեառն և ննջեաց անխռով։

Ի մէջ գիշերի՝ մարդասպանն որ գաղտագողի մտեալ էր յապարանսն, եկն 'ի սենեակ անդր և առաջնորդեալ 'ի լոյս ճրագի՝ մերձ մատեաւ յանկողին կոմսոյն, ունելով յաջում դաշոյն սայրասուր։

Այլ յեղակարծ լսելի եղեւ ճայթիւն մեծաձայն, և կոմսն ընդոստ 'ի քնոյ յարուցեալ ետես զչարագործն. բուռն եհար իսկոյն զհրացանէն որ կախեալ կայր առ մնարիւք մահճին

և իբրեւ պատրաստէր արձակել զայն շեշտ 'ի հարուած, յելուզակն՝ զդողանի հարեալ և զէնընկէց եղեալ՝ խնդրէր 'ի նմանէ շնորհել զկեանսն։

Ցայնժամ կոմսոյն կոչեալ զսպասաւորսն 'ի ձայն զանգակին, դիմեցին նոքա 'ի ներքս և յարձակեալ յայրն չարագործն՝ կաշկանդեալ կապեցին զնա պնդութեամբ։ Կամեցան ապա գիտել զվանէրն աղմկին, որ զարթոյցն 'ի քնոյ զՀենրիկոս, և տեսին զի մի 'ի մանկանցն անզգոյշ արկեալ էր 'ի վերայ տախտակամածին խեճեալ կաղնոյ զոր աւազակին ջաղխեալ էր ընդ ոտիւք իւրովք 'ի գնալն։ «Բարերար տէր, կոչեաց յայնժամ ծերունին, վերնախնամ տեսչութեամբ քով կեղեւ ինչ կաղնոյ փրկեաց զիս 'ի մահուանէ և զյանցաւորն մատնեաց 'ի ձեռս արդարութեան»։

Այսպէս պատճառք դուշնաքեայք կարեն երբեմն իրս մեծամեծս յարդիւնս ածել։

50

ԳԱՅԼ ԵՒ ԱՆԴԵԱՅ

Զառամեալ, ծերացած	Կարկել, պապանձել
Ապաշաւել, ղջալ	Ընդ հուպ, էնչ օրէն
Պահ ունել, պահպանութիւն ընել	Հէն, աւաղակ
Անդեայ, եղ՝ կով	Նախճիր, արիւնհեղութիւն

Զի սովորոյթ հնացեալ փոխի 'ի բնութիւն,
Ուսուցէ զայն առաջիկայս քեզ առակ։
Գայլ զառամեալ չոգաւ առ հօտն ասելով,
«Ապաշաւեմ, տըրտմեցուցի ըղձեղ շատ,
Աւել 'ի տան ձերում թողէք ածել ինձ,

Պահ մանկըաւոյդ կալայց յայլոց 'ի գայլոց։»
Նոքա 'ի գովթ շարժեալ ընդ այն սաստեն շանց,
Կարկել մի՛ եւրս ծերունւոյն մեղանչել։
Ընդ հուպ 'ի հէնրն զըղջացեալ զարթեաւ քաղց,
Եւ 'ի սովոր նախճիրս մինչ այն ինչ ըղժանիս արկանէր,
Հասեալ չընեարն ըզնա հաղիւ հալածեցին խածատամբ։

51

ՓԻՃԻՆ ԼԱՑՆԱՆԻՍ

Դամագիւտ լինել, ուղածը ասաջ
Ունել առ իւր, տոմը պահել [գանձ
Ականակապ, ծանրաքէն տրբերով
Ժխտել, ծերժել [ղբդաբուսած
Զորմէ բանք լինին, որոն վրայ կը
Եղո՛ւկ, ասա՛ղ [խօսուէ
Առ 'ի հաւատիս բանիցդ, խօսէդ
հաստատելու համար

Խելայեղիլ, խելքը փախցնել
Տալ հրաժեշտ ողջոյնի, «Ծնաւ բա-
Անկանիլ, անցնել [բեաս» ըսել
Սուղ ինչ ապա, տէր մը եղէը
Ի պատճառս կարճմտութեան, ան-
համբերութեան պատճառելով՝
կեղծելով
Ցամել 'ի գալ, գալու ուշանալ

Երիտասարդք երկու Պետրոս և Վահան անուն՝ 'ի միում աւուրց երեւեցան յատեան դատաստանի։ Խօսել կալաւ առաջինն և ասէ. «Անկան ամք երեք յորմէհետէ ուղեւորեալ եղէ 'ի տար աշխարհ, և զի համարէի զսա իբրեւ զմի 'ի լաւագունից բարեկամաց իմոց, եռու սմա ունել առ իւր մատանի մի ականակապ, այլ արդ ժխտէ տալ զաւանդն իմ»։

Իսկ Վահան ձեռն առ արտիւն եդեալ՝ պատասխանի ետ և ասէ. «Երդնում 'ի պատիւ իմ, զի անծանօթ է ինձ ամենեւին մատանիդ՝ զորմէ բանքն են, թուի խելայեղեալ բարեկամ իմ վաղեմի»։

Յայնժամ ասէ Դատաւորն. «Պետրէ՛, և ի՞նչ ասես դ

առ 'ի հաւատս բանիցդ »։ Պատասխանի ետ և ասէ Պետրոս. « Եղբա՛կ, 'ի պահուն յորում յանձն արարի նմա զմատանին, չգոյր այլ ոք վկայ բայց փիճին լայնատարած՝ առ որով հրաժեշտ ողջունի տուաք միմեանց »։

Կրկնեալ անդրէն Վահանայ ասէ. « Կազմ և պատրաստ կամ յերդնուլ, զի ոչ իսկ ճանաչեմ զծառն զայն՝ որպէս ըզմատանին »։

Ի վերայ էած Դատաւորն և ասէ. « Երթիջի՛ր, Պետրէ՛, հատանել ոստ 'ի փիճեւոյդ, և բեր զայն առ իս. իսկ դու, Վահան, դարձի բարեկամիդ մնասցես ոստ »։

Սուղ ինչ ապա յետ մեկնելոյ պատանւոյն 'ի պատճառս կարճմտութեան ասէ Դատաւորն ցՎահան. « Զկարեմ 'ի միտ առնուլ թէ ընդէ՞ր Պետրոս յամէ 'ի գալ, բա՛ց զպատուհանդ և հայեա՛ց, ո՞չ դեռ եւս երեւի ոք »։

Պատասխանի ետ Վահան և ասէ. « Բայց, Տէր դատաւոր, չէ հնար զի դարձցի այսր 'ի ժամուս, քանզի ծառն հարուստ միոք փարախաւ հեռի է ոստի »։

Ցայնժամ գոչեաց Դատաւորն. « Ստախօս ժպի՛ր, երդմամբ ուրեմն դամնագիտ լինելիր հաստատել, զի բնաւին անծանօթ էր քեզ ծառն այն։ Դիտես ապա զմատանին որպէս և զփիճին։ Դարձո՛ վաղ զաւանդն առ ստացիչն իւր, և դու 'ի պատուհաս նենգութեան քո արկցիս 'ի բանտ »։

52

ՎԱՌԵԱԿ ԱՌ ՄԱՐԳԱՐԻՏՆ

Բազում այն է զի, շատ անգամ
Տարփաւոր, սէրոջ

Վիպել, պատմել
Հաստատ լինել, հաստատ ելլել

Ի խընդիր բերոյ Վառեակ 'ի յաղբեւս,
Ցանկարծ գըտեալ մարգարիտ,
«Ո՞վ մեծդ, ասէ, և պատուական, անկեալ յանարդ 'ի տեղւոջ.
Թէ ոք յարգի քում տարփաւոր քեզ աստանօր հանդիպէր,
Ցառաջին պայծառութիւնդ այնուհետեւ դառնայր.
Իսկ իմ գտանել ըզքեզ որ ըզբուտ յոյժ առաւել մեծարեմ,
Ոչ քեզ օգնէ ամենեւին և ոչ ինձ»։

Զայս այնոցիկ վիպեմ որ չեն հասու իմոյս իմաստից։

53

ԱՅԾԱՐԱԾՆ ՊԱՐԿԵՇՏԱԿՐՕՆ

Պարկեշտակրօն, բարի վարուն
Այծերամակ, այծերու խուրձ
Խոնարհել աւուր, երեկոյ ըլլալը
Խուն ինչ, տէր մը
Հայթայթել, ճարել
Բոկանի, բոլիկ
Վայրավատին, ցերուցան
Խոնարհիլ 'ի վերջ կոյս, վերջանալ
Պնդել, կարծրացնել
Պաղեալ, սառած
Զառադէմ, խոժոռ՝ դէմ երեսով
Գեռ, ցեխ [գարշ տեսնել
Գործակից լինել, մեկու մը հետ
Զերծ կալ, ազատ մնալ
Շաղախել, աղտոտել
Արարք, գործ

Աղքատն Արամայիս արածէր զայծերամակ իւր յայգուէ մինչեւ 'ի խոնարհել աւուրն։ Խուն ինչ շահ էր նմա 'ի վաստակոց անտի իւրոց, զի չկարէր իսկ հայթայթել զոյգս կօշկաց առ 'ի պատսպարել զոտս իւր բոկանիս ընդդէմ ծայրասուր ժայռից ուր գնայր՝ 'ի խնդիր վայրավատին այծուցն, կամ ընդդէմ փշոց մացառաց՝ ընդ որս հարկ էր նմա անցանել։ Ի վերջկոյս խոնարհել աշնայնոյ յորում ժամանակի սառնամանիք պնդէին զերկիր, առաւել եւս կրէր տառապանս։

Ի միում աւուրց մինչդեռ մանկիկն խաչնարած արտասուալից աչօք կծկեալ կայր ուրեք՝ առ 'ի ջեռուցանել զոտս իւր պաղեալս, այր ոմն ձառադէմ, զոր ճանաչէր նա դատապարտեալ յաճախ վասն դողութեանց իւրոց և եղերանց, մատեաւ առ նա ասելով. «Սիրեցեալդ իմ, էկ մտանել ընդ ինեաւ 'ի ծառայութիւն, զի քան զքոյդ շահաւետ է արուեստ իմ, գնեցից քեզ կօշիկս և հանդերձանի. և յայնժամ ոչ լիցին քեզ պէտք վաստակոց և ոչ եւս թաւալեսցիս ընդ գետս և ընդ տիղմ»։ Պատասխանի ետ մանուկն և ասէ. «Ո՛չ այդպէս, նախամեծար համարիմ գնալ հետիոտս և կալ մինչև պարկեշտակրօն քան շահել արծաթ բաղում՝ գործակից քեզ եղեալ։ Գիտես իսկ ապաքէն 'ի փորձոյ զի չէ մարթ ումեք զերծ կալ հանապազ յարդար վրիժուց մարդկան։ Այլ իմ ասէր ցիս յաճախ՝ զի լաւ է ունել ոտս տղմաթաթաւս քան շաղախել զձեռս յանիրաւ արարս»։

54

ԿԱՐՈՒԱԿ ԵՒ ԴԵՐՁԱԿ

Կարուակ, (էկէծէ)
Բարք, ԲՈՒՐՈՒԷՆ
Աւուրն պարէն, օրուան հացը
Ջեռնհաս, կրակ
Հարկանել զպէտս, պէտքը լեցնել՝ [կատարել
Մտադիր, յօժարակամ

Նսեհ, բախտ
Հոլովիլ, դառնալ
Ակնկալ, յուսացող՝ սպասող
Սինլքոր, սուրբն դուռ (ժողովուրդ)
Բազմահոյլ, շատ խումբերով
Ցեղափոխել, փոխել

Ի մեծանալ բարեկամիդ՝ ըզդոյշ լեր
Մի՛ զնա առ քեզ համարել նոյն, զի փառք ըզբարքս փոխեն։
Կարուակ աւուրքն պարենի 'ի շահ հազիւ ձեռընհաս,

Սիրով ումեմն Դերձակի էր բարեկամ սիրեցեալ,
Միմեանց ըզպէտս հարկանէին մըտադիւր.
Սա ըզնորին ըստ պիտոյից ըզհանդերձ,
Նա ըզսորին կարկատելով ըզկօշիկ։
Անուոյ բախտին հոլովելոյ ակընկալք՝
Որպէս յաճախ այս պատահէ ասա և անդ
Վերամբառնալ և սինլը.քոր որերոյ,
Դաշն ընդ միմեանս եդին յիշել միշտ զիրեարս,
Եւ ի նշան դաշինն Ե՞ Նոյն է՞ ասել։
Զուարթ ի կարուսին հայեցաւ բախտ, եկաց երկրորդ ալբայի,
Ի բաղմահոյլ պաշտօնէից շուրջ պատեալ,
Բաղմեալ փառօք ի գահոյս։
Եվ յետ աւուրց Դերձակն 'ի դուռն ուրախակից դող նըմին.
Եւ մատուցեալ առ նա՝ Ե՞ Նոյն է՞ ասէ,
Իսկ բարեկամն յեղափոխեալ յայնժամ ըզբարս ընդ նըսեհ,
Պատասխանէ. Դո՞ ՐԷՊէ՞ Նոյն էցե՞, Ե՞ չէ՞ ոակոյն Նոյն։

55

ԱՐՁԱԳԱՆԳ

Անգիտանալ, չգիտնալ
Ցապուշ կրթիլ, ապշիլ
Ի զայրոյթ գրգռիլ } շատ բարկանալ
Ի բարկութիւն բրդիլ }
Խոթամիտ, անխելք
Լուտանք, ընչամոլութ
Մոլիլ, կատղած վազել [թամ
Մացառազօղ, մացառուի մեջ պահուըտ
Վայրապար, պարապ տեղը
Խոյզ եւ խնդիր առնել, քննարկել
Անողոք, կարծր սիրտ ունեցող
Ակնկալութիւն, բանի մը յուսալը

Անգիտանայր դեռ եւս Միհրան թէ զինչ լցել արձագանգ ձայնի, և 'ի միւսմ աւուր մինչդեռ գտանէր 'ի դաշտի

ուրեք խորհեցաւ աղաղակել «օ, օ, օ»։ լուաւ անդէն զնոյն բարբառ 'ի մերձակայ անտառէն «օ, օ»։

Մանուկն յապուշ կրթեալ սկսաւ ձայնել. «Ո՞վ ես դու» և արձագանգն զնոյն առնէր հարցուած «ե՞ս դու»։

Ի զայրոյթ գրգռեալ ընդ այն Միհրանայ՝ ուժգին առնու խօսել «Ես դու ուրեմն մանուկ խօթամիտ»։ «Մանուկ խօթամիտ» կրկնեաց արձագանգն 'ի խորոց անտառակին։ Եւս քան զեւս բրդեալ է բարկութիւն կրկնէր և երեքկնէր Միհրան զլուտանն՝ զորս արձագանգ հաւատարիմ հասոյց յունկն իւր անդէն։

Զայրագին ապա մղեալ ընդ անտառն բոլոր առ 'ի գիւտ մանկանն՝ զոր համարէր մոցառաղօղ թագուցեալ անդ, կամէր խնդրել զվրէժ իւր 'ի նմանէ, այլ, որպէս աներկեւան իսկ է, ոչ զոք եգիտ անդ։

Յետ վայրապար խոյզ և խնդիր առնելոյ, դարձաւ 'ի տուն և պատմեաց մօր իւրում, թէ ստահակ ոմն չար թագուցեալ յանտառին թշնամանեալ էր զնա։ Պատասխանի ետ մայրն և ասէ. «Որդեակ իմ, զանձնէ և եթ լինիս ամբաստան, քանզի զքո բանս միայն լուեալ ես։ Որպէս տեսանես յաճախ ըզպատկեր քո յալիս, այնպէս և արդ զձայն բարբառոյդ լուեալ է քո։ Եթէ բանս ախորժելիս ասացեալ էիր, ոչ թշնամանօք առնուիր պատասխանի»։

Եթէ լիցուք անողոք և տմարդիք առ նմանիս մեր, չընմանք 'ի նոցանէ լաւագունի խմիք ակնկալութեան։

56

ՍԷՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

Դարձ առնել, դառնալ
Լոկ, սուկ, պարզ (սուլթ)
Մահապարտ, մեռնելու պարտաւոր
Պարսաւել, վար ղարնել
Աւաղել, ողբալ
Տալ զանձն 'ի վերայ կամ փոխանակ (ուրուք), (մէկու մը) համար կամ տեղը յօժարութեամբ մեռնել
Ազդ առնել, իմացնել
Սլանալ, թռչիլ, վազիլ
Շողալ, փայլիլ, վազիլ
Գրկախառն, ղէրբ ֆրկած
Արտասուակցորդ, մէկուն լացող
Յարտասուս հարկանել, լալ
Վազել, ցատկիլ
Ժամանել, հասնիլ
Ամբոխ, էրամբոյտ
Հաղորդ լինել, մասնակցիլ

Իբրեւ Դամոն և Փիդիաս բարեկամք միմեանց դարձ առնէին 'ի Սարակուսա, դէպ եղեւ Դիոնիսեայ բռնաւորի ամբաստանութեամբ լոկով դատապարտել զՓիդիաս 'ի մահ։ Իսկ մահապարտն խնդրեաց պարապ, մինչեւ երթեալ 'ի քաղաք մի որ մերձ էր անդր՝ հրաման տացէ վասն իրաց իւրոց կարեւորաց. և խոստացեալ դառնալ ըստ ժամադրութեանն, մեկնեցան՝ թողեալ երաշխաւոր իւր զԴամոն 'ի վտանգ մահու։

Երկարաձգեցան իրք Փիդիասայ, և ժամանեաց օրհաս սպանութեանն. ամբոխն խռնեալ, կէսք պարսաւէին զԴամոն, և կէսք աւաղէին զնա. իսկ նա խաղաղութեամբ երթայր 'ի մահ, վասահ 'ի դարձ բարեկամին իւրոյ, և յօժարադոյն եւս 'ի տալ զանձն փոխանակ նորա։

Եւ իբրեւ եկն եհաս ժամն դառնութեան, ահա ամբոխ աղաղակի ազդ առնէր զդալուստ Փիդիասայ։ Դիմեաց սըլացաւ նա 'ի տեղի պատուհասին, մինչ շողայր սուսեր զդըլխով բարեկամին, և գրկախառն արտասուակցորդք վիճէին ընդ միմեանս, յափշտակելով յիրերաց զբախտ մեռանելոյ ընդ սիրելւոյն։ Ընդ որ տեսողացն ամենեցուն յարտասուս

հարեալ, և նոյն ինքն բռնաւորն վաղեալ յաթոռոյն՝ խընդրեաց չքնաղ բարեկամութեանն նոցա լինել հաղորդ։

Տեսանե՞ս, որդեակ, որչափ ինչ կարէ բարեկամութիւն, մինչեւ առհասարակ զամենեսին բռնադատել 'ի սէր և 'ի զարմանս։

57

ԵՂՋԵՐՈՒ

Հնար լինել, կարելի ԵՒԼ
Փոյթ, ջանք, հոգ
Հոգ խնամոց ունել, խնամք տանել
Թեւակոխել, հատանել, յկոխել
Հետավարել, հալածել
Վարել (զգործ), կատարել (գործը)
Շտապել, խիստ ածապարել
Հեծեծանք, խղճուկ հառաչանք

Ի վրէպ անկանիլ, վրիպել, ծուռ [երթալ
Հեղուլ, թափել
Հեղձնուլ մղձկիլ, խղճուիլ՝ մաղձել
Ի գուռս ելանել, ձնկան վրայ գալ
Մահացեալ, մեռած
Անպարտակիր, որ պարտական չէ բան
Նուազ, անգամ [տալիս
Ոճիր եղեռն, շատ մեծ յանցանք

Մանուկ դեռ ևս էր Սահակ՝ յորում ժամանակի հայր նորա՝ որսորդ աջողակ՝ սպանաւ յաւազակէ ումեմնէ՝ զորոյ չեղեւ հնար գտանել ուրեք զհետս քայլիցն։ Մայր մանկանն յաւելեալ 'ի փոյթ և 'ի վաստակս՝ հոգ խնամոյ կալաւ զդաստիարակութենէ որդւոյն, մինչեւ թեւակոխեալ 'ի տիս պատանեկան՝ եմուտ նա յաշակերտութիւն առ ումեմն 'ի վաղեմի բարեկամաց հանգուցելոյն։ Ի սուղ ժամանակի զարգացաւ մանուկն 'ի գիտութիւն պաշտամանն, և կամէր վարել ըզգործ հայրենի արուեստին։

Ի միում աւուրց հետավարէր զեղջերու մի չքնաղագեղ, և էր ընդ նմա բազմութիւն որսորդաց յոյժ. մինչդեռ 'ի փախուստ շտապէր կենդանին անցեալ առընթեր նոցա, հուր

'ի հրաշէն իւր արար նա, այլ հարուածն անկաւ 'ի վրէպ։ Յայնժամ լսելի եղեւ 'ի մացառուտ թփոյ ճիչ աղիողորմ՝ որ գոչէր. «Աստուած իմ, հարայ կարեւէր»։ Սահակ փութացաւ դիմեաց 'ի կողմն յայն՝ ուստի գայր ձայն հեծեծանացն, և ետես անդ ծերունի զոմն շաղախեալ յարիւն, որ հեղձնոյր մի ձկէր, յօրհաս վախճանին հասեալ։

Ընթացան ոստոյդ.ք 'ի ձայն աղաղակին, և ժողովեցան շուրջ զնովաւ՝ որ մերձ էր 'ի մահ. և Սահակ 'ի դուճս իջեալ՝ հեղոյր զարտասուս առ յուսահատութեանն և պաղատէր առ ծերունին ներել նմա, յայտ արարեալ զի 'ի ձգել զհրապէնն՝ չէր զնա տեսեալ։ Այլ վիրաւորեալն պատասխանի ետ նմա և ասէ. «Մի լիցի քեզ խնդրել յինէն թողութիւն, հասեալ է ժամ զի 'ի վեր հանիցս քեզ արդ գաղտնի ինչ ցարդ անծանօթ 'ի բնաւից։ Ես եմ հուղկահարն այն՝ որ սպան ըզհայր քո։ Եւ արդարեւ ասա իսկ 'ի տեղւոջս անկաւ նա մահացեալ, 'ի և սմին տեղւոջ, որդեակդ անպարտակիր զոհին, պարտ էր քեզ յանդէտս խնդրել յինէն ըզվրէժ ոճիր եղերանս, որովզքեզ որբ 'ի հօրէ կացուցի»։ Ի նուաղել տակաւ ձայնի նորա, զայս 'ի յետին նուագ մրմնջէր. «Արդարադատ է Աստուած». և ապա փչէր զոգին։

Արդարութիւն Աստուծոյ թէպէտ յամրընթաց՝ այլ դիտէ միշտ գալ հասանել զհետ մեղապարտին։ Եթէ կարի յոյժ երկայնամիտ դատանիցէ Աստուած, 'ի հանդերձելումն ածցէ զմեզ պատուհաս։

58

ՆԱՍՐԷՏԻՆ ԵՒ ԶՕՇԱՔՈՂՆ

Ցանօթ առնուլ, փոխ առնուլ գոր-
Զօշաքաղ, ոգեհ [ծածելու համար
Ցետ աւուրց ինչ, ետանէ մը օր եռուելը
Ցնկնել, ծնիլ (անասնոց)
Զեղծանիլ, գեղ՝ ըստ ըստ գործելը
Երկայնաւուրս մաղթել, «պաշտօն
Տենչ, փափաք [սաղ օրուան» ըսել
Հատուցանել զպարտ մահկանացուի, Ռաստան հանդերձը կոտրել
Նշաւակել, խայտառակել

Նասրէտտինայ երբեմն յանօթ առեալ կաթսայ 'ի դրացւոյն
Միւս այլ փոքրիկ ընդ անօթոյն ետ յետ աւուրց ինչ անդրէն։
Իբր այն թէ ձագ էր ըզբոցովըն ցընկնեալ,
Իբր այն թէ ոչ կամէր զայլոյ ինչ խորել։
Նա օգտակար պարզմտութեամբ դրացւոյն զեղծեալ, էառ զայն։
Աւուրք անցին, և միւսանգամ աղաչեալ,
Ետ խնդագին, զի ծնանիցի միւս այլ թերեւըս կորիւն
Այլ նա դրացւոյն երկայնաւորըս մաղթեաց,
Որպէս թէ զպարտ մահկանացուի էր հատուցեալ հէք սանին։
Եւ 'ի բառնալ նորին բողոք՝ թէ ի՞բր սան մեռանէր։
Պատասխանի ետ խորագէտ Ծերունին.
«Եթէ ծնանի սան, և ընդէ՞ր չիցէ նըմա մեռանել»։
Նըշաւակեաց այսպէս նա զկոյր աւնչ շահու։

59

ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆՈՒԿ

Դադար, փարախ, ախոռ (ոչխարաց)
Գամփռ, պահապան շուն
Մերձաբնակ, հօրբ բնակող
Զբանիւք անկանել, խօսքի բառնուել
Դալար, կանանչ ծիրմ [ցընել
Բուժել զքաղց, անօթութիւնը ան-
Ժուժկալ, պահեցող [ցընել
Հարկանել զպատուք, ծարաւը ան-

Կնճնի, (գարա աղաց)
Սակաւապէտ կեալ, քէչ բանով
Շաղիղ, դո [ապրիլ
Զոյգ ընդ բանին, այս խօսքը ըսե-
Զգօն, խելք [լուն հետ
Գէշ անկանիլ, հերաց որս էնալ
Փաղաքուշ, անուշ խօսող
Ժանիք, ակռայ (գազանաց)

Ոչխարք 'ի դադարս իւրեանց կային յապահովի, ննջէին գամփռունք և հովիւն 'ընդ հովանեաւ լայնատարած կնճւոյ երգակցէր սրնգաւ ընդ այլ մերձաբնակ հովիւս։ Եկն անդր Գայլ սովալուկ անցեալ ընդ ցանկ շրջապատին առ 'ի դիտ-

տել զՀօտաս խաշանց։ Գառնուկ մի անփորձ՝ որոյ չէր լինչ տեսեալ, զբանիւք անկաւ ընդ նմա և ասէ ցորկրամնն։ «Զի՞նչ 'ի խնդրել հասեալ կաս այսր»։ Պատասխանի ետ Գայլ և ասէ. «Խոտ ծաղկաւէտ և դալար։ Գիտես իսկ զի չիք առաւել քաղցրը քան 'ի գեղածիծաղ և 'ի կանանչաւէտ մարգագետնի լինել ճարակաւոր առ 'ի բուժել զքաղց, և հարկանել զպասուք յականակիտ ալեաց վտակի. զերկոսին եւս գտի ասատանօր, ի՞մ այլ իմիք պէտք են ինձ. սիրող եմ Իմաստասիրութեան՝ որ ուսուցանէ սակաւապէտ կեալ»։ Պատասխանի ետ Գառնուկն և ասէ. «Արդարեւ ո՞չ ճաշակես բնաւ ըզշաղիղ անասնոց և սակաւիկ մի խոտ իցէ՞ քեզ բաւական, եթէ այդ այդպէս է, եղբայրաբար վարեսցուք կենցաղ ճարակաւորք 'ի միասին»։ Եւ զոյդ ընդ բանին եթող Գառնուկն ըզփարախ իւր գնալ 'ի մարգագետին անդր՝ ուրանօր դէ՛ղ անկաւ ժանեաց ժուժկալ իմաստասիրին։

Զգոյշ լերուք 'ի փաղաքուշ շողոմից այնոցիկ որք առաքինիս գող պարծին. 'ի գործոց նոցա և ոչ 'ի բանից դատեսջիք զնոսա։

60

ԴԱՏԱԽԱԶԲ ԵՒ ԴԱՏԱՒՈՐ

Դատախազ, դատ քացող
Իրաւախոհ լինել, հոմոյնել
Ցոռի, գեղ
Խեփոր, (գապոռգ)
Տալ յաւանդ, առանդել
Միջուկ, դեղինք

Իրաւախոհ լինել յոռի պայմանաւ
Ընտրելագոյն է քան վիճել յատենի։

Զբնորոսք երկու 'ի միասին կալան ըստուար մի ոստրէ. Մին պահանջէր զայն, զի նախ իւր էր տեսեալ,

Միւսքն զի ինքքն փութացեալ կալեալ զայն։
Վէճն 'ի յատեան ածաւ, տրեալ ժիժմակն յաւանդ դատողին։
Այդ երկուստեք մինչ վիճէին դատախազք,
Նա զպարարակ միջուկն եկեր ըզխեցւոյն,
Եւ զխեփորիցն ըզ մին միւսմ
Եւ ըզմիւսն ետ միւսումն։

61

ԱՂՈՒԷՍՔ ԵՐԿՈՒ

Խեղդամահ առնել, խղդել
Անցանել ընդ փորձ իրաց, փոր-
Մարի, հա- [յատուս ընտրել
Կոտորած, աբիւնհեղութիւն
Յառապայս, ապագային համար

Անխայել, խնայել
Ոչ առցեն զկայ իրք 'ի բարւոջ,
փորձը ոչինչ չընտրեն, վատնիք կընտրեն
Քարակոչիկ, փրով ճշմուած
Ապերասան, անուանի

Աղուէսք երկու յեղակարծ մտին գիշերի 'ի հաւանոց ուրեք, և խեղդամահ արարին զագաղաղն, զմարիս և զվառեակըս, և կոտորածիւն այնուիկ յագեցան։ Մին յերկոցունց անտի՝ երիտասարդ վառեալ յեռանդն և յաչխոյժ՝ ցանկայր կըլանել զամենայն. իսկ միւսն՝ ծեր ագահ՝ կամէր պահել պաշարս ինչ առ յապայս՝ ասելով. «Որդեակ իմ, ընդ փորձ իրաց կենցաղոյս անցեալ իմաստնագոյն քան զքեզ դատանիմ, զի շատ ինչ տեսի յորմէ հետէ բացան աչք իմ 'ի լոյս. չէ օրէն ճաշակել զամենայն 'ի միում և եթ աւուր. յաչողեաց մեզ բախտ, գանձ է զոր գտաքս՝ յոր պարտ է մեզ անխայել»։ Պատասխանի ետ երիտասարդն և ասէ. «Իրաւ է ինձ ճաշակել զամենայն ցորչափ եմն աստ, և կշտապինդ յագել ցաւուրս ուրեք, զի վայրապար է այսրէն առնել դարձ. վաղիւ ոչ առցեն զկայ իրք 'ի բարւոջ, տանուտէրն առ 'ի խնդրել զվրէժ մահուան հաւուցն, սատակամահ կորուսցէ զմեզ»։ Յետ այս-

պիսեաց բանից երկաքանչիւրն փոխ թացաւ 'ի կատարումն խորհրդոյն. այնչափ ինչ եկեր երիտասարդն զի պայթուցեալ հաղիւ կարաց գնալ մեռանել 'ի խշտի իւր, և ծերն՝ որ ի-մաստնագոյն զանձն համարէր՝ 'ի չափու ունելով զախորժակս և սակաւապէտ կելով՝ 'ի վաղիւ անդր կամեցաւ դարձեալ ելանել յորս և 'ի տանուտեառնէն քարակոչկոճ սպանաւ։

Այսպէս իւրաքանչիւր տիոց են թերութիւնք, երիտասարդք ապերասանք են և անյագք 'ի հաճոյս իւրեանց, իսկ ծերք՝ անուղղայք յագահութեան։

62

ՆԱՍՐԷՏՏԻՆ ԵՒ ՆԱԻԱՎԱՐ

Պարզել զառագաստ, առաքաստ
Թի վարել, (+է-բէ+ +աշէ [Բանալ
Վայր, տեղ
Սակ, պա-բ+, ֆէն
Կտաւ, իբր՝ առաքաստ
Ցայտ առնել, յարձնել, ցա-ցնել
Անվարձ թողուլ, վարձէ ազատել
Ցարաժամ, դիշեր
Երկ, աշխարհ

Նաւարկել դէպ եղեւ երբեմն Նասրէտտինայ ընդ Վոսփոր, եւ արկ հընդկից դահեկանաց սակ ընդ տաճիկ նաւաստւոյն։ Նա աջողակ հողմոյ պարզեալ զառագաստ։ Հասոյց ըզհիւրն 'ի դէմ եդեալ վայրն առանց թի վարելոյ. եւ խնդրել ըզսակ վարձուն 'ի նմանէ, «Հողմն 'ի կտաւին, ասէ, շընչեաց և ըզնաւն ալիք մղեցին. թէ դու և ես նաւարկեցաք հաւասար, Զի՞ դու յինէն խնդրես վարձ»։

Ցայտ առակաւս այսուիկ արար Ծերունին, թէ իբր անվարձ թողու ռամիկն յարաժամ զերկ հանճարոյ։

63

Ա. Ի Ա. Ն Դ

Մթերել, դէղեալ, ժողովել
Խնուլ (խցան), գոցուիլ
Շահավաճառ, վաճառական
Լիութիւն բաւականի, պէտք հա-
գալու կարողութիւն
Անձկութիւն, նեղութիւն (վիճակէ)
Ի կիր արկանել, գործածել
Ձեռն արկանել, յեռաց դպցնել
Եւ եւս, ալ աւելի
Սրտաճմիկ, սիրտ ճմլող
Ցանդիման լինել, դէմը ելնել
Ընդէ՞ր իցէ քեզ մնալ, ինչո՞ւ պէ-
տք է մնալ
Ծոխանալ, հարստանալ
Ակնատես, (վկայ) աչքով տեսնող
Ի բաց տար, տար լեցի
Ձեռնմերձ լինել, յեռաց դպցնել
Խիճ, տարի կարօտանալ
Գամ մի, մեյ մը
Թուեսցի ինձ, ինչ այնպես պիտի ե-
գիտուն լիցի քեզ, գիտցած եղիր
Կարծրատորը, կարծր՝ երկար
Պատառել զերկիր, հողը հերկել
Շերփորայ, գող
Կալանք, բանդ դնելը՝ դրուելը
Ծախել, հարցնել
Առասան, (սիճիմ)

Ի մեկնել Պետրոսի 'ի բանակ իւր, չոգաւ 'ի խնդիր Փրանչիսկեայ բարեկամին իւրոյ, և ասէ ցնա. « Աւասիկ յաւանդ տամ քեզ հազար ֆրանգս 'ի խնայութեանց իմոց մթերեալս, կալջիր զայս առ քեզ, մինչեւ եկիցես դարձեալ և յայնժամ յանձն արասցես ինձ։

Զոգաւ Պետրոս 'ի բանակ անդր, և Փրանչիսկոս պահէր զգանձն զայն։ Այլ արկածիւ 'ի վերայ հասեալ՝ խցան ճանապարհք շահավաճառից իւրոց, և անկեալ ընդ պարտեօք՝ չունէր ինչ 'ի լիութիւն բաւականին։

Մի ոմն 'ի բարեկամաց իւրոց ասէ ցնա. « Տես յոր անձկութիւն անկեալ կաս, ով Փրանչիսկէ, ընդէ՞ր ոչ 'ի կիր արկանես՝ զարծաթն Պետրոսի. կարի անագան հատուցանիցես նմա »։ Պատասխանի ետ Փրանչիսկոս և ասէ. « Ոչ այդպէս, լաւ է ինձ մեռանել անտուաղ քան ձեռն արկանել յարծաթն յայն, տեսանե՞ս զի ոչ իսկ լուծի զբերան պարկին, յոր-

մէ հետէ Պետրոս յանձն արար զայն և ոչ իսկ բացից, ոչ ես, ոչ կին իմ և ոչ որդիք, միթէ իցէ՞ն ինչ պէտք փականաց կամ բանալեաց առ 'ի պահել՝ որ ինչ յանձն եղեալ է առն ումեմն պարկեշտի »։

Անցին ամք վեց, և լցաւ ժամանակ զինուորական ծառայութեան Պետրոսի, բայց ընդ երկար ոչ ոք զրոյց ինչ ըզնմանէ բերէր, և անգիտանայր նա թէ զի՞նչ եղեւ նմա։ Գուցէ անկեալ էր 'ի մարտին, գուցէ գերի վարեալ առ Թըշնամիս. բայց ոչինչ զայոցանէ լսելի լինէր համբաւ։ Աղէտք Փրանչիսկեայ յաւելան և եւս, և արդարեւ տեսարան սրտաճըմլիկ յանդիման լինէր աչաց այնոցիկ՝ որք միանգամայն ականատեսք էին թշուառութեանն՝ յոր տառապէր նա հանդերձ ընտանեօք։

Այլ ոմն ասէ ցնա. «Մեռաւ Պետրոս, չիք ընդ այդ երկբայել, զի ոչ զրոյցք ինչ լինին զնմանէ, դու միայն ժառանգորդ ես նմին, ընդէ՞ր իցէ քեզ մնալ աղքատ՝ հսկելով և եթ գանձուդ՝ որով մարթ էր քեզ ճոխանալ»։ Պատասխանի ետ Փրանչիսկոս. «Ճոխանալ, ոչ ոք կարէ բարութեամբք այլոց լինել ճոխ և փարթամ, էհ, 'ի բաց տար, ոչ երբեք եղէց ձեռնմերձ 'ի պարկն Պետրոսի որպէս թէ լցեալ էր այն խըճով . . . եթէ դամ մի բացից զայն թուեսցի ինձ տեսանել բազմութիւնս օձից զի ելանիցեն անտի հեղձամղձուկ առնել զիս։ Գիտուն լիցի քեզ, զի լաւ է ինձ ճաշակել հաց կարծրատորը և պատառել զերկիր, քան այլոց ուրումն հացիւ կեալ»։

Փրանչիսկոս եկաց աղքատ և եղկելի՝ փակեալ ունելով զպարկն 'ի դարանի ուրեք։

Եւ եղեւ յաւուր միում զի լսելի լինէին ընդ երկիրն ընդ այն խառնաձայն աղաղակք թմբկաց և շեփորից, և ահա գայր երեւէր դունդ զօրաց, ընդ որս էր և Պետրոս՝ որ դառնայր յետ երկարատեւ կալանաց արձակեալ։

Եւ տեսեալ նորա զբարեբաստն Փրանչիսկոս այնքան աղքա-

տացեալ և չուառական, ոչ երբայ զբերան իւր խօսել զարծաթոյ պարկէն, համարելով՝ զի այլն հէք 'ի թշուառութեան անդ իւրում ծախեալ էր զայն։

Բայց Փրանչիսկոս չոգաւ գտանել զնա և ասէ. «Ողջոյն ընդ քեզ, որ ժամանեցերդ 'ի հայրենիս քո, ընդ երկար ըսպասեաց քեզ արծաթդ»։ Եւ յանձնեաց նմա զպարկն կապեալ նովին առասանաւ, հաւատարմագոյնս պահելով զայն։

64

ԴԱՍՏԻԱՐԱԿ ԵՒ ՄԱՆԿՏԻ

Ծափս ծափել, ծոփ ղրնել
Համբակ, ուշէբոյ
Կարթ, (ՀԷՆԷԼ)
Պարան, (ՀՈՒԼՄ)
Անուրթ, (ՓՕԼԼՈՒՓ)
Պարաւանդել, կոպել
Կենդանութիւն գոչել, «ՀԷՅՅԷ»
Ծանծաղ, երեսկոյտ [պոռալ
Անժամ, պարբանամ (ՀՈՓԷԼՈՒԸՂ)
Ի դէպ ժամու, յարմար ժամանակի մէջ

Զէ բաւական տեսչի ընդ մանկունս ըզգուշութիւն ամենայն,
Զի անխոհեմ խրատու ածէ անձին վրանդ յեղակարծ։
Ոմն յանըզգոյշ վարժապետաց պատուէր եա
Ծափս 'ի փրընդալ իւրում ծափել մանկտւոյ։
Աւուրք անցին, անկաւ սափորն 'ի ջրրհոր
Վարժապետին խոնջեալ կարթիւք և ճանկօք,
Ապա պարան ըստուար առ ինքն եա բերել.
Եւ շուրջ ածեալ զանթովքըն զայն պարաւանդ,
Ըզգուշութեամբ իջուցանել զինքն 'ի դուք,
Զի զդոյն 'ի վեր ածցէ անտի զպրղընձի։
Այլ 'ի փրընդալ իւրում 'ի յեջս անդ յանկարծ,
Թողեալ նոցա վաղվաղակի ըզպարան՝
Կենդանութիւն նըմա ծափիւք գոչէին։
Ծանծաղ 'ի ջուրց յայնժամ առեալ նորա զգլուխ իւր 'ի վեր
Ասէ անժամ հնազանդելոցն համբակաց.
«Ի դէպ ժամու, ո՛ յոյժ հնազանդ մանկրտեակ,
Կենդանութիւն ինձ մաղթէք»։

65

ԵՂԲԱՐՔ ԵՐԵՔԻՆ

Ոտնակառիլ, դաղբեալ, կենալ
Կապտել, կողոպտել
Դայլայլիկ, երգ
Զիւնախաղաղ, յիւնով ծածկուած
Բացագոյն աւելի հեռու
Եղեմնապատ, եղեմով ծածկուած
Անպատսպար, պահպանութիւն չու-
Լու լինել, լսուել [նեցող
Ծաղկել (ալեայ), ճերմկիլ (մազերս)
Խիտ առ խիտ, փովք փով
Բարեհամբոյր, հեղ, խունարհ
Բոյս բարուց, բնաւորութիւն

Ընդարմանալ, ընկրկիլ (յեռուէ)
Անփառունակ, անշուք, փքուած
Ի չիջանել կայր, մտքերս վերայ էր
Ծնեալաբեր, ծնողական սիրոյ յատուկ
Անողոքելի, չնկղջող
Շաւիղ, ճամբու հետք
Բռնաշունչ, խիստ փչող
Տաժանաքայլ, դժուարութեամբ քայլող
Հեռախաղաղ, անյայտ
Զիւնակոյտ, յիւնի դեղջ կոյտ
Որպէս զի, անանկ որ
Փոխել զոտն յոտանէ, ոտք շարժել

Էին ցրտագին աւուրք ձմերայնոյ, 'ի սառամանեաց ոտնակառեալ կային առուք, ոստք ծառոց կապտեալք 'ի սաղարթուց, և ոչ եւս լսելի լինէին 'ի դաշտս դայլայլիկք թռչնոց։

Զիւնախաղաղ ծածկեր երկիր, և 'ի բացագոյն վայրս՝ հայեցուածոց աչաց ոչ այլ ինչ դային 'ի տեսիլ, բայց հովիտք սպիտակագեստք և բլուրք եղեմնապատք, և ծառք հանդուռնատիպք ծերունեաց՝ ոյց սպիտակ ծաղկեն ալիք։

Ի վերոյ խիտ առ խիտ հիւղից գեղջն, էր տեսանել ըղծուխս կրակարանաց դի ամբառնայր, և շինականք բարեհամբոյրք շուրջ զհրովն պար առեալ ջերուցանէին զընդարմացեալ 'ի ցրտոյ զմատունս իւրեանց, և հայէին ընդ պատուհանս ընդ երեսս տխուր և ամայի դաշտին։

Գաբրիէլ և Կատարինէ աղքատին վարէին կենցաղ և յոյժ կրէին տագնապս 'ի ձմերնական խստութեանցն՝ դի անինչք

էին և անփառունակք։ Հիւղակն նոցա անպատսպար էր յամենուստ և չնչէր հողմն ընդ ծերպս դրանցն և պատուհանաց, և չէր նոցա բնաւ փայտ բաւական յաւելուլ 'ի հուր անդր որ կայր 'ի շիջանել։

Կային առ նոքօք երեքին որդեակք նոցա մատաղատիք, զորս սիրէին 'ի գութ ծնելասէր. մանկունք առաքինիք։ Միքայէլ անդրանիկն՝ տասնամեայ էր, ութամեայ Գրիգոր և կրտսերագոյնն 'ի նոցանէ Ռափայէլ՝ որոյ չէր աւելի քան զվեց ամս։

Սակայն տեսեալ՝ զի հայր իւրեանց և մայր տառապէին յանողոքելի ցրտոյն, ասեն ընդ միմեանս։ «Եկայք, երթիցուք յանտառ անդր, ժողովել ոստս անկեալս 'ի ծառոց՝ և կապեալ խրձունս ինչ՝ բերցուք 'ի տուն մեր»։

Զայս ասացեալ անկան յուղի կոխելով առ ոտն զձիւն՝ որ խնոյր զանցս ճանապարհին ընդ դաշտն. այլ ընդ հուպ ծածկեցաւ յաչաց նոցա տնակն իւրեանց, և մոլորեցան 'ի մանուաածապատ շաւիղս անտառին, ժողովելով կեղեւս ծառոց՝ որ 'ի գագաթանց նոցին 'ի բռնաշունչ հողմոց խլեալ անկանէին։ Եւ մինչդեռ այսպէս պարապեալ կային 'ի գործ իւրեանց՝ չզգացեալ իսկ զհասանել գիշերոյ, և կարի հեռացեալ գտանէին՝ տեսին զի օրն 'ի մայր իւր խոնարհէր և ոչ եւս գոյր նոցա հնար գտանելոյ զհիւղ իւրեանց։

Յայնժամ վաղվաղակի զխրձունս փայտիցն բարձեալ 'ի յուս պատրաստեցան դարձ առնել 'ի դեօղն։ Այլ տաժանաքայլ էր ուղին, հեռախաղաղ ծածկեալ կայր ճանապարհն 'ի ձիւնակոյտս՝ որ կուտեալ ընդ գարշապարս նոցին ծանրաբեռնէին զկօշիկս նոցա, որպէս յետ սակաւուց խոնջք և վաստակաբեկք պարտասեցան 'ի սպառ, և կրտսերն Ռափայէլ ոչ եւս կարէր ընթանալ։

Զի՞նչ առնել էր յայսպիսում դժնդակ պայմանի. մենաւորք գոլով յանտառի անդ՝ ոչ ուստեք նշմարէին նշոյլ ընդ աղօտ զի աւետաւորէր նոցա յարկ ինչ մերձաբնակ. և 'ի բառնալ

Իւրեանց զաղաղակ, 'ի տխուր միայնութեան անդ յարձա-գանգաց լայնանիստ անտառաց կրկնէին ձայնք նոցա։

Անդրանիկն յեղբարց անտի փորձ փորձեաց բառնալ 'ի թիկունս զՌափայէլ, այլ այնքան ծանրակիր էր բեռնն զի հարկեցաւ դնել զայն յերկիր. և երեքեան եւս հարան յարտասուս։

Ցուրտ սաստիկ էր. հողմ բքաբեր շնչէր ընդ երեսս նոցա և պաղէին արտասուք յիջանել ընդ ծնօտս նոցին, ձեռք նոցա կարկամեալք էին 'ի ցրտոյ, և ոչ զօրէին եւս փոխել զոտն յոտանէ։

Ցայնժամ փարեցան զմիմեանսք և զդայեալ Միքայելի զի անդամք կրտսերագունի եղբօրն Ռափայելի ցրտացեալք էին և պաղեալք, բուռն արար անձին ջեռուցանել զնա 'ի շունչ բերանոյն, և տեսեալ զի ոչինչ յաջողեցաւ, սակայն և այնու ոչ վարանեալ՝ ելհան զհանդերձ իւր և կացեալ ընդդէմ հողմոյն՝ ծածկեաց նովաւ զմարմին կրտսերոյն։ Ողբս առեալ հեղոյր արտասուս, այլ վասն եղբարցն մանաւանդ մերթ կականաբարձ աշխարէր և մերթ դուն դորձէր քաջալերել զնոսա։

Սակայն 'ի խղի անդ իւրեանց հոգային ծնողք նոցա զի յամէին նոքա 'ի դառնալ. մերթ ընդ մերթ ելանէին առ սեամն դրան և հայէին այնքան 'ի բացէ ցոր վայր զօրէին աչք, այլ ոչ ինչ գայր յերեւան։ Գոչէին յաճախ. «Ռափայէլ, Միքայէլ, Գրիգորիէ». այլ բարբառ ինչ ոչ առնէր նոցա պատասխանի, և ոչ այլ ինչ լու լինէին՝ բայց միայն հաջիւնք շանց ոմանց՝ որ զդաշտացն լուծանէին զլռութիւն։ Գիշերն յառաջ խաղայր, և նոքա սիրտ 'ի թնդոջ ելին արտաքս։ Ակք ոմանք տեղւոյն այնորիկ չոգան 'ի մէջ գիշերի ջահիւք վառելովք 'ի խնդիր մանկանցն, դտին ուր ուրեմն զեղկելիսն, տեսին զաղիողորմ. մարմինք նոցա ընդարմացեալ էին 'ի ցրտոյ և թուէին կիսամեռք։ Ցեսանէին եթէ զիարդ Միքայել մերկացեալ 'ի զգեստուէն՝ եղբայրասէր դորովանօք խաղապա-

տեալ էր զմարմնով հիքի մանկանն՝ առ 'ի ջեռուցանել զնա և առ 'ի տալ ապաստանարան ընդդէմ հողմոց տեղատարափից ձեռանց։

Զարմացեալ կային արքն ընդ անձնանուէր բոյս բարուց անդրանկին և 'ի վերայ գրկաց իւրեանց բարձեալ զնոսա՝ ածին 'ի հիւղ իւրեանց, լուցին հուր բոցածաւալ և տակաւ ջեռան մարմինք նոցա առեալ կորով և կենդանութիւն։ Այլ թէ որպիսեաւ խնդութեամբ գիրկս արկեալ ապա միմեանց՝ փարեցան զծնդօք ծնողաց իւրեանց, ոչինչ է պիտոյ ասել զայն աստանօր։

66

ՍԻՐԱՄԱՐԳ ԱՌ ՀԵՐԱ

Շատանալ, բազմանանալ
Զայն արկանել, յայն հանել
Զմրուխտ, (զիմրիւռ) կանաչ գոյ
Նշողել, փայլել
Երփներանգ, գունդգոյն
Ականակուռ, գոհարով խոկոած
Բակ, շրջանակ
Էր, ինչ՝

Տուան, (դող)
Պարզել, բանալ
Զի՞ պիտոյ է ինձ, ինձի է՞նչ պէտ է
Համայք, կոխարդուիլն
Գուժկան, գոյժ տուող
Եղջերիկ, եղջերաւոր օյ
Ըղձանալ, փափաքիլ
Լուծանել 'ի տրտունջ, դրդռնջել

Սիրամարգի բողոք բարձեալ առ Հերա,
Թէ էր ինքեան չէ շնորհեալ ըզսոխակին դայլայլիկ.
Իւ նա բնաւից նախանձելի լեալ հաւուրց,
Իսկ ինքն հաղիւ ձայն արկեալ՝ լինի հանուրց ծաղրելի։
Առ 'ի սփոփել ըզնա ասաց Դիցուհին.
«Սակայն գեղով դու յաղթես, յաղթես քոյին մեծութեամբ
Փայլ 'ի յուլան քում զմրրիւռոյ նշողէ,

Եւ 'ի փեռուրքս երփներանգ
Զականակուռ ըղբակ տրտան քո պարզես »։
« Զի՞ բնաւ պիտոյ է ինձ, ասէ, համր և անխօս կերպարան
Ուր 'ի սորեւ կամ ձայնիւ »։
Ցաւել յայնժամ դիցուհին.
« Բախտին կամաք այդպէս բաժինք ձեզ տրւան,
Քեզ դեղ, արծուոյ զօրութիւն, դուշակութիւն ադռաւու,
Սոխակի երգ, հրմայք գուժկանք եղջերկի.
Եւ ընդ իւր ձիր իւրաքանչիւրն է միշտ գոհ »։
Մի՛ ըղձանար այնմ՝ որ չիցէ քեզ տրւեալ
Զի մի՛ պատրեալ յոյս քո լուծցի 'ի տրրտունջ։

Յաւելուած

ԲԱՐԴՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱԾԱՆՑՄՈՒՆՔ ԲԱՌԻՑ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԲԱՐԴՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱԾԱՆՑՄՈՒՆՔ ԲԱՌԻՑ

Ա.

ԲԱՐԴՈՒԹԻՒՆՔ ԲԱՌԻՑ

1. Հայերէն լեզուի բառերն իրենց կազմութեան նայելով՝ պարզ կամ արմատ և բարդ կը կոչուին։

Պարզ կամ արմատ են առհասարակ այն բառերն՝ որք չեն միացած ոևէ բառի մը կամ մասնկի մը հետ, ինչպէս. հաց, ջուր, հող, օդ, լոյս. իսկ բարդ են այն բառերն՝ որոց վրայ աւելցած է ուրիշ բառ մը՝ մէկ բանի միայն նշանակութիւն տալու համար, ինչպէս. հացարար, մահաբեր, եղբայրասպան, կարճամիտ և այլն։

2. Անուանց բարդութեան մէջ կը գործածուին չորս տեսակ բառեր. անուն, դերանուն, նախդիր, և մակբայ։

3. Բառերու բարդութեան ատեն՝ սովորաբար իբրեւ յօդ կամ յօդակապ կը գործածուին՝ և երբեմն է կամ է գրերն։

4. Բարդութեան ընդհանուր կանոն է՝ ով կապել երկու բառերն, եթէ առաջինն բաղաձայնով կը վերջանայ և երկրորդը բաղաձայնով կ'սկսի. իսկ պէտք է գիտնալ որ՝ առաջին բառն իւր հոլովական փոփոխութեան օրէնքն ընդհանրապէս կը պահէ բարդութեան մէջ, իսկ երկրորդն գրեթէ միշտ անփոփոխ կերպով ուղղական կը մնայ. ըստ այսմ, բան՝ գէտ բառերն եթէ բարդուին կըլլան բան-գէտ, մարդ՝ սէր, մարդ-սէր, սով՝ մահ, սով-մահ. իսկ հոլովական փոփոխում կրող բառերն կը բարդուին այսպէս. ատեան՝ դրպիր, ատեն-դպիր. դեւ՝ հար, դիւ-հար. գիր՝ գէտ, գրագէտ. պատիւ՝ սէր, պատու-սէր, պտուղ՝ բեր, պտղ-բեր։

5. Երբեմն բարդութիւն կ'ըլլայ առանց բառի փոփոխութեան, և կամ առանց մէջտեղը յօդակապ դնելու, զոր օրինակ. վրէժխնդիր, ձեռնտու, ժուժկալ, կաթնկեր։

6. Մի և նոյն բառն ինքն ինքեամբ կը բարդուի առանց յօդակապի. զոր օրինակ, Պէսպէս, բեկբեկ, ծործոր, վաղ-վաղ, և այս տեսակ բարդութեան մէջ երբեմն գլխին մէկը զանց կ'առնուի, ինչպէս, փոփոխ (իբր փոխ-փոխ), դադար (իբր դադդար), հեղեղ (իբր հեղ-հեղ), կամ կը փոխուի, ինչպէս. բաբբառ, (իբր բառբառ), յարմար (իբր՝ յարյար), լուռմուռ (իբր՝ լուռլուռ)։

7. Ինքն ինքեամբ բարդուող բառեր ալ կան որ յօդակապը կ'առնուն, զոր օրինակ. չար-չար, մեծ-մեծ, դունդ-դունդ. այսպիսի՛ք ալ ինչպէս վերը տեսանք (6)՝ երբեմն երեանց երկրորդ բառին մէջ գիր կը փոխեն, կամ նոյն բառին սկիզբը տի կը փոխուի, և կամ եթէ ձայնաւոր տառ է՝ ՛(1) գիրը կ'աւելնայ, ինչպէս, շեղտատեղտ (շլլխտի), աղխատաղխ (հակ հակ, դէնդ դէնդ), աղջատ-ղջ (մթութիւն), խաժատ-ժ (հասարակ մարդոց բազմութիւն) բարձրաբերձ, ժանտաժուտ։

8. Եթէ -ով կապուած բարդ բառերուն վրայ ուրիշ մասնիկ ալ աւելցուի, սովորաբար -ը կը զեղչուի կարճութեան և քաղցրութեան համար, ըստ այսմ Աստուած-պաշտ բառն ածանցականի փոխելու ատեն պէտք է ըսել՝ Աստուածպաշտութիւն, մեծ-վայելուչ՝ մեծվայելչութիւն, երկայն-միտ՝ երկայնմտութիւն։

9. Բարդութեան ատեն բառից յօդակապ ընդունելու մասնաւոր օրէնքներն են.

Ա. Երբ առաջին բառն ձայնաւորով վերջանայ՝ թէ իւր բնիկ գիրն ըլլայ այն և թէ հոլովական փոփոխմամբ ընդու-

(1) Թէ ՛ գիրը բառին նշանակութիւնն նոյն կը պահէ, ասնտի յայտ է որ՝ ուրիշ առանձինն նոյնանիշ բառերու մէջ ալ կայ, ինչպէս. հաշել, մաշել. հալել, մալել. լեռկ, մեռկ. ցեց, մեց, եւայլն։

նած, - յոգն կ'առնու, զոր օրինակ Է-կից, դի-զարդ, անո-ատի-պաշտ, աղնու-գութ։

Բ. Երբ առաջին բառն բաղմավանկ ըլլալով է վերջաւորի, այն է՝ն կը փոխուի ե ի կամ է ի, երբեմն և - ի, կամ թէ կը զեղչուի ու - կ'առնու, և այնպէս կը յօդուին բառերն, զոր օրինակ. բարեկամ, գերեզարձ, հոգեկիր կամ հոգէկիր, գի-նեհար կամ գինեհար, թերեհաւատ կամ թեր-հաւատ, ծի-բանեզգեաց կամ ծիրան-զգեաց, հեռ-բնակ։

Գ. Եթէ նախադաս բառն ձայնաւորով վերջանայ և երկ-րորդն ձայնաւորով սկսի, երբեմն երկուքն ալ կը պահուին և երբեմն անոնցմէ մին կը զեղչուի, իսկ քանի մը բաղմա-վանկներու մէջ է՝ն կրնայ երբեմն փոխուիլ ե ի կամ է ի. զոր օրինակ. մարգարէաւանդ, ձիարշաւ, միեղջերու, ապաշ-խար, հոգեռանդն, գինըմպու, հոգէընկալ կամ հոգիընկալ, բարիասաց կամ բարեասաց։ Եթէ է, - իրարու հանդիպին տեղ տեղ ե ի կը փոխուին, ինչպէս. բարի՝ արար, բարերար. գինի՝ արբու, գինեբրու։

Դ. Եթէ առաջին բառն բաղաձայնով վերջանայ և երկ-րորդն ձայնաւորով սկսի, առանց յօդակապի իրարու կրնան կցուիլ, ինչպէս. բանտարգել, մարդատեաց, երկարմատ-եան (երկու արմատ՝ այսինքն բարդ և չարի սկիզբներ դա-ւանող), ծովեղր, կենցաղօգուտ։

Ե. - յօդակապին տեղ քիչ անգամ կը գործածուին է, է, է, -. ինչպէս, հնգետասան, օթեվան, յորդեգնաց, որովայ-նեմոլ, քրէէքուր (վատթար, աղտեղի), ընդ-ծին։

10. Մինչեւ ցայսր բարդութիւններն ուղղական հոլովով եղած տեսանք, բայց պէտք է գիտնալ որ նոյն օրինաք ու-րիշ հոլովներէ ալ կրնան կազմուիլ, յորս սեռականն ու հայ-ցականն գործածական եղած են. — (Աւելորդ է յիշեցնել թէ սոյն կանոնն նախադաս բառերու համար է անշուշտ, վասն զի յետադաս բառերն անփոփոխ կը մնան միշտ, ինչ-պէս արդէն կարդացինք (4)։

Ո-ղ. հայրանենդ, յէ-նավայլ, մոդանիշ,
Սէ-. հօրաքոյր, կանանցաբարոյ, անուանակիր,
պանիրէց, ըրէ-ցապատ, Լայլն։
Հայց. բանարկու, կենսատու, (կեանքը փոխուելով հոգլովման օրինաք), ՝ օրէնադիր։

11. Բաւական համարելով պարզ անուններէ կազմուած բարդութիւններն, քանի մը օրինակներով տեսնենք հիմա բարդումներ՝ Դերբանոններէ, Նախդէրներէ և Մակբաններէ, որոց մէջ պիտի խմանանք նաեւ բայերու արմատներն, դերբայներն իբրեւ անուն, և բայածականներն։

ԲԱՑԵՐՈՒ ԱՐՄԱՏՆԵՐԷ. դիւրիմաց, աշխարհակեցոյց, հայրապետաց, հրայրեաց, զէնքնկեց, հեշտընկալ։

ԴԵՐԲԱՑՆԵՐԷ ԵՒ ԲԱՑԱԾԱԿԱՆՆԵՐԷ. շէջեալփառ, դիժուարաբուժելի, ընդրեալակիր, ամէնօրհնեալ։

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԷ. ինքնաբոյս, նոյապէս, փոյնաշունչ, երաստեղծ։

ՆԱԽԴԻՐՆԵՐԷ. յայգ (մինչեւ առաւօտ տեւող ժամանակը՝ այսինքն գիշեր), յերեկ (մինչեւ երեկոյ տեւող ժամանակը՝ այսինքն տիւ) ընդասուն, ուրբերեմ, ընդարձակ։

ՄԱԿԲԱՑՆԵՐԷ. ուէ, հանապազասուտ, դեռաբոյս։

12. Բարդման մէջ եթէ երկրորդ բառն բայարմատ է, իւր բային համեմատ՝ ներգործականի, կրաւորականի և չեզոքի միտք, ու անցեալ դերբայի և ու բայածականի զօրութիւն կունենայ, և նախադաս անունն սեռի և բնութեան խնդրոյ նշանակութիւնն կուտայ, նաև մակբայ՝ եթէ ածական բառ լինի. ինչպէս. Տիրածին՝ զՏէրն ծնանող, Կուսածին՝ 'ի կուսէ ծնեալ. մահաշունչ՝ զմահ շնչող, աղէբախ՝ զաղիս բախող (քնարին թելերը զարնող), ձողաբարձ՝ ձողով կամ 'ի ձող բարձրացեալ, խանձարրապատ՝ խանձարրօք կամ 'ի խանձարրուս պատեալ։ — Բարեշէն՝ բարւոք շինեալ. մեծապայծառ՝ մեծապէս պայծառ, դժուարալոյծ՝ դժուարաւ լուծելի։

13. Նախադաս գոյական անունն շատ անգամ իբրեւ յատ-կացուցիչ կ'առնուի երկրորդին, զոր օրինակ. Աստուածորդի (որդի Աստուծոյ), խոզերամ (երամ խոզից), որոտաձայն (ձայն որոտման), գարեհատ (հատ գարւոյ)։

14. Գոյական ընդ ածականի, ածական ընդ ածականի և ածական ընդ գոյականի բարդեալ բառերն գրեթէ առհասարակ ածական կ'ըլլան, միայն երբեմն ածականէ և գոյականէ բարդուած բառեր գոյական նշանակութիւն կ'ունենան. եթէ ածականը իբրեւ մակդիր կը համարուի գոյականին, ինչպէս Աւագորեար, որ է Աւագ որեար (մարդիկ), դառնակսկիծք՝ որ է դառն կսկիծք։

15. Գոյական ընդ գոյականի բարդուած ատեն՝ եթէ երկրորդը բայի կամ դերբայի միտք ունենայ՝ բառն ածական կ'ըլլայ, ինչպէս. արծաթասէր, մատենագիր, մնակեր։

16. Անեզական անուններն իրենց ուղղականէն բարդուած ատեն եզակի կը դրուին թէ՛ առաջ և թէ՛ ետքը. զոր օրինակ փառասէր, հրաշագործ, մեղապարտ, յօժարակամ, կորովամիտ, հրահոսան։

17. Երբ փոխանակ երկու բառէ ըլլալու՝ երեք կամ չորս բառերով ըլլայ բարդութիւնն՝ այն ատեն կը կոչուի Ցո�րդ. ինչպէս, Միաբանասէր, աստուածընդդէմ(¹), ամանորաբեր։ Պէտք է սակայն զգուշանալ երկայնաձիգ և անախորժ յարաբարդութենէ։

(¹) Աստուած բառն բարդութեան մէջ միշտ նախադաս կը դրուի, նոյն իսկ ընդդէմ բառէն՝ որ ուրիշ ամէն բառի նախադաս է. իսկ սուտանուն աստուած բառն կը յետադասի։

Բ.

ԱԾԱՆՑՄՈՒՆՔ ԲԱՌԻՑ

18. Ածանցական կամ յօդուածոյ են այն բառերն՝ որ թէ պարզ լինին և թէ բարդ, իրենց սկիզբն կամ վերջը և կամ երկու ծայրերուն վրայ միանգամայն մասնիկ մը կ'ունենան։ Այդ մասնիկն՝ թէպէտեւ ինքնին առանձինն նշանակութիւն մը չտար, բայց բառերու ծայրն դրուելով՝ անոնց նշանակութիւնն կամ իմաստը կը փոխէ, զոր օրինակ, գեղ, ՊԳեղ, գեղէցիկ. մեղ, ՆՄեղ, մեղա՜ՐՏ, կար, ՊԿար, տկար՜ՐՏԻՆ։

18. Անուանց սկիզբն առանց յօդակապի կցուող սովորական մասնիկներն են, Ն, Պ, Ը, որ կը կոչուին ժխտական մասնիկներ, որովհետեւ բառին նշանակութիւնն 'ի հակառակն կը փոխեն. ասոնցմէ Ն և Պ երբ գոյականի առջեւ դրուին՝ ածականի կը փոխեն զայն. երկուքն ալ գրեթէ մի և նոյն նշանակութեամբ կը գործածուին, սա տարբերութեամբ միայն որ Պ մասնիկն միշտ բաղաձայնով սկսեալ բառերու կը յարի. իսկ Ը մասնիկը բառին գոյութիւնը ժխտելով կամ անոր հակառակ իմաստը տալով, եթէ գոյականի կամ ածականի վրայ դրուի, գոյականն՝ գոյական ու ածականն՝ ածական կը մնայ. օրինակներ, խոհեմ, ՆԽոհեմ, արի, ՆԱրի, ամօթ, ՆԱմօթ, շնորհ, ՆՇնորհ, ձեւ, ՊՁեւ, հաս, ՊՀաս, գէտ, ՊԳէտ, մոյն (բնական վայելչութիւն), ՊՄոյն. — Աստուած, ՉԱստուած, հաւատալի, ՉՀաւատալի, աջողութիւն, ՉԱջողութիւն։

20. Այս ժխտական մասնիկներէն կը համարուին նաեւ Պ և ԴԺ, որ նոյնպէս անուանց սկիզբը կը կցուին, զոր օրինակ. ՊԵրեսխտ, ՊՈՒշ, ԴԺԳՈՀ կամ ՊԺԳՈՀ, ԴԺԳՈՅՆ կամ ՊԺԳՈՅՆ։

21. Բայարմատ եղող ածանցեալ մը՝ ինչպէս տեսանք Բարդութեանց մէջ (12) իւր բային համեմատ ներգործականի, կրաւորականի և չեզոքի միտք ու անցեալ դերբայի, և ՈՂ, ԼԻ բայածականներու զօրութիւն կ'ունենայ. զոր օրինակ, ՆՆ-

փորձ՝ չփորձեալ կամ չփորձող, ՝ՆԼՍՐ՝ չլսող, չը լուեալ, անձին, ոչ ծնող, ոչ ծնեալ։

22. Վերոյիշեալ հինգ ժխտական մասնիկներէ զատ կան նաեւ բառերու սկիզբն դրուող քանի մը մասնիկներ՝ այլ և այլ նշանակութեամբ։

Բ՝ որ երբեմն ժխտական նշանակութիւն կուտայ, ինչպէս ողջախոհ, բողջախոհ, (բղջախոհ), ողբ, բողբ։

Զ՝ որ նշանակութեան սասակութիւն մը կուտայ, զոր օրինակ, արտուղի, զարտուղի. աչացու, զաչացու. գնամ, զգնամ. յարդարեմ, զարդարեմ. հարկանեմ, զարկանեմ։

Հ և Ն որ ուրեք ուրեք առաւելութիւն և կամ ունակութիւն կը նշանակեն, այր, հայր. զոր, հզոր. լու, հլու. — հայիմ, նայիմ. հիւթ, նիւթ. հալարտ, նպերտ. շողեմ, նշողեմ, անիր, նանիր։

23. Բազմութիւն են այն ածանցներն կամ ածանցական մասնիկներն՝ որ անուանց վերջը դրուելով անոնց նշանակութիւնը կը փոխեն, և ածանցեալ բառեր կընեն զանոնք։ Ցաճախ գոյականէ գոյական կը շինեն և ածականէ ածական, շատ անգամ ալ գոյականէ ածական, և ածականէ գոյական, օրինակի համար, ական, այէն, ՝ՈՐ, եղէն, ոյն, ՝ՈՐԱՆ, ածանցներն մարդն բառին յարելով կը շինեն, մարմնական, մարմնայէն, մարմնՈՐ, մարմնեղէն, մարմնոյն+, մարմնորան։

24. Ինչպէս Բարդութեանց մէջ կարդացինք (10) ածանցմունքներն ալ հետեւեալ հոլովներով կընան շինուիլ.

Ո-ՂԸ. տայրենի, ՝ՐԷՈՒԹԻՒՆ, յԴԵՐՆային։

ՍԷՐ. +Է-ական, ՈՐՈՆաւոր, ՓԵՂՈՒԿ, ԲՈՂՄՆական։

ՏՐ. ԷՆՅԷՆ, +Է-ՂԷՆ, ԴՂԷՆ, ՅԵՂԷՆ։

ԳՈՐԾ. ՈՐՈՏԲի, կՈՆՈՏԲի, Է-ՐՈՎի, ՓԼԽՈՎԷՆ։

ՀԱՅՑ. կԷՆՈական, ԴՂԱՅին։

25. Ածանցական մասնիկ կը համարուին ՈՏ, ՆՈՏ, ԷՏ, ՆԷՏ, ԷՏ, ՂԷՏ, ՆՂԷՏ, ՈՐՏ, ՆՈՐՏ բայից վերջերն, որք նոյն օրինօք անուանց կը յարին բայերու կազմութեան համար, միայն ա-

սոնց վերջի երեքն չէ՞, նչէ՞, նո՞ առանց յօդի կը կցուին սովորաբար։

26. Կան շատ բառեր ալ՝ որ կրկին և կրկին ածանցուած են և կըսուին Կրկնածանց, ինչպէս, Զանձիր, ձանձրոյթ, ձանձրոտիւն. վրէպ, վրիպակ, վրիպակոտիւն. մահ, մահական, մահկանացու։

27. Հայերէն լեզուի ածանցական մասնիկներու դիւաւորներն են.

Ա. ական և այն որ վերաբերութիւն կը ցուցնեն, ինչպէս, քաղաքական, հռոմէական, քրիստոնէական, լեռնայն ծովայն, երկնայն.

Բ. արան, անոց, ոց, որ տեղ կամ ընդոունարան կը նշանակեն. ինչպէս, վարժարան, ալրքայարան, որբանոց, ծաղկոց։

Գ. ատոր կամ ուոր՝ որ ունեցող կամ վրան կրող կը նշանակէ, ինչպէս թագաւոր, սգաւոր, զինուոր կամ զինաւոր։

Դ. Եղն, որ բանի մը ինչ նէ-նիւ ըլլալն կը յայտնէ, զոր օրինակ, փայտեղն, լուսեղն, հողեղն։

Ե. Եայ որ բանի մը ինչէ շնուած կամ բանուած ըլլալն կը ցուցնէ, ինչպէս, ծաղկեայ, մարգարտեայ։ Երբեմն կը ցուցնէ նաեւ բանի մը որչափ ժամանակուան ըլլալն, ինչպէս, չորեքօրեայ, հինգօրեայ, և երբեմն ալ ունեցող նշանակութիւնն կուտայ. զոր օրինակ, սրտեայ, բաղմաչեայ։

Զ. Եան՝ որ կը նշանակէ ներուած կամ ծագած, ինչպէս Աստանաղեան, Իսրայելեան։ Նաեւ ունեցող նշանակութիւնն կուտայ. վեցթեւեան, գունեան։

Է. Եղ՝ որ կը ցուցնէ տանուտիւն. ինչպէս, հանճարեղ, ընչեղ, համեղ։

Ը. Ենէ՝ որ ընդհանրապէս եթէ պատուղ ցուցնող բառին վերջն դրուի՝ անոր ծառն կը նշանակէ, իսկ եթէ կենդանեաց անուններու վրայ դրուի՝ անոնց տղին կամ դեռը կը նշանակէ, ինչպէս, խնձոր, խնձորենի, թուզ, թզենի. — առիւծ, առիւծենի (առիւծի մորթ) ուլ, ուլենի (ուլի մորթ), խոզ, խոզե-

ՆԷ (խողի միս)։ Ծառերու անուններն երբեմն է ով ալ կ'ա-ծանցուին, ինչպէս. սերկեւիլ, սերկեւիլէ. կաղին, կաղնէ։ Պէտք է գիտնալ նաեւ թէ՝ ԵՆԷ, ՈՆԷ, Է, մասնիկներն ուրիշ բառերու վերջն ալ կցուելով՝ անոնց այլ եւ այլ նշանակութիւններ կուտան. ինչպէս երկաթէ, արծաթէ, ասղոնէ, մատոնէ, հայրենէ, մայրենէ, այրէ, կորովէ։

Թ. Իկ կամ ՈՒ՝ որ ՆՈՒԱՂՈՒԹԻՒՆ, ՓՈՓՐՈՒԹԻՒՆ եւ կամ ՓՈՓԿՈՒԹԻՒՆ կը ցուցնեն. զոր օրինակ պարարիզէկ, լսցէկ, հայրէկ, դատրէկ, նաւակ, գետակ, որդեակ։

Ժ. ՈՒ որ ՅՈՃԽՈՒԹԻՒՆ կամ ՈՒԱՊՈՒԹԻՒՆ կը նշանակէ, ինչպէս. տղմուտ, քարուտ, աւազուտ։

ԺԱ. Ո որ ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ կամ ՆԻՒ կը ցուցնէ, զոր օրինակ. քոսոտ, բորոտ, նախանձոտ, երկչոտ։

ԺԲ. ՈՐԴ՝ որ ՈՐՀՆՈՒ կամ ՓՈՐԾ կը ցուցնէ, ինչպէս որսորդ, այգեորդ, սայլորդ։

ԺԳ. ՑԷ՝ որ կը ցուցնէ թէ մէկը ՈՐ ԵՐԿՐԻՆ ԿՈՒ ՀԱՅՐԵՆԷՏԻՆ Է. ինչպէս. Պոլսեցի, Եւրոպացի։

ԺԴ. ՑՈՒ՝ որ ՊԱՇՏՕՆԷ կամ ՎԷՃԱԿԷ մը յատկացեալ անձ կը ցուցնէ. զոր օրինակ, քահանայացու, հարսնացու։

ԺԵ. ՈՒՆ որ ՈՂ մասնական զօրութիւնն ունի, ինչպէս. շարժուն, թռչուն, սողուն։

ԺԶ. ԱՒԷՍ՝ որ ՈՒՍԱՊՈՒԹԻՒՆ կը նշանակէ. զոր օրինակ. ծաղկաւէս, խոտաւէս, օղաւէս։

ԺԷ. ԱՍ՝ որ մարմնոյ մէկ մասին կամ անդամին կորած ըլլալն կը ցուցնէ. ինչպէս լեզուաս, ականջաս (¹)։

28. Կան տակաւին այլ եւ այլ մասնիկներ՝ ինչպէս ՅՆ, ԷՆ, ՈՇ, ՓԷՆ, ՅՍ, ՈՒԱԾ կամ ԱԾ, ՈՒՐԴ, ԱՅՆ, որոց կարեւորութիւնն եւ նշանակութիւնն ընթերցմամբ կրնայ ուսանողն 'ի միտ առնուլ։

(¹) Ոմանք այս վերջի ՈՒԷՍ, ՈՍ, եւ ՈՒՆ մասնիկներն ՅՈՒԷՍ, ՀԱՍ եւ ՈՒՆԷԼ բառերու կրճատում համարելով իբրեւ մասնիկ չեն ընդունիր, եւ հետեւաբար ատոնցմէ կազմուած բառերն ոչ թէ ԱԾԱԿԱՆ այլ իբրեւ ԲԱՐԴ կը ճանչնան։

ԳԵՂԱՐՈՒՆԻՔԻ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԿԱՐԵՒՈՐ

Եր-ե-	Տ-ղ	Սխ-ալ	Ո-ղէղ
5	9	խաբանէ	խափանէ
6	8, 11	առջառս	արջարս
8	5	ֆ-ղղղ	ֆ-խղղ
13	25	այնոքիք	այնոքիկ
44	27	եղեզ	եդէզ
56	4	զօրաւարն	զօրաւորն
61	18	իցիմ	իցեմ
75	3, 8, 14	եղն	եղն
79	28	կառկառէին	կարկառէին
80	8	ի հիւղն այն	ի հիւղն յայն
81	5	քեւ	քեզ
86	23	խնդրեց	խնդրեաց
111	17	միոք	միով

Ін. 50

Бук. книги № 985
Ц. 1 р. 50

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0012357

ЦЕНА
№ 13838